


## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՄԿՐՏԻՉ ԹԷՌՈՓԻԼԵԱՆ

DOCTEUR EN DROIT

Avocat à la Cour d'Appel Mixte d'Alexandrie

# ՀԱՅՈՒՏԻՃՆԵՐ

## ՊԱՐՈՒՆԱԿԱԽԹԻՒՆ

էջ

Խմբանկար Հայուսիններու . . . . .	3
Զօն . . . . .	5
Յառաջարանի տեղ . . . . .	7
Մուսք . . . . .	15
Գ. Ա. Հայուսիններէ առ հասարակ . . . . .	23
> Բ. Հայուսինները գործի վրայ . . . . .	31
> Գ. Հայուսին Սուազնորդը . . . . .	41
> Դ. Կամարականի . . . . .	51
> Ե. Հայուսին Ազատորդին . . . . .	63
> Զ. Հայուսին Խըլանիր . . . . .	71
> Է. Ծգիպտահայ Իհանինէ . . . . .	91
> Ը. Հայուսին Մտաւորականը . . . . .	111
> Թ. Հայուսին Ազգաուշը . . . . .	123
> Ժ. Հայուսիններու հնուրիւնը . . . . .	133
Եղբակացութիւն . . . . .	149







# ՄԿՐՏԻՉ ԹԷՌՓԻԼԵԱՆ

# DOCTEUR EN DROIT

# Avocat à la Cour d'Appel Mixte d'Alexandrie

329.14 (47.925)

P-46

# ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ կ'ըսեմ եւ նՇՄԱՐԻՑԸ  
ցոյց կուտամ : Վա՛յ խօսիերս հերքող բրւ-  
ռւառականին՝ որ չէ ուզած սրտի մժով  
հասու ըլլալ անոնց , հետեւաբար՝ ար-  
ժանի նոպան ի փողս եղեալ խըդ-  
դումի :



1921

ԱՆԵՔՍԱՆԴՐԻԱ

NERSES GHAZIKIAN  
Alexandrie  
Egypte

UASER FELDFPAP

ZOCLENE ER DREIT

PLACEY A. C. G. A. M. M. A. A. A. A. A.

ADJ. A. A.



## ՀԱՅՈՒՏԻՃՆԵՐԸ ԳՈՐԾԻ ՎՐԱՅ

ՀԱՅՈՒՏԻՃՆԸ ԻՇԽԱՆԸ. — «Այդ ժառանգութիւնը  
մեր Բարեգործականին կը պատկանի։»

ՀԱՅՈՒՏԻՃՆԸ ԱԶՆՈՒԱԿԱՆԸ. — «Երկու սիրեկը մեզի,  
երկու սիրեկը քեզի։»

ՀԱՅՈՒՏԻՃՆԸ Ա.Ի.ԱԶՆՈՐԴՅԸ. — «Աղքատ կնիկը ա-  
նանկ զիսա՞րկ կը դնէ։»



## Զ Օ Տ

Այրի Տիկին Ա. Աղաղանեանի

Քեզի՛ կը ձօնեմ զրքոյկո, խեղճ կին : Ճիշդ այն  
ժամանակամիջոցին՝ երբ — վերջին անգամն ըլլալով,  
յուսա՞նք — քու բիւրաւոր քոյրերդ, եղբայրներդ և  
զաւակներդ մեր արտաքին վայրենի և մոլեռանդ թշնա-  
միներէն ճիւաղային, անլուր և աներեւակայելի դրկանք-  
ներով, տառապանքներով և տանջանքներով խոչոշեցան,  
քու ամենազօրաւոր եղբայրներդ, բնակ պաշտպաններդ,  
որոնց անուններուն կցուած են, մեծ դժբախտութեանդ  
համար, հայ իշխանի, հայ աղատորեարի և հայ եպիսկո-  
պոսի յորջորջումներ, անզթօրէն, անխղճաբար և անա-  
մօթօրէն քեզ տեռազերծելու փորձեր ըրին, ըստ իրենց՝  
յանուն Ազգային բարեգործութեան :

Եօթը երկար տարիներ անընդհատ կրցար մաքառիլ  
Եպիպտոսի անվկանդ չարագործ ազգակիցներուդ դէմ՝  
շնորհիւ միայն ճպուային սնունդիդ զոր ստացար Արար,  
Յոյն, Հրեայ և Իտալացի անծանօթ ձեռքերէ քեղի նետ-  
ուած փշրանքներէն, առանց կարեկցական խօսք մը ան-  
զամ լսելու խիստ երկարատև դժբաղդութեանդ հանդի-  
սատես ազգակիցներէդ :

Գիտե՛մ, անտանելի թշուառութեանդ մէջ, երբ ան-  
թիւ ու անհամար հէք քոյրերուդ, եղբայրներուդ և զա-  
ւակներուդ լկումի և խողղողման ձայնը ականջիդ կը  
հասնէր կցկտուր կերպով, շատ անգամներ լացիր անոնց  
վրայ, թէև անոնք քեզմէ աւելի երջանիկ ըլլային, որով-

հետեւ՝ նոյնիսկ քու դահիճներուդ աչքին արդար ու անմեղ մարտիրոսներ էին անոնք, — միթէ — իսկ դռնոսուկ հետեւակ թշուառական մը՝ որ յանդզնած էիր արհամարել վատողի կեղեքիչներուդ ազբախումբ զօրութիւնը, և անոնց երեսին շպրտելով իրենց դործած անարգ խարդախութիւններէն մին՝ խափանել իրենց առապուրին մարսումը :

Զգացի՞ր արդեօք որ Պօղոս փաշա Նուպարի սէզու շողոմ մանչերուն — Եղիշտոսի Հայոց Առաջնորդ Թորգոմ Եպ. Գուշակեան և իր սելեխ փուշտիպանները — անսուալի երեսից արձակած պուչառւքները . «Բանի որ դռն այս ժառանգութիւնը կը պահանջես, մենք ալ ո և է նպաստ չի պիտի տանք քեղի որպէս զի անօթութենէ սատկիս, » որոնցմով նոյն իսկ Աղեքսանդրիոյ Հայոց եկեղեցին բակէն կը փախցնէին քեղ կատղած շուներու յատուկ սոսկումով, բիրտ թուրքերու, քրդերու և թաթարներու ճեաբաղանի հարուածներէն աւելի սոսկալի հարուածներ էին զոր կ'ընդունէիր, քանի որ առանց քուեղբայրներուդ, բնակ պաշտպաններուդ քեղի հանդէպ զործած չարազործութեանց թուրքեր, քրդեր կամ թաթարներ երբեք չի պիտի իշխէին մեր վրայ ձեռք վերցնել :

**Աղեքսանդրիա, 20 Սեպտ. 1920**

## ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

ԽՕՍՔ ԱՌ Ն. Վ. ՊՈՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒԹԱՐ

Եսկ Բալուի կամուրջին վրայ հազարաւորներու վրայ կատարուած աներեւակայելի բարբարոթիւնները անով կարելի է բացատրել որ, անկարող դիմանալու չարչարանքներուն՝ հարիւրաւորներ գետը նետած են իրենք զիրենք, որոնցմէ մէկ բանիներու անունները միայն ունիմ. Կարապէս Խօսմաբլեան, Ներսէս Խօսմաբլեան. սա զաւակները եւ կինը իր ձեռնովք ջուրը նետած է եւ յետոյ ինքինքը :

Նամակ Քղիեն

Հայրենիք, 18րդ Տարի, թիւ 1438

Փաշա՝,

Այս անզամ պիտի գուղեմ քեզ առանց նախապէս արտօնութիւնդ խնդրելու :

Չեմ զիտեր թէ պիտի վշտանա՞ս, թէ պիտի հըրծուիս քեզի հանդէս ցոյց տուած հրապարակային այս յանդուգն մտերմութեանս համար, բայց, ամէն պարագայի մէջ, պէտք է որ կարգ մը օրինակներով ցոյց տամ քեզի թէ՝ մեր նախնիքը միշտ եզակի խօսած են ու գրած և երբեք յոգնակի՝ որ մեր մէջ մուտ զտած է արեւմուտքէն խել մը զանազան տգեղութիւններու հետ :

«Իսկ վասակ տուեալ պատասխանի ասէ. Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ ոչ առէր զչափ մեծութեան իմոյ, զի ցայժմ ես քեզ առիւծ էի և արդ աղուէս. Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի, մի ոտնս

իմ ի միոյ լերին կայր, և միւս ոտնս իմ ի միոյ լերին կայր . յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի, յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի : Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ և ասէ . Աղէ՝ տուր ինձ զիտել, ո՞վ են լերինքն այնոքիկ զորս դուն ընդ ունջ տանէիր : Եւ ասէ Վասակ . լերինքն երկուք, մի դու էիր, և մի թագաւորն յունաց : » (\*)

Ինչպէս կը զտնես այս համեմատութիւնը . Հայ զերի Սպարապետին Պարսից Շահին հետ եղակի խօսիլը ժիթէ իրաւունք չի տար ինձի նոյն կերպով խօսելու հետդ :

Ահա՛, թէ ի՞նչպէս մեր արքաները կուղղէին իրենց խօսքը օտար և թշնամի զօրեղ արքաներու .

«Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջէր ճեմելով, ի չքմեղս առեալ զնա ածէր ի հայակողմն ի հողն հարեալ յատակն . Իսկ իբրև յայն տեղի հասանէր, և զհայ զհողն կոխէր, մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ՝ այլ ձայն փողէր . սկսանէր խօսել և ասել . ի բաց կաց յինէն ծառայ չարազործ տիրացեալ տիրանցն քոց . այլ ոչ թողից զքեղ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմահն Արտեւանայ արքային . Զի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է . բայց ոչ թողեց, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ : » (\*)

Կ'ուզե՞ս որ յիշեցնեմ քեղի թէ մեր իշխանները ինչպէս կը խօսէին մեր թագաւորներուն հետ, ահա՛ .

(\*) Բուզանդարան Պատմութիւնն , Դպրութիւնն Ֆ. Գլ. Ծ. :

«Յետ այսորիկ, պատգամ յղէր սպարապետն Հայոց Մանուկը առ թագաւորն վարազդատ, և ասէր՝ թէ փոխանակ ամենայն աղջին մերոյ վաստակոցն, զոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեղ Արշակունիս վաստակեալ եմք, և եղեալ զանձինս մեր ի վերայ ձեր, կեցեալ և մեռեալ եմք ի վերայ ձեր, ամենայն նախնիքն մեր առաջինքն-անկան ի պատերազմունս ի վերայ ձեր, Վասակ հայր Մուշեղի կորեաւ ի վերայ Արշակայ արքայի, և մեք հանապազ վաստակեալ և աշխատեալ եմք ի վերայ թագաւորութեան աղջիդ ձեռոյ, և փոխանակ կեանս առնելոյ ընդ վաստակոցն, արդ որք ի թշնամեացն մեռան, որք մնացին՝ զայն դուք Արշակունիքը կոտորեցիք։ Արդ Մուշեղ այր քաջ եղբայր իմ, որ ի վերայ ձեր մաշեաց զանձն իւր ի մանկութենէ իւրմէ, վանեաց կոտորեաց զթշնամիս ձեր, և ոչ կարացին թշնամիքն սպանանել, դու կալար ի բազմականի խեղդեցեր զնա։ Նա դու չես իսկ Արշակունի, այլ ի պոռնըկութենէ եղեալ ես որդի. վասն այդորիկ ոչ ծանեար դվաստակաւորսն Արշակունեաց։» (\*)

Քիչ յետոյ պիտի տեսնես թէ որպիսի՞ մէկն էր իր արքային այսպէս խօսող հայ իշխանը։

Փրկիչն ալ այն կերպով կը խօսէր մարդոց՝ երբ կը գոչէր։ «Վայ ձեղ դպրաց և փարիսեցոց կեղծաւորաց, զի ուտէք զտունս այրեաց և պատճառանօք երկարէք զաղօթս, վասն որոյ աւելի դատաստան ընդունեցիք։» (\*\*)

Հորդահաճ փուշտիպանններուդ հետ երբ խեղճ Ալթունեան այրիներուն տունը կլլել ուզեցիր, ինչպէս

(\*) Բուզանդարան Պատմութիւնն, Դպր. Ե. Գլ. Լէ։

(\*\*) Աւետարան ըստ Մատթեոսի, Գլ. իգ։

չանդրադարձար նախահայրերուդ ուղղուած այս անմահ խօսքերուն վրայ, և ինչպէ՞ս չի սարսափեցար այդ առթիւ անոնցմէ մէկուն ուղղուած ահաւոր սպառնալիքէն. «Օձ, իժի ծնունդ, ինչպէ՞ս պիտի պրծիս գեհենի դատաստանէն : » (\*)

Կը տեսնե՞ս, Փրկիչն ալ եզակի կը խօսէր, հետեւաբար՝ ինձմէ աւելի քաղաքալարութիւն սպասելը աններելի անմտութիւն պիտի համարուէր :

Ինձի պէս մէկն էր մեր նախնիքներէն այն, որ տզեղ էգործ կօթիին երեւակայութենէն չանցած դարեր առաջ, զիշեր ու ցերեկ սարսափած հայութիճներու գործած նախճիրներէն, և անկարող մաքրելու հայութիւնը անոնցմէ, ուրիշ բան չէր կրցած ընել՝ բայց եթէ խընդրել Աստուծմէ անդադար. «Չար մշակողին, չար սերմանց նորին, չորացո զպտուղն,» մոռնալով աւելցնել «և զտակն», կարծես քեզիպէսներէն շուտ չզրկելու համար հայութիւնը :

Ի հարկէ Աստուծմէ աւելի մեծ ու սիրելի էակի մը յաւակնութիւնը չունիս անձիդ մասին :

Ահա՛ օրինակ մ'ալ, բայց պայմանաւ որ չխարուիս հոն յայտնուած զզացումներով տոգորուած կարծել անսման փուշտիպաններդ քու հանդէպ.

«Եւ ասէր ցնա Շապուհ թագաւորն Պարսից, խնդրեադու ինչ յինէն. զինչ և խնդրեսցես, տաց քեղ և ոչ արգելից. Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն. ինձ ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զբնակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց. Եւ առ

(\*) Աւետարան ըստ Մատքեսի, Գլ. իգ. :

(\*\*) Բայ արք, դատապահ առ մատուցում (\*\*\*)

մի օր, իբրև ես երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա ի կապանացն, և ես իշխեցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և ազուցանել նմա պատմուճան, և արկանել նմա բաղմականս, և դնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա զինի, և ուրախ առնել զնա արուեստականօքն մի օր ճիշդ։<sup>(\*)</sup>

Ճիշտ է որ... Ո՞չ, ո՞չ, սիրելի Զալօս, ներէ ինծի, սխալեցայ: Ներէ ինծի մանկութեան օրերուս քեզի հանդէպ ունեցած անառակ և չար ընթացքիս համար: Այժմ միայն կը ճանչնամ և կ'ընդունիմ քու յարգն ու մեծութիւնը, այժմ միայն կը զնահատեմ քու անխարդախ հաւատարմութիւնը՝ որով կը պաշտպանէիր մեր ոչխարներն ու այծերը զայլերու և աւաղակներու դէմ, ու զիշերները կը հսկէիր մեր տան՝ երբ յոզնած վաստակած խոր քնով կը քնանայինք մենք: Որչա՞փ բարի էիր, մասնաւորապէս ինծի հանդէպ որ՝ երբ ոտքերուդ կը զարնէի, կամ ականջներդ կ'ոլորէի անզթօրէն, փոխանակ սուր ատամներդ ցոյց տալու, հլու ձիու մը պէս թոյլ կուտայիր քեզ հեծնել և կը շրջէիր մեր տան ամէն կողմ զաւաղանիս հարուածներուն տակ անմոռնջ:

Որքա՞ն մաքուր էր սէրդ մեր խեղճ դրացիներուն հանդէպ: Երբեք չեմ մոռցած սոսկումները և զայրոյթը զոր կ'զզայիր, երբ հայուտիճները անխղճօրէն կը ծեծէին զանոնք և բռնի կը յափշտակէին անոնց կալասիներն ու այծերը: Դու որ բոլոր ձայնովդ կը հաջէիր զինուած քըրդերուն՝ երբ անոնք մեր տանը կը մօտենային և ամբողջ կորովովդ կը խոյանայիր անոնց վրայ, արհամարելով անոնց սուրն ու թուրը, զիտե՛մ, ի՞նչպէս տխուր

(\*) Բուզանդարան Պատմութիւնն, Դպր. Ե. Գլ. Է.:

վսկըսկումներովդ կը ձայնակցէիր խեղճ կիներու և մանուկներու ողբուկոծին՝ երբ հայուտիճներու սպառնալիքներուն տակ անոնց սիրելիները ղուրպէքի ցուպը ձեռք կ'առնէին, ու ցաւիդ անտանելիութեան չի դիմանալով, կը տե՛սնեմ, ի՞նչպէս կուշտդ զետինը կը դարնէիր. սիրուն գլուխդ ճիւերուդ մէջ առած, ծածկելու համար դառն տիսրութիւնդ զոր կ'արտայայտէին բարի աչքերդ . Բոլորովին վստահ եմ թէ դու կը տեսնէիր ո՛ւ այդպէսով տուներնիս կը քանդուէր, ինչ որ հայուտիճները չէին զգար իսկ....

... Պիտի ըսես թէ բորենիի մը հետ ալ մարդ եղակի կը խօսի: Բայց չէ՞ որ ստրկածին անհամար փուշտիպաններդ քեզ իշխանացուցին . ի՞նչպէս պիտի յանդգնէի մատրերել այդպիսի անիշխանավայել բալդատութիւն մը :

Արդ, փաշա՛, ներէ ինծի եթէ կամքէս բոլորովին անկախ արգելքներու պատճառով ուշացուցի 21 Հոկտ. 1914 թուակիր նամակով քեզի ըրած խոստումիս զործադրութիւնը :

Գիտե՛մ, ամբողջ էութեամբդ Փափազած պիտի ըլլայիր զրութեանս հրաարակումին. քուրդ Շէրիֆ փաշայի հետ ունեցած կաթուգին եղբայրակցութիւնդ հանդիսաւորապէս ցուցադրելէ առաջ: Բայց ի՞նչ կրնայի ընել երբ խիստ զրաքննութիւննը և միջոցներու պակասութիւնը կ'ստիպէին զիս յետաձգել խոստումիս յար լումը : Սակայն, վստահ եղիր որ տակաւին ուշ չէ, դժբախտաբար:

Առանց հետաքրքրուելու Հայուտիճներուն զրութեանս մասին ունենալիք կարծիքներով՝ քեզ կը վստահացնեմ որ այս ալ հայրենասիրութեանս ամբողջ զրաւաւականն է զոր կը մատուցանեմ մեր թշուառ ժողովրդին փրկութեան՝ որուն համար անընդհատ կը յոզնիս տասը երկար տարիներէ ի վեր, առանց զիտնալու թէ ինչո՞ւ:

Գիտնալով հանդերձ որ դարեր առաջ և դարերէ ի վեր ինձմէ անհամեմատ աւելի ձեռնհաս և մաքրազոյն մեր նուիրական նախնիքներուն բազմիցս հոչակած այնքան ճշմարիտ և ցնցիչ ազդարարութիւնները բնաւ ազդեցութիւն չեն ունեցած հայուտիճներու վրայ, ինչպէս սապոնի պլազակները խապչիկի մը երեսին, դարձեալ քեզու քուկիններդ վերը յիշուած Խօշմաթլեաններու ցաւալի բախտէն զիրծ պահելու հոգերով՝ ուզեցի պատրաստել գրքոյկա :

**Ճիշդ** է որ Արածանին չափաղանց հեռու է քեզմէ, բայց պէտք չէ մոռնաս որ աղմուտ Նեղոսի մը եղերքը կը գտնուի :

Չեմ ուզեր գիտնալ թէ ի՞նչ վիճակով հայրդ եզիպտոս եկած էր, կամ ի՞նչ միջոցներով տիրացած այն հսկայ հարստութեան զոր դուն ժառանգեցիր, բայց գիտցի՛ր որ անոնց հայրն աւ իրեւ ոլորմելի չերչի մը եկած էր մեր զիւղը, ապրած էր մեր զիւղացիներուն հացովն ու ջրովը, և իր մահուան՝ մեծ հարստութեան մը հետ՝ թողած էր իր որդւոց զազրելի կինայր Լոթիի զզուանքին իրաւամբ արժանի արհեստը, զոր այնքան ծալկեցուցին անոնք : Անկուշտ տզրուկներու պէս խեզձ հայ զիւղացիներու արիւնը ծծելով և անոնց օնախները մարելով տիրացած էին ընդարձակ հողերու, և զօրեղ վաշխառուներու իրենց համբաւը տարածուած էր Հայաստանի աշէն կողմ:

Ու յետո՞յ . . . :

Քե՛զ տեսնեմ, եթէ կարող ես, ըսէ թուրքերու և քրդերու սոսկալի հարուածներէն իրենց փրկութիւնը Արածանիի դարիւ և դարիւ հոսուն կոհակներու մէջ փընուած միջոցին ի՞նչ անցաւ անոնց աչքերուն առջեւէն և մտքերնէն . . .



Մ Ա Խ Տ Տ Ե Ւ

---

Ոչինչ այնքան տմարդի և անիրաւ չէր որքան անհիմն ու սուտապատում զրպարտութիւնները՝ զորս անխիղճ և անգութ անձեր, օգտուելով իրենց այս ու այն միջոցներով տիրացած ականաւոր մարդու համբաւին, խենէշաբար և շողմոզօրէն թափեցին ներքին թշնամիներէն հիւծուած և արտաքին թշնամիներու հարուածներուն տակ ընկճուած ամբողջ հայ ժողովրդի զլիին, յազեցնելու համար անձնական շուայտ զզացումներ, կամ ծառայելու համար անխոստովանելի նպատակներու, և այն ալ ճիշդ այն ատեն՝ երբ հայ ժողովուրդը ստիպովական օգնութեան պէտք ունէր ընդ միշտ չանհետանալու համար :

Իր կեանքին ամենադժբախտ և սեւագոյն օրերուն, երբ տնով տեղով և ազգովին զեհենական յուսահատ չարչարանքներու ենթարկուած էր տարիներով, հայ ժողովուրդը ունեցաւ զինքը ասող օտարազգի ազդեցիկ թշնամիներ՝ որոնք, անտարակոյս, անբաւական համարելով անոր թշուառութիւնները, չկթումով և անվարան ամէն միջոց ի գործ դրին մրճոտելու համար անոր հերոս մարտիրոսի պատիւը, խափանելու համար ազնիւ անձանց համակրանքի արտայայտումը իր վիշտերուն հանդէպ, արզիլելու համար աննշան դարմաններ իր ծովածաւալ ցաւերուն և արծարծելու համար ոսոխին հրէշային բընազդը իր հանդէպ :

Իրեւ հայ, արզահատանքով միայն պիտի նայէի այդպիսի թշուառականներու վրայ, առանց ըոսկէ մը իսկ զբաղելու անոնց շամբուշ ու շաղաշոյտ զրպարտութիւն-

ներով, ըստ մեր Խորենացիին որ կը պատուիրէ թէ ռաւելորդ է յաղագս անբանից արանց թուլամտաց վայրենեաց ճառեց, բայց որովհետև անոնց ամենէն հոչակաւորը մեծ ազգի մը փառքերէն է, ստիպուած եմ կարգ մը բացասարութիւններով և միջբերումներով վեր առնել անոր արտայայտած կարծիքներուն իրական արժէքը, և ցուցագրել անոր մտայնութիւնն ու նկարագիրը :

Պալքանեան պատերազմին թուրքերու պուլկարներէն կրած ահամօթ պարտութիւնը մասնաւորաբար հարգինուորներու վատասարտութեան վերագրելը (\*) հրապարակային զշումով և հանդիսաւորապէս ետ առնելէն ետքը (\*\*), մարդ պիաի փորձուէր ընդունիլ Հօթիին ճշ-

(\*) «Ու յետոյ, Սահմանադրութենէն ետքը, Քիստնեաներ իրենց կուոյ շարքերուն մեջ առնելու մեծ յանցանքը գործեցին անոնք : Քա՛ւ լիցի, Քիստնիկ տիտղոսը շեմ ուզեր նուասացնել, բայց քուրք բանակիները պուլկարներ եւ յոյներ էին, բնականաբար տամադրուած չի կռուիլ ընդդեմ իրենց եղբայրներուն, — կամ հայեր, զօրագրուած էին տանկական առածին մոռացումովը, և Ասուած միեւնոյն օրինակին (Երկիւղի եւ փախուսի արարածներ, կը հասկցուի) վրայ սեղծեց նապասակը եւ հայը : » Տես Turquie Agonisante, par Pierre Loti, 44 e éd. p. 45 :

(\*\*) Վերջացնելէ առաջ, անկեղծ եւ ինքնաբուխ զղումներս կը ներկայ սցնեմ հայերուն, գոնէ քուրք բանակին մեջ իրենց ունեցած ընթացքին համար : Պօլսոյ մամուլին մեջ ոսկիներու ուժով իրենց հրատարակած բողոքներու պատճառով չէ, այլ, քուրք սպայ բարեկամներ ունիմ, որոնցմէ իմացայ որ առաջին տեղեկութիւն-

մարտասիրութիւնն ու անկեղծութիւնը : Սակայն անոր յետագայ զրութիւնները, լի զթասիրութեամբ հանդէպ թուրքերուն և նախատինքներով, յիմար զրպարտութիւններով և զրական խարդախութեամբ հայոց հասցէին՝ ցոյց կուտան թէ ան սոսկ անուղղելի կոյր ու յամառ թրքասէր արարած մ'է, բոլորովին զուրկ պարկեշտ և աղնիւ զգացումներէ :

Արդարեւ, ի՞նչպէս հաշտեցնել անոր հետեւեալ խօսքերը, «Դիտցուած է թէ Պօլսոյ Երեսփ. Ժողովոյ մէկ նիստին մէջ Միւսլիւման երեսփոխաններ՝ կոտորածները կատաղութեամբ ձաղկելէ վերջը, գովեստը ըրած են նահանգներու կառավարիչներուն՝ հայեր պաշտպանած ըլլալնուն համար, հակառակ Սուլթանէն բղխած բնաջընջումի հրամանին, » (\*) որոնցմով կը տքնի հրեշտակացնել իր սիրելի թուրքերը՝ քրդերու վերազրելով հայ ջարդերու ծանրագոյն պատասխանատութիւնը, այս խօսքերուն հետ. «Գիտեմ որ անոնք ծայրայեղ կատաղութեան ցայտումներ ունին և երբեմն կարմիր ամսեր կ'անցնին անոնց աչքերուն առջեւէն, միայն թէ . . . երբ խալիֆային ձայնը իսլամի զերագոյն պաշտպանութեան կը կոչէ զանոնք : » (\*\*)

Եերս չափազանցուած էին, եւ թէ, հակառակ կարգ մը կանխական դասալիութեանց, իրենց հրամաններու տակ դրուած հայերը կտրինօրէն վարուած էին : Աւրեմն, երջանիկ եմ անվերապահօրէն կարենալ ես առնելուս համար ինչ որ ըսած էի այս մասին, եւ ներողութիւն կը խնդրեմ : Տես Turquie Agonisante, p. 94 :

(\*) Les Massacres d'Arménie, par Pierre Loti, p. 24. Les Alliés qu'il nous faudrait, par Loti, p. 44.

(\*\*) Turquie Agonisante, p. 176. Les Massacres d'Arménie, p. 33. Les Alliés qu'il nous faudrait, p. 51.

Միայն խալիֆային ձայնին անոնց ծայրայեղ կատաղութեան ցայտումներ ներշնչելու և անոնց աչքերուն առջեւէն կարմիր ամպեր անցնելու շնորհունակ յատկութիւնը ճանչցողը, սոսկ յիմար մը կամ անամօթ մը չի՞ պիտի ըլլար յանդզնիլ հրեշտակացնել թուրքերը, պնդելով որ անոնց կատարած ջարդերու նկարագրութիւնները խիստ չափաղանցուած են և մանրամասնութիւնները տգեղցած : (\*)

Հայերու այս պակշոտ դատաւորը, հակառակ իրեն ակադեմական իր անմահի փառքին, ինքնին կը խոստովանի նաև զզուելի խարդախի իր նկարագիրը :

Շոգմոզօրէն անճրկած թուրքերու զործած վերջին եղեռնին պատասխանատութեան ջնջին պատրուակ մը իսկ հայերու կարենալ վերագրելու իր թափած ջանքերէն, ան կը գոչէ իր “Les Massacres d’Arménie,” (\*\*) և “Les Alliés qu’il nous faudrait,” (\*\*\*) զրքերուն մէջ թէ 1896-ի ջարդերուն հայերը տեղի տուին, ու այդ առթիւ մէջ կը բերէ հետեւեալը զոր զրած է, կ’ըսէ, 1896-ի ջարդերու մասին իր “Turquie Agonisante,” զրքին մէջ .

«1896-ի ջարդերուն ամբողջ սարսափը թուրքերու վերագրելէ առաջ, պէտք պիտի ըլլար նախ մոռնալ թէ որպիսի կատաղութեամբ «հայ յեղափոխական կուսակցութիւնը» յարձակումը սկսած էր: Հոչակելէ յետոյ քաղաքը այրելու դիտաւորութիւնը, որ «անպատճառ, կ’ըսէին լրբորէն փակցուած յայտարարութիւնները, մոխիրի

(\*) Les Massacres d’Arménie, p. 23. Les Alliés qu’il nous faudrait, p. 44.

(\*\*) Տես էջ 32:

(\*\*\*) Տես էջ 50:

անապատի մը պիտի վերածուէր շուտով, » կարգ մը երիտասարդ դաւադիրներ Օսմանեան դրամատունը զրաւած էին օդը հանելու համար զայն, մինչդեռ ուրիշներ արիւնով կ'ողողէին Ասմաթիան Սարսափը 18 ժամ տեսեց, որու միջոցին ուժանակը աւերներ զործեց. զրեթէ ամէն տեղ պատուհաններէն նետուած հայ ոռոմբերը ինկան ուղղակի զինւորներուն վրայ. և Սուլթանին նուազախումբը, որ ուրբաթ օրուան աղօթքին համար պալատ կ'երթար, մասնաւորապէս վնասուեցաւ :

Եթէ ընթերցողը բաղդատէ յիշեալ տողերը բնազրին հետ, պիտի տեսնէ որ Լօթին դիտմամբ ջնջած է կարգ մը երիտասարդ դաւադիրներուն առջեւէն «յանդզնութեամբ հիանալի, կ'ընդունիմ» տիտղոսը, և ետքէն աւելցուցած է «և Սուլթանին նուազախումբը որ ուրբաթ օրուան աղօթքին համար պալատ կ'երթար, մասնաւորապէս վնասուեցաւ, » սոսկ հայերու յանցանքը ծանրացնելու դիտումով, խարդախութիւն՝ զոր զրազիտական օրէնքը չի պիտի ներէր միջակ զրագէտի մը իսկ :

Ոչ միայն ամրուջ սրտովս պիտի ներէի Լօթիին իր այս ու այն կարգի բոլոր յիմար չարախօսութեանց համար, այլ ընդ միշտ երախտապարտ պիտի մնայի իրեն, եթէ նա՝ հայուախճներու դարաւոր աղետալից գոյութիւնը, զոր մենք կուրօրէն չենք նշմարած, կամ տղիտաբար չենք կրցած նշմարել, այնքան ազդողաբար շամփրած ատեն, խղճմտութիւնը և կամքը ունեցած ըլլար ճշմարտապէս ներկայացնել անոնց սոսկալի ծաւալն ու աղդեցութիւնը, ինչպէս նաև անոնց զործունէութեանց կեղրոնը և զործած չարիքները :

Կ'ընդունիմ իմէ ունեցած ենք և ունինք իրենց կոչումին բացարձակապէս անարժան թորգոմ Գուշակեան և Մուշեղ Սերոբեան Եպիսկոպոսներ, բայց ատկից հե-

տեւցնելով բոլոր հայ Առաջնորդներու բարոյականն ու պարկեշտութիւնը կասկածի ենթարկելը (\*) անհերելի նախատինք մը պիտի ըլլար մեր այնքան մաքրակրօն մարտիրոս Առաջնորդներու յիշատակին՝ որոնք անմոռնչ ըմպեցին իրենց հօտին յատկացեալ դառնութեան բաժակէն :

Ի՞նչ պիտի ըսէր Լօթին, կամ ու է ֆրանսացի, եթէ հայ մը յանդգնէր միեւնոյն լեզուն զործածել 1904-ին հանրապետութեան արտաքսումով վկայեալ ֆրանսացի անհամար կղերականներու մասին : Սակայն, մենք զիտենք որ, եթէ անոնց մէջ չեն պակսիր թորգոմներ և Մուշեղներ, հոն կան նաև մեր վստահութեան և յարգանքին բոլորովին արժանի եկեղեցականներ :

Միեւնոյն նենգաժէտութեամբ է որ ան կը զրէ. «Կը յանդգնիմ նոյն իսկ ըսելու թէ, թուրքիոյ մէջ հայերը որպէս պտուղը կրծող որդեր են, ամէն միջոցով, մանաւանդ վաշխառութեամբ ամբողջ ոսկիները իրենց քաշող, ինչպէս երբեմն հրեաները Ռուսիոյ մէջ։ Մինչև հեռուները նետուած զիւղերու մէջ, մինչև շէներու խորը կը գտնուին անոնք զբաղած ճղճիմ վաշխառութեամբ, և ահա, անոնց հատուցանելու համար, պէտք է ծախել եղն ու արօրը, յետոյ արտը, յետոյ հայրենի տնակը» (\*\*)

Հայուտիճներու զոյութիւնն ու ծաւալը այսքան յստակօրէն տեսած ատեն, եթէ ան անաչառութենէ բոլորովին զուրկ չըլլար, միեւնոյն յստակութեամբ և դիւրաբար ցոյց պիտի կրնար տալ նաև անոնց աղետալից զործունէութեան իրական վայրերը և անոնց բուն զո-

(\*) Turquie Agonisante, p. 173,

(\*\*) Les Alliés qu'il nous faudrait, p. 47.

հերը : Թայց ան ուխտած է երբեք ճշմարտութիւնը չըսել հայերու մասին, նոյն իսկ հոս՝ ուր շիտակ խօսելով բնաւ չի պիտի վնասէր իր սիրելի թուրքերուն :

Դժբախտաբար խիստ ճշմարիտ է որ անթիւ վաշխառուներ ունէինք և ունինք սփոռուած մեր երկրին ամէն կողմ, հրեայ վաշխառուներէ անհամեմատ աւելի ոիշտ ու անզութ վաշխառուներ՝ որոնց կը պարտինք զլխաւորաբար, եթէ ոչ մի միայն, մեր երկրին քանդումը թուրք ու քուրդ աւազակներու զործած չարիքները երբեք չեն հաւասարած մեր անխիղճ վաշխառուներու զործած աւերներուն : Եթէ քուրդն ու թուրքը յաճախ սովալուկ գայլերու և աղուէսներու պէս, զորս ձմրան սոսկալի սառնամանիքը զիւղ կը մղէ յափշտակելու համար ծերացած անտէր շուն մը կամ հաւեր, հայ վաշխառուն, դարերով՝ յենած թուրք իշխանութեանց, թուրք ու քուրդ պէյերու և փաշաներու զօրութեան՝ թուրք դատաւորներու անօրինութեան՝ անդադար զործած է իր սոսկալի աւերները, խաթարելով հայ ժողովուրդի բնակ մաքուր ձիրքերը, խափանելով և արգիլելով անոր խաղաղ զարգացումն ու բարգաւաճումը, և ծծելով անոր արիւնը՝ կարծես իր զոհին մահուամբը սատկելու մարմաջէն բռնկած իժաբար :

Մարդ կը փորձուի հաւատալ թէ ամբողջ հայ ժողովուրդը թուրքերու հանդէպ վաշխառուներու բանակ մը ներկայացնելով Լոթին նպատակ ունեցած ըլլայ, աւելի՝ ծածկել հայուտիճներու գոյութիւնը, կամ մեղմացնել անոնց զործած աւերներուն ահազնութիւնը : Որովհետեւ, ինքն իսկ չի պիտի հաւատար թէ «նապատակ»ը կարող է «առիւծ»ին վնասել: Ու յետոյ, եթէ աշխարհի բոլոր հեշտարանները կահաւորուած են Փրանսացի բորբոքիտ աղիճներով, էգործներով և հրոսներով, ու մարդ անոնց

վրայ կը նայի որպէս ֆրանսուտիճներու և անոնց զոհերու, առանց ըոպէ մը իսկ մտքէն անցնելու թէ ամբողջ ֆրանսացի ժողովուրդը անոնցմէ բաղկացած ըլլայ, ի՞նչպէս Լօթին, Լօթին որ նոյնիսկ թուրքերը ճշմարիտ և այլասեռած մասերու կը բաժնէ, պիտի յանդգնէր անուանարկել ամբողջ հայ ժողովուրդը, անարգ վաշխառու հոչակելով զայն:

Բոլորովին վստահ եմ որ Ֆրանսայի արտածական հրոսութեան արտադրութեանց այս ականակուռ ներկայացուցին, Լօրտ Ֆիշըրի<sup>(\*)</sup> և ամբողջ մեծ ու փոքր հայատեացներու մեր մասին ունեցած և բարձրագոչ հըռչակած վնասակար կարծիքները իրենց բոլոր խոշոր թերութիւններով և կոպիտ չափազանցութեամբ կը պարտինք հայուտիճներու գոյութեան, որոնց կը պարտինք զլիսաւորաբար մեր տան քանդումը :

Ուզեցի զրքոյկս պատրաստել նպաստելու համար հայուտիճներու, եթէ ոչ արմատախլման, անհնարին զործ, զոնէ անոնց բացարձակ չեղոքացման կամ մեկուսացումին:

(\*) Ոչ մուկերը եւ ոչ ալ հրեաները կրնան ապրիլ Մալթայի մէջ . Մալթացիները անոնց համար շա's շանեն : Մալթացի մը չի կրնար ապրուս նարել Levant ի մէջ . Levantin ները անոր համար շա's շան են : Հայաստանի մէջ երբեք Levantin տեսնուած չէ : Վերջին Օգ. Սուլթան Համիտը հայ էր : Ան իրմէ առաջ ջարդուած հայերէն աւելի շատ հայեր կոտորեց . բնաւ կասկած չունիմ թէ այդ կրնայ բացատրուիլ : Կը կարծուի թէ նախորդ Սուլթանին հայ կառապանն էր իր հայրը : Ամեն պարագայի մէջ , ան երբեք չէր նմանէր իր ենթադրեալ Սուլթան հօրը : Երբ շատ անգամներ անոր հետ կը նաւեկի , իր հօրը պատկերը ետեւը կախուած , ան սովոր էր հարցնել թէ նմանութիւն մը կը տեսնուէր . — ո՛չ մեկ նմանութիւն չի կար : » Memories, by Admiral of the Fleet Lord Fisher O. M. Ch. VI.

# ԳԼՈՒԽ Ա.

## ՀԱՅՈՒՏԻՃՆԵՐԸ՝ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ

Ստրուկ հայ ազգային իշխանութեանց վարքն ու բարքը խղճամիտ և անաչառ ուսումնասիրողը անվարան պիտի հաստատէ թէ այդ կրօնա-աշխարհական խառնածին hybride, դիտմամբ է որ չեմ ըսեր «խառն, mixte», իշխանութիւնները մեծ ու փոքր, կազմուած բացարձակ մեծամասնութեամբ հայուտիմներէ, հակառակ իրենց քըրիստոնեայ, հետեւաբար՝ կուլտուրական ծագման, իրենց ամբողջ զործունէութեամբ բնաւ չեն տարրերած թուրք կամ քուրդ իշխանութիւններէ, եթէ երբեք չափազանցութիւն պիտի ըլլար ըսել թէ գերազանցած են զանոնք:

Նոյն իսկ 1863-ի Սահմանադրութենէն ի վեր, որով թուրքերը, կարծես բոլորովին ապահով տիրող հայ մտայնութեան մասին, անոնց կը չնորհէին աշխարհի ազատական «ամենքը մէկուն՝ և մէկը ամենքուն համար» կառավարական սկզբունքը, և Բարձր Դուռը կը պարտադրէր հայ իշխանութիւնները «ազգայնոց բարոյական, մտաւորական և նիւթական պիտոյիցը հոգ տանիլ, կարօտելոց խնամ տանիլ հայրաբար, ազգայնոց մէջ ծագած վէճերը արդարասիրութեամբ խաղաղեցնել, և վերջապէս ազգային յառաջդիմութեան անձնանուէր աշխատիլ» (\*), հայ իշխանութիւնները երբեք չեն ուղած մաք-

(\*) Հիմնական Սկզբունք Հայոց Ազգ. Սահմանադրութեան:

րուիլ իրենց զնչու բարքերէն՝ կարծես ետ չմնալու համար թուրքերէն՝ որոնք իրենք իրենց մերժած էին միեւնոյն շնորհը :

Թուրք իշխանութեանց գործակատարներէն ալ աւելի հայ աղզային իշխանութեանց գործակատարները միշտ իրենց իշխանութիւնը համարած են լոկ իրենց անձնական հասոյթի աղբիւրներէն զլիսաւորը, ոչտօրէն և անզթաբար կեղեքելով աղզային կալուածները և անպաշտպան հայ որբն ու այրին, արհամարելով գութ, բարութիւն, պարտականութիւն, հանրային և անհատական իրաւունք կամ նիւթական և բարոյական շահ, որոնք անիմաստ բառեր եղած են անոնց համար, ինչպէս «Մեղայ գողութեամբ ձեռացու, ագահելով, զրկելով, հարկանելով, սպանանելով և ընդ զարչու ածելով. մեղայ խորամանկութեամբ, անզզամութեամբ, ժլատութեամբ, անիրաւութեամբ և չարահաւանութեամբ», զոր կը մռմուան անդադար այնքան շնականօրէն և կեղծաւորաբար, սոսկ ժմտելու համար տղէտ հասարակութեան երեսին, կարծես հաստատելու և աւելի եւս ամրացնելու համար Մեծն Սքանչելին և Անմահն Բուզանդացիին 16 դար առաջ ըրած դիտողութեան բացարձակ ճշմարտութիւնը, թէ զղի ի վաղնջուց, յորմէ յետէ առին նոքազանուն քրիստոնէութեան, լոկ միայն իրբե զկրօնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց՝ և ոչ ջերմեւանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իրբե զմոլորութիւն իմն մարդկութեան ի հարկէ : » (\*)

\* \* \*

(\*) Բուզանդացան Պատմութիւնն, Դպր. Գ. Գլ. ՓՊ. :

Առանց ընդարձակօրէն կանգ առնելու մեր գեղին «իրիցփոխ» թօփալ Խչօյին վրայ որ՝ կրթնած իր բազմանդամ ազգականներուն ուժին, գեղին եկեղեցին կը քանեցնէր իրրե իր սեպհական խանութը, և մեր ողորմելի Տէրտէրին վրայ որ՝ երբ մատաղ օրերուս այնքան մաքուր բերանով և երկիւղածութեամբ սուրբ հաղորդութեան սեղանին կը մօտենայի, — խարեբայութեան առաջին դասը կուտար ինծի՝ մատները բերանս խոթած արագօրէն ակուաներս քերելով, լինտերս վիրաւորելու աստիճան իր աղտոտ եղունզներով, հոն զտնուելիք կերակուրի մնացորդով մը փոխանակելու համար նշխարի կտորը, կեանքիս մէջ որչափ անգամ զործ ունեցած եմ ազգային իշխանութեանց հետ՝ միշտ սոսկալի զզուանքով հեռացած եմ անոնցմէ :

1896-ին, երբ թուրք կառավարութիւնը հայ կը բիճներէ Պոլսոյ Օսմ. գրամատան զրաւումին պատրուակով վերստին կ'սկսէր Պոլսոյ խեղճ պանդուխտ հայերը ջարդել և վտարել, շատերու հետ ես ալ ստիպեալ, անխուսափելի սպանումէ զերծ մնալու համար, ինքինքս Պուլկարիա կը նետէի։ Պուլկարները ելլբայրաբար հիւրնկալած էին բիւրաւոր փախստական հայեր, իսկ պուլկար կառավարութիւնը, շատ մը դիւրութեանց հետ, անոնց արտօնած էր ամբողջ Պուլկարիոյ մէջ ձրի ճամբորդել։

Վառնայէն Թուսճուք ճամբորդութեանս առթիւ, ստիպեալ, կ'ուզէի օգտուիլ պուլկար կառավարութեան բարիքէն։ Քանի մը ծանօթներու հետ կը դիմէի վառնայի Հայոց Առաջնորդարանը, ստանալու համար փախըստական հայ մը ըլլալս հաստատող տոմսը, ձրի կարենալ ճամբորդելու համար։

— «Այսօր Ժամանակ չունինք քեզի լտոմս տալու,

վաղը եկէք» կ'ըսուէր ինծի, և ես կը հեռանայի: Հետեւն եալ օրը երբ կը ներկայանայի, «ախաղար, աճէլէդ ի՞նչ է» ով կ'ընդունուէի: Եւ երբ անոնց կը յիշեցնէի իրենց «վաղը եկէք»ի պատուէրը, «ի՞նչ, քեզի վաղը եկէք ըսինք տէյի, այսօ՞ր կուզան, հիմա ժամանակ չունինք, ուրիշ օր մը անցէք» կը հրամայուէր ինծի:

Այսպէս ամբողջ շարաթ մը կորսնցնելէ յետոյ, երբ կը նշմարէի որ այդ ժամանակամիջոցին շատ աւելի ծախսած էի քան ինչ որ հարկաւոր էր շողեկառքին վճարել, զուր տեղը աւելի չծախսելու համար, կ'ստիպուէի դրամովս ճամբայ իյնալ:


Երկրորդ անգամ գործս Սուչովայի Աղքային իշխանութեանց հետ էր:

1896-ի աշնան վերջերը, երբ փախստականի յատուկ դժուարութեամբ վիճնա կը հասնէի, դրամս բոլորովին սպառած էր: Որպէս զի կարենայի ճամբաս շարունակել դէպի Ֆրանսա, արեւմտեան քաղաքակրթութիւնը մօտէն տեսնելու համար, կ'ստիպուէի Մխիթարեան Հայրերուն դիմել՝ զտնելու համար գործ մը ապրուստս ճարելու և քիչ ետքը կարենալ ճամբորդութիւնս շարունակելու համար:

Երբեք չեմ մոռցած այն տաք զուրգուրանքը որով Մխիթարեան Հայրերը զիս կը հիւրնկալէին: Բայց այդ պատուական հայերը, առարկելով թէ «քեզի պէս անփորձառու և ապրելու միջոցներէ զուրկ մէկը Ֆրանսայի մէջ կը փճանայ, ինչ որ մեծ կորուստ պիտի ըլլայ խեղճ ծնողքիդ և խեղճ ազգերնուս (sic)»՝ կը նախընտրէին զիս Սուչովա լրկել, ուր հայ դպրոց մը գոյութիւն ունէր առանց հայերէն զիտցող ուսուցչի և ես պիտի կարենայի օգտակար ըլլալ հոն:

Ամբողջ տարի մը Սուչովա մնալէ յետոյ, երբ կը հա-

մոզուէի թէ բնաւ օգտակար չի պիտի կրնայի ւլլաւ հոն, որովհետև 30-40 խառնածին երեխաներու յատկացուած դպրոցը լոկ պատրուակ մ'էր որպէս զի անոնց ծնողքը կարենային կրծել աղզային հասոյթները — ապա թէ ոչ,



իրենց զաւակները օտար դպրոց պիտի զրկէին — , 3-4 հայ հերկելեներ կարենային ապրիլ կարգավար կամ պատուելի տիտղոսներով, ու 5-6 ուլահ, շրջբռու և մաճառ արարածներ պոլ պոլ ամսականներ առնելին իրրեւ այցե-

լու ուսուցիչներ, և այս ամէնը՝ որպէս զի տեղացի հայ von երը կարենային ինքզինքնին հալարտ զզալ յաչս օտարաց խրեախ առաջնակարգ դպրոց մը ունենալնուն համար, կ'որոշէի հեռանալ :

Որովհետեւ առանց անցազրի ամբողջ Աւստրիան և Գերմանիան պիտի կտրէի, աւելորդ դժուարութիւններէ ազատ մնալու համար, տարի մը Սուչովայի Հայոց դըպրոցը ուսուցիչ ըլլալս հաստատող Գերմաներէն վկայազեր մը կը խնդրէի տեղւոյն Հայ Ազգապետ Վարդերես von Բրունգուլէն, որպէս զի ճամբորդութեանս միջոցին կարենայի, ի պահանջել հարկին, գոնէ մասամբ ինքնութիւնս հաստատել :

Երբեք չեմ մոռցած թէ ի՞նչ փիս սուրաբով այդ հայ vonը՝ որ մեղքերուս համար 1913-ին Հայաստանի Քարենորոգմանց Կօմիտէին ալ պիտի անդամակցէր իրեն ազգասէր հայ, այնքան արդար և չնչին խնդիրքս կը մերժէր ըսելով. «Ինտօ՞ր, դու չիս ուզիր միզի մօտ կի՞նալ, ու կուզիս օր միք քիզի վկայաթուղթ իտանք, հա՛, հա՛, հա՛»

Ընթերցողիս լուրջ խորհրդածութեան կը յանձնարարեմ դարերէ ի վեր եւրոպական հողի վրայ՝ թուրք լուծէ բոլորովին ազատ ապրող կուլտուրական ժողովրդի մը պատկանող այս ազնուականին մտայնութիւնը :


Քանի մը օր ետքը կը հասնէի ծիւրիխ, ուր, անցագիր կամ ինքնութիւնս հաստատող ու է զիր մը չունենալուս համար, ոստիկանութեան աշալուրջ հսկողութենէն խուսափելով՝ որպէս վտանգաւոր մէկը չվտարուելու և տանտէլս տուզանքի չենթարկելու համար, ստիպւած էի ամէն երկու երեք օր բնակարան փոխել :

Խորհելով որ Օրմանեան Պատրիարքը՝ որուն խնամակալութեան յանձնուած էր Պոլսոյ Աղդ. կեդրոնական

վարժարանը 1896-ի կոտորածէն ի վեր, իրբեւ հայերու պարտադրեալ պաշտպան և բարձրաստիճան հայ եկեղեցական, աղնուութիւնը պիտի ունենար զո՞նէ յիշեալ դպրոցին աշակերտութեանս վկայագիրը դրկել ինձի, մէկէ աւելի անզամներ կը զրէի անոր, կացութիւնս պարզելով, վկայագիրս ունենալու անհրաժեշտութիւնը։ Բայց այդ չար և անզգամ եկեղեցականը նամակներուս անզամ չէր պատասխանէր։

Գիտե՞մ, հայուտիճները պիտի բացազանչեն. «Ալվո՞ր նայէ, դո՞ւ ո՞վ ես որ Օրմանեան սրբազնը քեզի պիտի պատասխանէր.» բայց բարեբախտաբար այդպիսիներու համար չէ որ այս տողերը կը զրեմ։

Վերջին անգամ զործ պիտի ունենայի Եղիպտոսի Հայ Ազգային իշխանութեանց հետ, աւելի յստակօրէն տեսնելու համար հայ իշխանի, հայ Եպիսկոպոսի և հայ ազատուեարի քրդականէն աւելի անարդ անիրաւութիւնը, սատանեկան նենզութիւնը և դժոխային ժլատութիւնն ու անզգամութիւնը։





# ԳԼՈՒԽ Բ.

## ՀԱՅՈՒՏԻՑՆԵՐԸ ԳՈՐԾԻ ՎՐԱՅ

Իր մանկութիւնը երբեմն չէն ու հպարտ, բայց այժմ շնորհիւ հայուտիճներու աւերակ և ամայի լուրսի մորուա և մամուապատ ժայռերու կոյտ Պարթմուց ձորին վեհ հանդարտութեան մէջ ուլարածութեամբ անցնող լուսկաց Մկօն, անհասանելի կամօքն Աստուծոյ, օր մ'ալ, իր տկար ուժերով և բոլորովին աննպաստ դիրքով, հայ աղքատ այրիներու արդար իրաւունքը պաշտպանելու պիտի կոչուէր Եզիսպտոսի մէջ հայուտիճներու էն զօրելներուն հանդէպ։ Ընթերցողին կը մնայ աչալուրջ ուշադրութեամբ հետեւիլ անհաւասար ուժերու այս ընդդիմարտին՝ գալափար մը կազմելու համար այս մասին։

\* \* \*

1914-ի գարնան սկիզբը գրասենեակս կուգար Այրի Տիկին Աղաղանեան՝ ծնեալ Յակոբ Ալթունեան, իր աղջլկան և իր գեռատի թոռին հետ։

Տիկին Աղաղանեան կ'սկսէր պատմել ինձի թէ՝ մօտաւորապէս 30 տարի առաջ իրարու հարազատ իր երկու համարիւն քոյրերը, Հեղինէ և Թագուհի Յակոբ Ալթունեան, Պոլսէն Եզիսպտոս եկած էին իրենց ապրուստը ճարելու համար։ Քանի մը տարի միասին ապրելէ ետքը, Թագուհին կը հաստատուէր Գահիրէ, իսկ Հեղինէն կը մնար Աղեքսանդրիա, ուր 1904-ին կ'ամուսնանար Բէթրօ Ճիխանիտի անուն յոյնի մը հետ։ 1909-ին Հեղինէին

ամուսինը կը մեռնէր անզաւակ, և 1911-ին կը մեռնէր նաև Հեղինէն :

Որովհետեւ իր ամուսնութեամբ Հեղինէն յունահպատակ դարձած էր, անոր մեռած պահուն յունական հիւպատոսարանը իր խնամակոլութեան տակ առած էր անոր ձգած բոլոր ինչքերը զորս կը մերժէր իրենց յանձնել՝ առարկելով թէ ըստ Հեղինէին ամուսնութեան վկայագրին անոր անունն էր Հելենի Արանասի Ֆիլիփու և ոչ թէ Հեղինէ Յակոբ Ալթունեան :

Որովհետեւ ըստ Եղիպտոսի մէջ գործադրուող միջաղզային օրինաց դատը Աղեքսանդրիոյ Յունաց հիւպատոսարանական դատարանի առջև պիտի տեսնուէր, և ես հմուտ չէի յոյն օրէնքներու և յոյն լեզուին, անկարողութիւնս կը յայտնէի յաճախորդիս և խորհուրդ կուտայի իրեն Աղեքսանդրիոյ Հայոց Առաջնորդարանի միջոցաւ յոյն վստահելի փաստաբանի մը յանձնել գործը :

Բայց Տիկինը ապշեցուցիչ սոսկումով մը տեղէն վերցատկելով կը յայտնէր.

— Կ'աղաչեմ, Պարոն, զիս Առաջնորդարան մի՛ լրկէք, անոնք տուներնիս քանդել կ'ուզեն :

— Բայց ինչո՞ւ, Տիկին, ինչպէ՞ս :

— Նախապէս չուզեցի ձեզ ձանձրացնել խնդրոյն ամբով պատմութիւնը ընելով, իսկ եթէ չէք նեղանար, ահա թէ ինչո՞ւ և ինչպէս Եղիպտոսի Հայոց Առաջնորդարանները կ'ուզեն տուներնիս քանդել :

Եւ կ'սկսէր պատմել .

— Քոյրերուս Պօլսէն հեռանալէն ի վեր, աղքատութեանս, տգիտութեանս և թուրքիոյ քաղաքական կացութեան պատճառով շատ քիչ յարաբերութիւն ունեցած էի անոնց հետ, որոնք՝ իմացածիս նայելով, Հեղինէին ամուսնութենէն ի վեր դադրած էին իրարու հետ

սիրով ապրելէ, թէև Թագուհին կ'օգտուէր անոր բարեկեցութենէն :

— Բայց ո՞ւր է Թագուհին, կը հարցնէի անոր :

— Պոլիս կը զտնուի այժմ, ես տարած եմ զինքը հոն :

— Ե՞րբ, ինչո՞ւ :

— Մօտաւորապէս վեց ամիս առաջ : Ինչպէս քիչ մը առաջ ըսի, կը շարունակէր տիկինը, քոյրերուս Պոլսէն հեռանալէն ի վեր խիստ հազուաղէպ էին մեր յարաբերութիւնները և շիտակն ըսելով՝ չէի զիտեր թէ կապը բէի՞ն թէ ոչ, և առանց աղջկանս, շատ հաւանական էր որ ամբողջ կեանքս նոյն անստուդութեամբ պիտի անցընէի անոնց մասին :

— Ինչպէս առանց ձեր աղջկան :

— Որովհետեւ աղջիկս լաւ զրել կարդալ գիտէ : Ասկից վեց եօթը ամիս առաջ օր մը յանկարծ քովս կը վազէր և լրագիր մը ցոյց տալով կ'ըսէր ինծի . «Մայրիկ, զիտե՞ս, Հեղինէն մեռած է թողլով 5-6000 ոսկինոց կալուած մը զոր Թագուհին կտակած է Եղիպտոսի Հայոց, Բարեգործական Ընդհանուր Ակադեմիայի համար» . Միութեան :

Այս ըսելով՝ Տիկինը առջեւս կը դնէր Պոլիս հրատարակուող «Հեռածայն» թերթի Ա. Տարւոյ թիւ 59էն օրինակ մը, որ կը կրէր Զորեքշարթի, 4-17 Սեպտեմբեր 1913 թուականը, ուր կը կարդայի հետեւեալը՝ «Կորսուելու դատապարտուած հարսութիւն մը» վերնազրին տակ.

«Անցեալ տարի Աղեքսանդրիոյ մէջ մեռաւ հայուհի մը, Տիկին էլէնի Փեթրոս Ճիովանիտիս (Ճնեալ Հեղինէ Ալթունեան), թողլով մեծարժէք կալուած մը (շուրջ 5-6000 ոսկինոց) և իրբեւ միակ ժառանքորդ՝ քոյրը, Օր. Թագուհի Ալթունեան (բնիկ Պէտիկթաշի, Գլքճճի Յակոբ Ալթունեանի աղջիկը) :

«Տիկին էլենի ծիովանիտիսի ամուսինը (մեռած) հելենահպատակ ըլլալուն, հելեն հիւպատոսարանը ըստ օրինի տիրացած է հանգուցելոյն շարժուն և անշարժ կալուածներուն, սակայն յօժարութիւն ցոյց տուած է Ազգ. Առաջնորդարանին վերադարձնել՝ երբ Օր. Թագուհի Ալթունեան վկայագրով մը հաստատէ թէ հանգուեալին քոյրն է : »

«Արդ, Օր. Թագուհի Ալթունեան, 17/30 Յունվար 1912-ին, Դահիրէի Ազգ. Առաջնորդարանը ներկայանալով՝ իրեն ժառանգ ինկած անշարժ կալուածքը Միութեան կտակած է, պայմանաւ որ օրինական ձեւակերպութիւնները կատարուին Միութեան ջանքով՝ Ցաւալի է սակայն որ հակառակ բազմադիմի դիմումներու, զոր թէ Ազգ. Առաջնորդարանը և թէ կեդր. Վարչ. Փողովը ըրած են Ազգ. Պատրիարքարանի մօտ, ցարդ կարելի չէ եղած ձեռք բերել Օր. Թագուհի Ալթունեանի ծննդեան վկայագիրը։ Խնդիրը կրկին սեղանի վրայ բերուած ըլլալով, կեդր. Փողովը որոշեց կրկնել իր դիմումը և նոր ցուցմունքներու վրայ հնարաւոր ընել նոր փնտոտուքներ Պէշիքթաշի Թաղ. խորհրդարանի մէջ։ »

— Այս բաները իմացածիս սկս, կը շարունակէր Տիկինը, իսկոյն քանի մը ծանօթներէ ճամբորդութեանս հարկ եղած զումարը կը ճարէի և Եզիպտոս կուգայի ստուգելու համար իրողութիւնները։ Շատ դժուարութեամբ կը յաջողէի զտնել Թագուհին Արագ ընտանիքի մը քով, ուր կը մնար իբրև սպասուհի իր պառակի վիճակով և հակառակ այն մեծ հարստութեան զոր Հեղինէն մեղի ձգած էր երկու տարիէ ի վեր։ Խեղճ Թագուհին բնաւ տեղեկութիւն չունէր այդ ժառանդութեան կարեւորութեան մասին։ Հարցապնդումներուս վրայ կը խոստովանէր թէ ինչպէս, մօտաւորապէս տարի ու կէս առաջ

երբ ան տակաւին Հեղինէին մահուան լուրը չէր առած, Հայոց Բարեգործական Ըստն. Միութեան Կօմիտէի անդամներէն մ'էկ քանի եֆենտիներ փնտոած զտած էին զինքը և առօք փառօք առաջնորդելով զայն իրենց զրասենեակը ուղած էին անոր ստորագրել տալ, ազգասիրաբար, կտակ մը՝ որով ան Բարեգործականին պիտի թողէր իր ունեցած չունեցածը : Զուր տեղը ան բողոքած էր թէ ինքը խեղճ պառաւ սպասուհի մ'էր, հետեւաբար բոլորովին անկարող անոնց ազգասիրական գովելի զզացումներուն զոհացում տալու, բայց յիշեալ եֆենտիներէն մին հանդիսաւորապէս կը խաչակնիքը յիշեալ կտակը, ազգասիրաբար ամբողջացնելու համար զայն :

— Բայց ներեցէք, Տիկին, ձեր պատմութեան մէջ խոշոր հակասութիւններ կը նշմարեմ, սա պարզ պատճառով որ չեմ կրնար ըմբռնել թէ ի՞նչպէս Եզիպտոսի Հայոց Բարեգործական Ըստն. Միութիւնը կրցած էր իմանալ ձեր քրոջ Հեղինէին մահը Թագուհիէն առաջ :

— Իրաւունք ունիք, Պարոն, սակայն տեսէք թէ ինչպէս : Հեղինէին վերջին ծանր հիւանդումնեան միջոցին, կարդ մը տեղացի հայ ծանօթներ ու բարեկամներ, նշմարելով որ անոր կարասիները զզալի կերպով կ'անհետանային բնակարանէն, դիմած էին տեղեւոյս Առաջնորդարանը, տեղեկացուցած անոր հոգեվարքային լիճակը և խնդրած էին հարկ եղած միջոցները ձեռք առնել պահպաննելու համար Թագուհիին իրաւունքները. որ Գահիրէ կը զտնուէր և բնաւ տեղեկութիւն չունէր իրողութեանց մասին : Առաջնորդարանէն ըսուած էր անոնց թէ իրենք տեղեակ էին ամբողջ կացութեան, բայց իրաւասու չէին այդ խնդրով զրաղելու, քանի որ իր ամուսնութեամբ Հեղինէն յունահպատակ դարձած էր : Բոյրերուս այդ ծանօթներն ու բարեկամները, որոնք իրու տեղացի լաւ

տեղեակ էին Առաջնորդարանի գործերուն, թաղականներուն և անոնց պաշտօնեաններուն վարք ու բարքին և մտայնութեան, ինծի հաւաստած են թէ անպատճառ անոնք ըլլալու են այդ իւկիւզարութեան հեղինակները, հաղորդելով կացութիւնը իրենց Գահիրէի պաշտօնակիցներուն և խորհուրդ տալով անոնց կերպով մը թագուհին ձեռքէն թուղթ մը առնել, անոր վաղահաս մահուան պարագային կլլելու համար մեր իրաւունքները, և այսպէսով հաճելի ըլլալ Պօղոս փաշա Նուպարի, որուն զործակատարներն են ամենքն ալ: Զէք կարծէր որ այս ենթադրութիւնները ճշմարիտ ըլլան, կը հարցնէր ինծի Տիկինը :

— Իրաւ է որ տասը տարիներէ ի վեր Աղեքսանդրիա կը գտնուիմ, սակայն Առաջնորդարանի հետ բնաւ զործ ունեցած չըլլալուս համար, չեմ կրնար ինծի անծանօթ մարդոց մասին այսպիսի փափուկ կարծիքներ յայտնել: Ամէն պարագայի մէջ, Եղիպտոսի Առաջնորդարաններու մասին ունեցած վախերնիդ բոլորովին անհիմն կը զանեմ, որովհետեւ, թագուհին վերագրուած կտակը, իրաւ թէ կեղծ, բնաւ արժէք չունի, քանի որ թագուհին կրնայ մինչև իր մահը ուղածին չափ կտակներ վինել ու աւրել առանց ոչ ոքի հաշիւ տալու: Բայց ինչ որ զիս աւելի կը զարմացնէ սա է, թէ մինչև այսօր չէք կրցած ձեր ժառանգութեան տիրանալ:


— Ինչպէս կրնայինք տիրանալ մեր ժառանգութեան, Պարոն: Նախորդ անզամին երբ Եղիպտոս եկայ իրողութիւնները ճշդելու, իմ կարճ խելքով ես ալ ձեզի պէս խորհեցայ թագուհին վերագրուած կեղծ կտակի արժէքի մասին: Ենթադրենք թէ իրաւ եղած ըլլար այդ կտակը, միթէ թագուհին իրաւունք չունէ՞ր վայելելու իր հարստութիւնը մինչև իր մահը, քանի որ ըստ իս

կտակի մը արժէքը կտակարարին մեռած պահուն մէջ-  
տեղ պիտի զայ։ Ուստի, բոլորովին վստահ մեր արդար  
իրաւունքին, Թագուհիին հետ միասին դիմեցինք Աղեք-  
սանդրիոյ Յունաց Հիւպատոսարանը և պահանջեցինք  
Հեղինէին ձգած ինչքերը։ Հիւպատոսը մեղի յայտարարեց  
թէ՝ յիշեալ ժառանգութեան տիրանալու համար, պէտք  
էր որ նախապէս Թագուհին վաւերագրերով հաստատէր  
թէ ինքը քոյրն էր հանգուցեալ էլէնի Բէթրօ Ճիօվանի-  
տիին, ծնեալ, ըստ իր ամուսնութեան վկայագրին, Աթա-  
նասի Ֆիլիփու։

Եթէ զիտցած ըլւայի թէ ինչո՞ւ իշայրցի հետեւակ  
անարգորդիներ ինքղինքնին . . . րական անուանած էին,  
պիտի ուղէի հարցնել յաճախորդիս թէ՝ ինչո՞ւ Հեղինէն  
իր ամուսնութեան ատեն Աթանասի Ֆիլիփու անուանած  
էր ինքղինքը։ Բայց իբրև հանդիսատես մեր այր մար-  
դոց առօրեայ այնքան հեշտ անուանափոխումներուն, ա-  
ւելորդ կը սեպէի հայ խեղճ կնկան մը անուանափոխման  
պատճառը հասկնալ, մանաւանդ որ յոյնի մը հետ ա-  
մուսնացած էր։

— Մեզմէ պահանջուած վաւերագրերը ստանալու հա-  
մար, կը շարունակէր Տիկինը, դիմեցինք թէ Գահիրէի և  
թէ Աղեքսանդրիոյ Հայոց Առաջնորդարանները՝ որոնք,  
ո՛չ միայն մերժեցին մեղի տալ ո՛և է վաւերագիր, այլ  
մեզ վռնտեցին ըսելով թէ Հեղինէին ձգած ինչքերը կը  
պատկանին Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան, և  
թէ Նուպար Փաշան հարկ եղածը զրած էր ու պիտի զրէր  
Յունաց Հիւպատոսարանը, որպէս զի մեր դիմումները  
բնաւ նկատողութեան չառնուէին։ Ճարահատ ստիպուե-  
ցանք Թագուհիին հետ Պօլիս երթալ, Հայոց Պատրիար-  
քարանէն սաանալու համար մեր վաւերագրերը։ Հոն ալ  
բաւական դժուարութեանց հանդիպեցանք, որովհետեւ,

Նուպար փաշայի հրահանգներուն վրայ, Եսայեան, Տա-  
նաւարեան և ուրիշ էֆէնտիներ Զաւէն Պատրիարքին



գիմած էին լսավանելու համար մեր վաւերազրերու խըն-

դիրը : Բայց շնորհիւ Դաշնակցական Սօվիաներու վախին՝ յիշեալ էֆենտիները կը դադրեցնէին իրենց անիրաւ արգելքները և Ս. Պատրիարքը մեղի կուտար սա վաւերագիրը : (Տես նախորդ էջ) :

Պահ մը լուելէ ետքը, թոյլ տալու համար որ ինձի ներկայացուած վաւերաթուղթը կարդայի, Տիկինը կաւելցնէր .

— Գիտէ՛ք, Պարո՞ն, աղջկանս ամուսինը Վանեցի է, Դաշնակցական . դուք ալ Դաշնակցական չէ՞ք :

— Ո՛չ, Տիկին, որովհետեւ Եզիւլառոսի Դաշնակցականները իրենք սօվիաներու արժանի են :

Յայտնի էր թէ ըրած դիտողութիւնս հաճելի չէր անոր, որովհետեւ, առանց պատճառը հարցնելու ան կը վերջացնէր իր պատմութիւնը՝ ըսելով .

— Ամբողջ իրողութիւնը պարզեցի ձեզի, Պարոն : Թող ձեր քով մնան այս վաւերագրերը . միայն թէ, կը խնդրեմ, Պարոն, լաւ ուսումնասիրէիք խնդիրը և օգնէիք մեղի, որպէս զի կարելի եղածին չափ չուտով և յաջողութեամբ վերջացնէինք զործերնիւ : Որովհետեւ, մենք շատ աղքատ ենք և մինչեւ հիմա շատ պարտքեր ըրած ենք այս զործին պատճառով :





## ԳԼՈՒԽ Գ.

### ՀԱՅՈՒՏԻՃ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Առանց մեծ կարեւորութիւն ընծայելու յաճախորդիս խօսքերուն բացարձակ ճշմարտութեան, նախորդ գլխի մէջ յիշատակած «Հեռաձայն»ի, «Կորսուելու դատապարտուած հարստութիւն մը» վերնազրով կիսապաշտօն յօդուածը, Հայոց Պատրիարքարանի տուած ժառանգական վկայագիրը, ինչպէս նաև յաճախորդիս և իր քոյրերուն ծննդեան վկայագրերը շատ որոշ կերպով ցոյց կուտային ինծի՝ թէ ճիշտ էր որ Ելէնի Բէթրօ Ճիօվանիտի վախճանած էր թողլով մեծարժէք կալուած մը, թէ յիշեալ Ելէնի Բէթրօ Ճիօվանիտի, ըստ իր ամուսնական վկայագրին՝ ծնեալ Աթանասի Ֆիլիփու, Հելինէ Յակոբ Ալթունեանն էր, հարազատ քոյրը Թագուհին և համարիւն քոյրը այցելուիս :

Արդ, եթէ ըստ յիշեալ յօդուածին Յունաց Հիւպատոսարանը յօժարութիւն ցոյց տուած էր Ազգ. Առաջնորդարանին վերադարձնել հանգուցեալին շարժուն և անշարժ ինչքերը՝ երբ Թագուհին վկայագրով մը հաստատէր թէ հանգուցեալին քոյրն էր, չէի կրնար ըմբռնել թէ ինչո՞ւ յաճախորդս դժուարութեանց և արգելքներու պիտի հանդիպէր տիրանալու համար յիշեալ գոյքերուն, քանի որ ան ունէր պահանջուած ժառանգական բոլոր վկայագրերը։ Զէի կրնար յստակօրէն ըմբռնել նաև թէ, ի՞նչպէս։ Ըստ յիշեալ յօդուածին, Եզիպտոսի Առաջնորդարաններուն և Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան

Այս խորհրդածութիւնները կ'ամրացնէին հաւատքս  
յաճախորդիս ևնթագրութեանց ճշմարտութեան մասին՝  
որոնցմով ան կը պնդէր թէ երբ բարեգործական եֆենտի-  
ները իրենց ձեռքով շինած ու կնքած թագուհիին վերա-  
զրուած կտակը կը զրպանէին, թագուհին իմացած չէր իր  
քրոջ Հեղինէին մահը. և թէ, այդպիսով անոնց նպա-  
տակը եղած էր թագուհիին անխուսաբելիօրէն վաղահաս  
մահուան պարագային՝ կլլել անոր ապահովեալ իրաւունք-  
ները, առանց իրեն փոխանձուած ըլլալու, որ ատեն կա-  
րելի էր որ այլ այլապէս տրամադրեր դանոնք :

Յայտնի էր թէ Հայոց Պատրիարքաւան և Եղիպտոսի  
Առաջնորդարանները , ուր գժբախտաբար անպակաս չեն  
բարեգործական վարպետորդի եֆենտիներ , նշմարած էին  
հապճեսլով շինուած խարդախ կտակի մը անարժէքութիւնը ,  
և իրենց աններելի անպարտածանաչութեամբ և գնչու  
ձզձզումներով կուղէին դարմանել Եղիպտոսի Հայոց Բա-  
րեգործական Ըսդհ . Միութեան մշտնջենական նպաստըն-  
կալ այրացաւէր ամլորդի էզորձ զրազրին զործած gaffe՝  
որ փոխանակ նուիրատուութեան կտակ մը շինած էր :

Ամէն պարագայի մէջ. յաճախորդիս դէմ զործադրուած հետեւակ անարգ անիրաւութիւնները վերադրելով աւելի Ազգ. իշխանութեանց և Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան բիրտ տղիտութեան և աւանակացին ծուլութեան՝ քան անոնց գնչու անզգամութեան, իրեն հաւանութեամբ զործը կը յանձնէի պարկեցա ճանչցուած յոյն փաստաբան Մր. R.ի՝ դատարանի միջոցաւ, դժուարութեամբ և խոշոր ծախքերով կարգադրելու համար խնդիր մը՝ որուն այնքան գիւրին կարգադրութիւնը իրենք յայտարարած էին, մօտաւորապէս տարի մը առաջ, յիշեալ «Հեռածայն»ի մէջ:

Հակառակ իր խոստումներուն թէ զործը շուտով պիպի վերջացնէր, Մր. R. ամիսներով կը ձգձգէր զործը, և կը կարծուի թէ Մանթաշէֆի Ազեքսանդրիոյ բարեգործական կինտօն բոլորովին անտարբեր չէր այս ձգձգումներուն: Եւ երբ Մեծ պատերազմը վրայ կը հասնէր, փորը կշտացնելու համար յիշեալ փաստաբանը ինքզինքը փոլիթիքայի կը նուիրէր, ու խեղճ կնկան խնդիրը վերստին կը մնար առկախ:

Կրկնակի գիմումներուս վրայ Ազեքսանդրիոյ յոյն հիւպատոս S.ը հաւանութիւն ցոյց կուտար վարչականապէս կարգադրել խնդիրը: Անոր հաւանութիւնը ստիպմամբ իրականացնելու դիտումով, հակառակ Եզիպտոսի Ազգ. իշխանութեանց բացայայտ չարակամութեան և անզգամութեան, կը փափազէի աւելի զօրացնել յոյն հիւպատոսին ըրած դիմումներուս աղդեցութիւնը և այդ պատճառով կը գիմէի Հայոց Պատրիարքի Փոխանորդ, Ազգ. արժանապատութեան և հայ որբ և այրիներութուրքերէ պարտադրեալ պաշտպան Եզիպտոսի Առաջնորդ Թորգոմ Եալ. Գուշակեանին, յուսալով որ պիտի բարեհաճէր կատարել Առաջնորդի իր պարտականութիւնը և

ինքն ալ պիտի դիմէր, զոնէ մի անզամ, յոյն հիւպատոսին ինպաստ հայ այրիի մը :

Անոր աջ կողմը բազմած էր Աղեքսանդրիոյ հրեշտակագործ բժիշկը՝ որպէս Նախազահ Քաղ. Փողովոյ:

Դեռ այցելութեանս նպատակին բացատրութիւնները չէի ամբողջացուցած՝ երբ ծաղրելի շնչմանց և ընդունչսարկու քարթնչմանց սրբազներ կը բացազանչէր որպէս զօձակոչ և զորովայնախօս.

— Այդ ժառանգութիւնը Բարեգործականին կը պտականի :

— Թայց ինչո՞ւ, սրբազան, և ինչպէ՞ս :

— Թագուհին անոր կտակած չէ՞ զայն :

— Սրբաղան, դուք լաւ զիտէք թէ ինչպէ՞ս այդ կտակը մէջտեղ նետուած է, և առանց այդ մասին խօսելու, կը կարծեմ թէ կ'ընդունիք որ թագուհին զոնէ իրաւունք ունի վայելելու յիշեալ ժառանգութիւնը մինչև իր մահը, այնպէս չէ՞ սրբաղան :

— Հը, հը, հը :

— Եթէ յիշեալ ժառանգութիւնը Բարեգործականին պատկանած ըլլար, չէ՞ք կարծէր որ անոր վարիչները շատոնց հարկ եղած դիմումները ըրած պիտի ըլլային տիրանալու համար անոր, քանի որ, շնորհիւ Նուպար փաշայի զործը շատ հեշտ էր անոնց համար :

— Ատ ձեր զիտնալիք բանը չէ :

— Ի՞նչպէս իմ զիտնալիք բանը չէ սրբազան, և կը կարծեմ թէ զիտէք որ թալուհին անունով կը խօսիմ ձեզի, ինչպէս նաև զիտէք որ թագուհին շատ դիւրութեամբ կրնայ բոլորովին ոչնչացնել իրեն վերազրուած այդ կեղծ կտակը, նոր և ճշմարիտ կտակ մը պատրաստելով, այնպէս չէ՞ սրբազան :

— Կը տեսնեմ որ դուք փաստաբանի պէս կը խօսիք

ամմա, մենք ալ քրիստոնէավայել խղճմտանքով կուզենք զործ տեսնել:

— Բայց սրբազան, աղքատ կնկան մը ի նպաստ պարտադրեալ և օրինաւոր պաշտպանի միջամտութիւննիդ խնդրելով, ես չեմ կարծէր թէ քրիստոնավայել խղճմտանքի հակառակ զործ մը ըրած կ'ըլլամ:

— Ի՞նչ կ'ըսէք, աղքատ կնիկը անանկ զլխա՞րկ կը դնէ:

Այլեւս զինաթափ եղած էի:

Եւ որպէս զի ընթերցողը այս հայ Առաջնորդին գեղեցկազիտական պերճ ճաշակին վրայ դաղափար մը կազմէ, աւելորդ չեմ համարէր ըսել թէ, իմ խնդրանքիս վրայ հայ՝ քանիցս սնանկացեալ տօdiste մը նուիրած էր յիշեալ զլխարկը պառաւ յաճախորդիս, լոկ մազերը ծածկելու համար:

Հակառակ յուսահատութեանս՝ կ'ուզէի վերջին ճիգմալ ընել կարգի բերելու համար այս հայ Առաջնորդը, և դիւրացնել անոր պարտականութեան կատարումը:

Այս մտքով էր որ իրեն կը յայտնէի թէ յիշեալ ժառանգութիւնը կարծուածին չափ մեծարժէք ըլլալէ շատ հեռու էր, եղած չեղածը շէնք մ'էր որ հազիւ կ'արժէր 2000 ոսկի, երբ ան կը գոչէր այլայլած.

— Երկու հազար ոսկին քիչ չի փարա է, ախպա՞ր:

Զի զիտցուիր ո՛ր ծակէն ելած, բայց Արմաշի մէջ տարիներով «իզական, պակշոտական, շուայտական, պոռնկական, արուական, անասնական, զրաստական և զազանական խորհուրդներով և մասամբք նորին» սոսկ «մեղայ» հոլովող ընկեցիկ գնչորդին բոլորովին մերկ առջեւս կը կանգնէր:

Եւ ըսել թէ անոր առջև է որ կը խոստովանի անկեծդ հաւատացեալներու բազմութիւնը այնքան խոնար-

համար և երկիւղածութեամբ չզամենայն մեղս զոր զործեալ է, ո աղաղակելով. «Հայր Սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միածին որդին Աստուծոյ, զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեղ, ո և օրմալ, այդպիսի մէկը պիտի բազմի Լուսաւորիչներու, Ներսէսներու, Խաղերու և Սահակներու աթոռին վրայ, անհասանելի կամօքն Աստուծոյ ինքինքը հոչակելով Շպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի : »

Խեղճ Երրորդութիւն և ողորմելի հասարակութիւն . . .

— Բայց սրբաղան, քանի որ կը տեսնէք թէ յոյն հիւպատոսը կարեւորութիւն չուզէր տալ Հայոց Պատրիարքի ստորագրութիւնը և կնիքը կրոլ վկայազրին, պէտք չէ որ իբրև անոր փոխանորդը և իբրև պաշտպան ազգային արժանապատութեան ազդու կերպով միջամբտէք, եթէ ոչ պաշտպանելու համար հայ աղքատ այրիի մը իրաւունքը, զոնէ յարգել տալու համար Հայոց Պատրիարքին զրութեան անկեղծութիւնը :

— Անանկ է նէ Մալէղեանին հետ համաձայնեցէք :

— Սրբաղան, դուք շատ լաւ զիտէք որ Հայոց Պատրիարքի Փոխանորդին հետ է զործու, և ո՛չ թէ Եղիպտոսի Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան մէկ զործակատարին, կամ Մալէղեանի մը մէկ զործակցին հետ. և ես վստահ եմ թէ Ն. Վ. Նուպար փաշան խիստ պիտի բարկանայ երբ իմանայ, որ Բարեգործականին անունով իր փուշտիպանները այսպիսի քրդավայել անարդ անիրաւու-

թիւններ կը զործնն ի վեաս հայ այրիի մը և ի վեաս ազգին :

— Առ ձեր զիտնալիք բանը չէ, կը պատասխանէր «Դժուարածին յղի կնօջ, նորոգ ոափրելոյ զներս պատանոյն, աղ, մատաղ և ջրհօր օրհնելոյ» կանոններու(\*) պաճարամիտ գոռող, աներասան յանդուզն և դժոխային ժլատ այս Տօքրօր՝ որուն ամբողջ արժանիքը կայանալու է Նարեկացիին հետեւեալ խօռքերուն թաջումին մէջ. «Քանզի խաղալն ինքնաբերական զիւտք որովայնի՝ բուտուք ճապուկք շարժողականք և ազգի ազգիք, որդունք աղեաց գաղտնակուրք, խաղաւարտք հրակայծակք և բիծք բոցակետք և անիծք անկերպարանք և երամակք ոմանք քրտնածինք զազրաթորմիք կոկեցուցիչք և մարմաչողականք» : (\*\*)

Ահա՛, այս է անօք և աղքատ հայ կնկան մը ի նըպաստ հայ Առաջնորդի մը պաշտպանութիւնը խնդրելու համար ըրած դիմումիս անկեղծ և հաւատարիմ պատկերացումը :

Ընթերցողին կը թողում բաղդատութեան դնել այս հայ Առաջնորդին բարեպաշտական, զթասիրական, պարտաճանաչական և արդարասիրական զզացումները անբանօրէն, բայց անկեղծաբար «Լօխ լէ լօխ լօխ» մոմուցող Տիւրզի Տէտէի մը բարեպաշտական, զթասիրական, պարտաճանաչական և արդարասիրական զզացումներուն հետ՝ Անեղին սպասաւորի այս երկու տիպար նմոյշները իրարմէ զանազանելու համար :

Բայց մինչ այդ, հաստատելու համար թէ ձիշդէ որ

(\*) Տես Մատոց :

(\*\*) Մատեան Ողբերգութեան . Բան, Կթ. :

bon chien chasse de race, և Թորգոմ Եպ. Գուշակեանի քրիստոնէավայել զզացումներուն զարգացման չափը ցոյց տալու համար, աւելորդ չեմ նկատեր ընթերցողին առջեւ դնել անոր խիստ հնամեայ պասլերէն մէկուն զեղեցիկ պատկերը, ցուցադրելու համար անոնց իրարու հետ ունեցած այնքան հարազատ հարազատութիւնը :

«Այլ Յոհան եպիսկոպոս, որդի Փառինայ հայրապետի, հինաւուրց, եթէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս : Եւ էր սա այր կեղծաւոր, և երեւեցուցանէր ինքն զանձն իւր մարդկան պահող և խորզահանդերձս . մինչ զի մոյզս անզամ ոչ ազանէր, այլ զամառն հեսկով պատէր, և զձմեռն կեմով : Եւ յագահութեան առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր տալ զազահութիւն իւր ընդ երկիւլին Աստուծոյ . այնչափ ինչ, զի զիրս անարժանս և չհաւատալիս զործէր :»

«Զի էր երբեմն դիպեալ ի ճանապարհի ուրեմն, զի նստէր նա ի գրաստու վերայ և զայր. եկ դիպեցաւ սմաստար պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զզօտւոյ, աղեղնակապարճ զմիջովն . լուացեալ զհերս իւր, օծեալ մերձեալ, վարսակալ եղեալ ի զլուխ իւր, և օդիկ արկեալ զուսովք իւր, և գայր զճանապարհս իւր, թերեւս յաւազակութենէ : Իսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ հասակաւ, և էր զունաւոր, զնացող, մինչ զի ի բացէ սեսանէր եպիսկոպոսն Յոհան զծին, մեծապէս զարմացեալ՝ ակնկառոյց լինէր : Ապա իրբեւ եկն մերձեցաւ հեծեալն մօտ ի նա անդր . ապա սպասեալ Յոհաննու՝ բուռն հարկանէր զերասանակաց ձիոյն, և ասէր . էջ դու վաղվաղակի ի ձիոյ այտի, զի բանք են ինձ ընդ քեզ : Ասէ այրն. Զի ոչ դու զիս զիտես, և ոչ ես զքեզ, զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ : Մանաւանդ զի այրն արբեալ եւս դիպեցաւ, և շատ յա-

մառեաց այրն իջանել ի ձիոյն։ Ապա բռնադատեաց զնա Յոհան, իջոյց ի ձիոյ անտի։ և առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհն։ Եւ առնն խոնարհել հրամայէր և ասէր։ Զերիցութեան ձեռն դնեմ ի վերա։ քո։ Իսկ նա տայր պատասխանի ղանձնէն, եթէ այր աւաղակ սպանող չարագործ և խառնագնաց լեալ ի մանկութենէ իմմէ, ևս ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց։ և այժմ դեռ ի նմին գործ կամ։ Եւ շատ ի վէզ եկեալ յամառէր այրն, և նա ևս չար քան զնա։ Ապա բռնաբար զզետնեալ զայրն, դնէր Յոհան զձեռն իւր՝ առնել զնա երէց։ և յարուցեալ հրամայէր լուծանել զհանգոյցս մեկնոցին, և արկանել նմա աղարողոն։ Եւ ասէր. Երթ ի զիւղ քո, և Միջիր դու անդ երէց զեղջն՝ ուստի ես։ Եւ անզամ ոչ զիտէր զայրն թէ յորմէ զեղջէ իցէ։ Ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն, և ասէր. Այս ինձ կօշիկք Միջին, փոխանակ զի երէց արարի զքեզ։ Իսկ այրն յամառեալ ի վերայ ձիոյն չառնոյր յանձն տալ. ապա բռնաբար յինքն հանեալ զձին, և զայրն արձակեաց։ Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն։»

«Ապա այրն թէ ոչ կամօք՝ աղէբողոն արկեալ, զնայր ի տուն իւր, և երթեալ մտանէր ի մէջ ընտանեաց իւրոց։ Ասէ ցկին իւր և ցընդանիս. Արիք յաղօթս կամք։ Եւ նոքա ասեն. Մոլիս դու, գեւ ուրեմն հարաւ ի քեզ։ Իսկ նա ասէ. Արիք կամք յաղօթս, վասն զի երէց եմ։ Իսկ նոքա զարմացեալ. մերթ չիկնէին, մերթ ծիծալէին. մինչև բազում անզամ յամառեալք, ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա։ Ապա ասէ կինն ցայրն իւր. Ո՞չ դու երեխայ էիր, և չէիր մկրտեալ։ Ասէ այրն ցկինն իւր. Ապշեցոյց, չետ յիշել, և ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա. զիս երէց արար, և զձին սանձաւ թամբաւ առ և անց։ Եւ ասեն ցայրն ընդանիքն իւր. Յարիցես անդրէն զնաս Հայութիններ

ցես առ եպիսկոպոսն, և ասասցես. Մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց: Իսկ նորա յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա. Ես մկրտեալ չէի, զի՞ արարեր դիս երէց: Եւ ասէ Յոհանն. Սափորով միով ջուր բերէք: Եւ առեալ զջուրն էարկ զզլիսով նորա, և ասէ. Երթ, մկրտեցի զքեզ: Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ: »

\* \* \*

«Սոյն Յոհանն եպիսկոպոս, որդի Փառինայ, յորժամ երթայր առ թագաւորն Հայոց, խաղակատակ լինէր նոցա. որպէս խաղալովս զանձն իւր կրթէր յազահութեան, որում ծարաւեալ պասքեալ փափաքէր, սակայն միհանէսք այն էին նորա: Ի չորք անկեալ յոտս և ի ձեռու՝ ոողէր առաջի թագաւորացն, և զուզտու զձայն ածէր կառաչելով, զօրէն ուղտու այնպէս փարելով: Ընդ կառաչելն ապա մի մի բան խառնելով առնէր ի ձայն կառաչելոյն, ասելով՝ թէ ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս բառնամ: Դիք ի վերայ իմ զմեղս արքայի, թող բառնամ: Իսկ թագաւորքն զմուրհտկս զիւղաց կամ զազարակաց զրեալ և կնքեալ՝ դնէին ի վերայ ողինն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և ի թագաւորացն Հայոց ստացաւ իւր գիւղս և ազարակս և զանձս յուղտն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն: Այսպիսի էր այրս Յոհաննս կապեալ յըռժգութեան և յազահութեան զամենայն աւուրս կենաց իւրոց: զայսպիսի զործս գործէր վասն ազահութեան, որ չէր արժան: » (\*)

(\*) Բուզանդարան Պատմ. Գալ. Զ. Գլ. Ը. Եւ Ժ. :

# ԳԼՈՒԽ Դ.

## ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Ք

---

**Անհամար հաւատարիմ ծառաներէն՝ որոնց կը պարտին Արշակունիք իրենց փառքին և զօրութեան մեծագոյն բաժինը և որոնցմով ինքզինքնին իրաւամբ այնքան հպարտ զգացած են, մասնաւորաբար վեր կը բարձրանան կամսարականք՝ հաւասարապէս որպէս ամբիծ հայրենասէրներ, հերոսներ, և որպէս խղճամիտ, բանիբուն և խոհեմ պետական մարդիկ :**

**Բոլորովին աւելորդ պիտի ըլլար ներբողն ընել Տէրերուն՝ զորս մեր նուիրական պատմազիրներու վկայութեանց բացարձակ համաձայնութիւնը առաջինները դասած է, և որոնք կը հանգչին մեր անցեալ մեծութեան կշտին այնքան ուշագրաւ և այնքան փառապանծ :**

**Հոգւով և սրտով փարեցան զիրենք որդեգրող հայրենիքին՝ որուն սիրոյն, սկիզբէն մինչեւ վերջը, հակառակ բախտին բոլոր յեղաշրջումներուն և հակառակ բոլոր սպառնացող վտանգներուն, իրենց զզացումները և համոզումները մնացին հաւատարիմ առանց կքումի, առանց զիջողութեան և մանաւանդ առանց ո և է ամենադոյզն լքումի հետքի :**

**Որչա՞փ կը զերազանցեն անոնք նոյն իսկ Մամիկոնիանները . . .**

**Բայց ո՞վ զնած է իրեն համբաւը այնքան զարհուրելի և անիրաւ զոհողութիւններով՝ ինչպէս անոնք իրենց մեծութիւնը :**

Հայ Տանուտէրերու ամէնէն վսեմներն են անոնք իրենց մաքուր և զեհ նկարագրով զորս պատմութիւնը մեզի աւանդած ըլլայ :

Երբ մարդ անոնց վարք ու բարքին կը հետեւի Բուղանդացիի, Փարագեցիի, Եղիշէի և Խորենացիի պատմութեանց մէջ, փոխադրուելով անոնց ապրած դարերու, վայրերու և պարագաներու մէջ, յստակօրէն կը տեսնէթէ ի՞նչպէս նոյն իսկ դաժան բախտին սոսկալի հարուածները երբեք չեն յաջողած բաժնել զանոնք իրենց սիրած հայրենիքէն, նուազեցնելով անոնց անարատ սէրը և յուսալից զզացումները անոր հանդէպ :

Հստ մեր Խորենացիի՝ Արշակի և Վաղարշակի արիւնակից այս մեծ աղզի<sup>(\*)</sup> նախնին կամսար, իր հօր Պերոզամատի նման ենթարկուած ըլլալով պարսիկ թազաւորներու նենգադաւութեանց, (\*\*)<sup>(\*\*)</sup> իր ամբողջ ընտանիքով կ'ապաստանէր մեր Տրդատ արքայի քով<sup>(\*\*\*)</sup> պարսից Շապուհ թազաւորին վրայ արշաւած միջոցին :

Հաւատքին՝ զոր ընդունեցին մկրտուելով ի ձեռն Մեծին Գրիգորի, և հայրենիքին՝ որուն որդեգրուեցան այդ առիթիւ, մնացին հաւատարիմ և անվեհեր պահապանները մինչև իրենց կեանքի վերջին օրերը :

Միայն իրենց ապերախտ բնիկ երկրին յիշատակը անոնց մաքէն հեռացնելու՝ կամ իրենց ընդգրկած նոր հաւատքը անվրդով պահելու համար չէր որ Տրդատ արքան անոնց կը նուիրէր Երուանդակերաը ամբողջ Շիրակայ և

(\*) Խորենացի, Պատմ. Հայոց, Բ. Գիրք, ին. :

(\*\*) „ „ „ „ „ ՀԳ. :

(\*\*\*) „ „ „ „ „ ԶԷ. :

Երասխածոր զաւառներով, (\*) այլ այդ արքայավայել նուէրով ան կ'ուղէր յայտնել միեւնոյն ատեն սէրը, յարզանքը և վստահութիւնը զոր ունէր իր մտերիմ և հարազատ ազգականներուն, անոնց այնքան բարձր կագողութեան և զգացումներուն անկեղծութեան հանդէպ :

Որպէս զի ընթերցովը զաղափար մը կաղմէ Երուանդակերտի աննման գեղեցկութեան մասին՝ անոր նկարագրութիւնը կը թողում Խորենացիին. «Բաղցը է ինձ ասել և յաղագս դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք : Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբք և պայծառ շինուածովք, լուսանոտ որպէս ական բիբ. իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբրովն զայլ բոլորակութիւն ական. Իսկ զբազմութիւն այգեստանւոյ, իբր զարտեւանաց իսիտ և գեղեցիկ ծիր, որոյ հիւսիսային կողմանն գիր կարակնածեւ՝ արդարեւ գեղաւոր կուսից յօնեց դարեւանդաց համեմատ. Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց, ծնօտից պարզութեան գեղեցկութիւն. Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթեան նշանակէ շրթունս : Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն զոզցես ի բարձրաւանդակթագաւորանիստն զհայեցուածսն ունի. և արդարեւ բերրի և թագաւորական դաստակերտ : » (\*\*)

Իսկ եթէ հոս աւելցնեմ նաև նուիրականութիւնը Շիրակայ Աղձք զիւղի, «որ կայն ի խինձս ի զոզս ի ծոցս յանձուկս ի դժուարս լերինն մեծի, զոր Արազածն կո-

(\*) Խորենացի, Պատմ. Հայոց, Բ. Գիրք, Ղ. :

(\*\*) „ „ „ „ ԽԲ. :

չեն» (\* ) ուր վերստին թաղուած կան Արշակունի արքաներու տճիւնները , ընթերցողը ինքնին պիտի ըմբռնէ Տէրերուն և աշխարհին իրարու վեհ արժանաւորութիւնը :

Հայ նախարարներու շարքին մէջ դասաւորուելնէն սկսեալ՝ շարունակ , իրենց ամբողջ կորովովը պաշտպանած են հայրենիքին ազատութիւնը ներքին և արտաքին թշնամիներու դէմ , պետական մարդու իրենց իմաստութեամբ նպաստած անոր խաղաղ զարգացման , և իրենց անրիծ առաքինութեամբ նախանձելի օրինակներ հանդիսացած հին և նոր սերունդներու :

Անդովկ Սիւնեաց իշխանին հետ զօրավար Արշաւիր կամսարականի էր որ Խոսրով թ . և Վրթանէս եպիսկոպոսապետը կը յանձնէին Մեծն Վաչէի Արտաւաղդ պատանւոյն դաստիարակութիւնը , «զի կացցէ ի տեղի նախնեացն իւրոց և հօր իւրոյ , և զործ քաջութեան զործեսցէ ամենատեառն Քրիստոսի , և առաջի իւրոյ մարմնաւոր նախատերանց Արշակունեաց քաջ արանց , և տան և կենաց , և խնամակալ լիցի այրեաց և որբոց և զնորուն զործ քաջութեան սպարապետութեան անուանի զօրավարութեանն յաջորդեսցէ զամենայն աւուրս կենաց իւրոց : » (\*\* )

---

(\*) Բուզանդարան Պատմ. , Դպր. Դ. , Գլ. Ի՞Ռ. : Ո՞վ Մեծդ Բուզանդացի , որչափ կ'արգահատիս եւ կը ցաւիս արդեօֆ հայ բանասերներու ողորմելիութեան վրայ՝ որոնք զիեզ կ'անուանեն «հայատեաց , լիրք , երազապատում եւայլն» , երբ միայն այս կէս խօսքդ պիտի բաւեր ցոյց տալ գրութիւններուդ բացարձակ անկեղծութեան եւ նըւմարտութեան հետ , քու աննման հայ հայրենասիրութիւնը :

(\*\*) Բուզանդարան Պատմ. Դպր. Գ. Գլ. ԺԱ. :

Հա՞րկ էր երկրին խնամակալ մը, կամ կարգադրել կարեւոր խնդիրներ դրացի պետութեանց հետ, միշտ և առանց ու է ընդդիմութեան անոնցմէ մէկուն էր որ կը յանձնուէին այդպիսի փափուկ և պատասխանառու պաշտօններ, որպէս զլխաւորի և յոյժ պատուականի յետ արքայի : » (\*)

Որպէս անբասիր հայրենասէրներ և որպէս ճշմարիտ քրիստոնեաներ բնականաբար անոնք չպիտի հանդուրժէին Արշակաւանի գոյութեան՝ որով Արշակ Բ. ուղած էր մրճոտել իրենց հայրենիքը: Եւ խուժդուժ պատիժը՝ որուն ենթարկուեցան, ինքնին ցոյց կուտայ այն մեծ դերը զոր ունեցած էին անոր քանդումին մէջ: Եւ կոտորեաց զբազումս ի նախարարացն, մանաւանդ զազգս կամսարականաց բառնայր ի միջոյ: Հարակնելով ազահեալ յամուրն Արտագերս և ի քաղաք ոստանի նոցա Երուանդաշատ: Եւ կոչեալ առ ինքն ի լքեալ արքունիսն Արմաւիր՝ իբր զազգական իւր, ի պատճառ պատւոյ մեծարանաց, միահաղոյն զարս և զկանայս հանդերձ մանկամբք հրամայեաց կոտորել: » (\*\*): Եւ աւելին. « Եւ եղեի սատակել զազգս կամսարականաց, հրամայեաց զդիակունս նոցա քարշել ընկենուլ անթաղ՝ կերակուր լինել շանց, և ինքն որպէս մեծաւ յաղթութեամբ պսակեալ, ի բարեկենդանի կատարեր աւուրս, կուտել մթերել յԱրմաւիր զնոցայն հրամայելով զհամբարսն: Զորոց պեղեալ երկուս խորս յոյժ քաջախորս և սաստկապէս լայնս, որ

(\*) Խորենացի, Պատմ. Հայոց, Գ. Գիրք, Ժ. : Բուզանդարան Պատմ. Գ. Դպր. Գլ. ԽԱ. :

(\*\*) Խորենացի, Պատմ. Հայոց, Գ. Գիրք, ԼԱ. : Բուզանդարան Պատմ. Գ. Դպր. Գլ. ԺԹ. :

ի շինին Նախճաւանի, բերին սայլովք նոցին աւանին, իսկ սայլորդացն տեսեալ ուկերս մարդկան զազանակուր եղելոց՝ ցրուեալս առ եզերբ փոսոյն, հարցեալ ուսան՝ իւրեանց լինել աերանց. հաւաքեալ ի սայլսն ներքոյ եղեգանն, բերեալ թաղեցին ի նոյն խորս։ Զոր զզացեալ Արշակայ, հրամայէ զսայլորդսն ի վերայ խորոյն կախել զիայտէ։ » (\*)

Հայրենիքին և նոյն իսկ իրենց ազգատչին որդւոց մեծ բարեբախտութեան համար՝ զօրավար Վասակ Մամիկոնեանի շնորհիւ այդ զարհուրելի կոտորածէն ճողովրած էր մին՝ Սպանդարատ, (\*\*) որ Զիրաւ դաշտի վրայ պարսից դէմ մղած կոիւին մէջ իր աննման հերոսութեամբ պիտի փոխարինէր իր նախնիքներուն դէմ զործուած քստմելի ոճիրին, ապացուցանելու համար իր անսասան հաւատարմութիւնը անոնց ուխտին. ա իսկ ի ծագել արեգականն ընդդէմ մերոց զօրացն, ի պղնձապատ վահանաց նշոյլք զլերամբքն փայլատակէին իբրև յամպոյ մեծէ, և ի նոցանէ ի դուրս ոստչէին ի մերոց նախարարացն քաջ զրահաւորք՝ որպէս փայլատականց ճառագայթք, յորոց միայն ի տեսութենէն զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ մերն՝ վասն ոչ կարել հայել ընդդէմ արեգակականն ծագման. իսկ ի բախսելն զմիմիանս՝ եղել ի վերայ հովանի ամպոյ, և հողմ սաստիկ ի մերոցն կուսէ ընդդէմ պարսկականին փչեալ. եւ ի խառնակել մարտին՝ պատահէ կամսարականն Սպանդարատ խմբի մեծի, յորում էր քաջն Շէրզիր Ղեկաց արքայ, զզլուխ միջի զնդին պնդութեամբ զտեղի ճակատուն կալեալ եւ յար-

(\*) Խորենացի, Պատմ. Հայոց, Գ. Գիրք, լ. Բ. :

(\*\*) Բուզանդարան Պատմ. Դ. Գայր. Գլ. ԺԹ. :

Ճակեալ Սպանդարյան, և հերձեալ զխումբն, որպէս շանթահար յերկիր կործանէր զքաջն, և զխումբն պտուտեալ ի փախուստ դարձուցանէր։ » (\*)

Դարձեալ, երբ Արշակունեաց վատասերմամբ հայրենիքը կը բաժնուէր երկուքի՝ յոյն և պարսիկ հովանառութիւններով, անոնցմէ մին էր. Գաղաւոն, Սպանդարյատի որդին, որ ոչ միայն կը նախընտրէր կորսնցնել իր ամբողջ հարստութիւնը և ապրիլ որպէս քրիստոնեայ՝ քան կրել հեթանոսի մը հովանառութիւնը, թէե փառքով և զօրութեամբ, այլ նաև այդ առթիւ արեւելեան և արեւմտեան Հայաստաններու մէջ տեղի ունեցած եղբայրասպան կոիւին մէջ հիանալի քաջութեամբ կը փրկէր իր նախնեաց ազգատշին թոռը, ինչպէս կը պատմէ Խորենացին. «Եւ պատահեն միմիանց ի դաշտին՝ որ կոչի Երեւել, և տան պատերազմ ընդ միմիանս սաստիկ յոյժ՝ Հարկանի զօրն Արշակայ, մեռանի և սպարապետն նորա Դարա Սիւնի ի պատերազմին, և փախստական լինի Արշակ սակաւուք։ Եւ զհետ նորա մտեալ քաջին Սահակայ ասպետի, սպարապետին Խոսրովայ, վարէր սաստկտպէս։ Որ այն օր ահազին նահատակսւթիւնս ցուցեալ Գաղառնի՝ որդւոյ Սպանդարյատայ, բազում անզամ դարձեալ յարձակմամբ՝ ցրուէ զհետամուտսն, և տայր պարապժամ գնալոյ Արշակայ։ » (\*\*)

Հակառակ ասոր, երբ Արշակն մահուամբ արեւմտեան Հայաստանը բոլորովին Յոյներուտիրապետութեան տակ կ'անցնէր, բնակ տիրոջ մը ծառայելու փափաքը յայտնող իր մէկ դիմումին վրայ՝ նոյի Խոսրովը չէր վարանէր ընդունիլ անոր առաջարկը աւել-

(\*) Խորենացի, Պատմ. Հայոց, Գ. Գիրք, Լ. Ե. :

(\*\*) „ „ „ „ „ „ Խ. Ե. :

ցընելով. «Եւ զքեզ, Գաղաւոն, արիւն իմ և հարազատութիւն, ոչ ըստ վաղնջուց ազգականութեանն, այլ ըստ արդեանս»՝ որ ի մօրմէ քումմէ Արշանուշայ Արշակունոյ, հանեալ զքեզ ի հայրենեաց քոց Կամոարականաց, և ի մայրենիս քո յիմս առեալ ազգ, Արշակունի անուամբ պատուեցից : » (\*) Ու շատ չանցած, հայ նախարարներու դաւաճանութեամբ անոր հետ միասին Անյոյշ բերդը զերի կը դրկուէր. իրենց փրկութեան յանդունզն մէկ փորձին զոհ տալով իր եղբայրը Շաւարչ : (\*\*)

Ըստ Եղիշէի և Փարպեցիի վկայութեանց, մեր կրօնական պատերազմներու ամրող տեւողութեանը, իրենց Արշաւիրներով, Թաթերով, Վարձերով, Ներսեհներով, Աշոտներով, Հրահատներով, Համազասպներով և վահաններով անոնք եղած են Վարդանի աջ բազուկը «որպէս մուրճ հզօր ընդդէմ թշնամեաց», զոհելով կին, երեխայ, և տուն ու տեղ, անարատ սլահելու համար հայրենիքին պատիւը :

«Բանին սրբոյ զօրավարին որպէս միշտ կամակատար» (†) ըլլալէ յետոյ՝ դարձեալ Արշաւիր կամսարականն էր, որ և յառաջ մատուցեալ աներկիւղաբար սկսէր խօսել առաջի թագաւորին և ամենայն աւագանւոյն» (§) արդարացնելով Վարդանանք և ստիլելով Յազկերտ հրաման տալ անդէն զառաջեաւ կողոպտել ի Վասակէ թշնամանք զամենայն պատիւն զոր ունէր, և ձաղեալ զնապայկացն՝ մերկացնել զնա, մերկացուցեալ ի նմանէ

(\*) Խորենացի, Պատմ. Հայոց, Գ. Գիրք, ԽԸ.:

(\*\*) „ „ „ „ „ Յ.:

(†) Ղազար Փարպեցի, Պատմ. Հայոց, Բ. Դրուակ, ԼԸ.:

(§) „ „ „ „ „ ԽԸ.:

զգարգարանս պատուոյ տէրութեանն , հանել զնա խայտառականօք արտաքս քան զիրապարակն արքունի , » (\*) որպէս զի Շնենգաւորն Վասակ կացեալ ի զրանն ամս , ինչ կարի վշտագին և նեղութեամբ բազմաւ , մաշէր զաւուրս իւր հառաջելով և յոզւոց հանելով զամենայն օր և զժամ , մինչև թշնամանակերպ ձաղանօք սփոեալ զթաթս ձեռաց իւրոց՝ ինքնին զիւրոյին ծեծէր զգէմսն , ասելով . Ահա ընկալ զայս ձաղսս զոր ետ բերել քեզ ուխտանենգութիւն սրբոյ աւետարանին և արիւն նահատակութեան սրբոյն Վարդանայ Մամիկոնէի և այլոցն ցանկալի հազորդելոցն ընդ նմա , որոց ժառանգեալ զյաւիտենից կեանսն՝ ընկալան զանուն բարի շերկրի և անանց յազգաց յազգս իւրեանց . իսկ դու , մեղաւոր անձն իմ , կեաս խղճիւ և ցաւօք մտաց զսակաւաթիւ զաւուրս կենցազոյս և պատրաստեալ պահիս մշտնջինաւոր և անանց զեհենին . » (\*\*)

Այն բոշուպ սրերուն հա՞րկ էր անմիջապէս զինուզօրութեամբ և վատահօրէն կասեցնել թշնամոյն յանկարծակի յարձակումները , հայ իշխանները չէին վարանիր իրենց մեծ կամ փոքր ուժերը երկու մասի բաժնել , և ընդմէջ երկոցունց մասանցն՝ զքաջսն և զընտիրսն զիշխանն Շիրակայ պատրաստական յօրինել , որ յամենայն կողմանց ոյժ լինիցին . քանզի ամենեքեան վստահ էին ի յարսն՝ որպէս ի լաւսն և յարդարսն յուխապահսն : » (†) Իսկ եթէ պատահէր որ թշնամոյն բուռն յարձակումներէն հայ ուժերուն այս կամ այն թեւը շփոթութեան ենթար-

(\*) Ղազար Փարպեցի, Պատմ. Հայոց, Բ. Դրուակ, ԽԶ.:

(\*\*) „ „ „ „ „ „ „ ԽԶ.:

(†) „ „ „ „ „ „ „ Գ. Դրուակ, ԿԹ.:

կուէր, անվեհեր կամսարականներուն կը մնար «յարձակել ի վերայ հասելոց սոցա թշնամեացն, և ոչինչ բնաւտեւեալ կալ առաջի, այլ շարժեալ սաստկապէս զկողմն իւրեանց ի փախուստ դարձուցանէին. և առեալ զթեւն զայն՝ արկանէին զմիւս եւս թեւովն զմիջոցի կողմանն, և արկեալ առաջի զկողմանցն երկոցունց զգունդոն, անթիւ բազմութիւն արանց քաջաց ի փոքր լանջակողմանն ուրաթաւալ զերկիր կործանէին. և սաստիկ արեանց հանէին ճապաղիս ։ (\*)

Անոնց կիներուն, որպէս հայ մայրերու, առաքինութեան և ճշմարիտ զգացումներուն մասին զաղափար մը ունենալու համար կը բաւէ յիշել հայ պատմազրին հետեւեալ վկայութիւնը. «Իսկ Շապհոյ տարեալ զկանայս կամսարականացն յամուր բերդն Բասենոյ, զոր Բողբերդն կոչեն, անդ թողոյր. և յանձն արարեալ Ցըզատ-Վշնասպայ բերդակալի զկանայս կամսարականաց, պատուիլէր նմա բազում զգուշութեամբ պահել ըստ օրինացն քրիստոնէից զնոսա՝ սրբութեամբ: Քանզի կանայքն իսկ կամսարականացն զնոյն ասէին բազում անզամ համարձակապէս բողոքով. թէ զարսն մեր արդարեւ կամիքնուածել, զայդ եւեթ տուք լսել նոցա՝ թէ մեք խաղաղութեամբ եմք. ապա զոր ինչ հրամայէք նոցա՝ լսեն և կատարեն: Քանզի ամենայն հայոց զիտելով ասեմք զայս. և վկայեն որ աստ առ ձեզ հայ մարդիկ են, զի քան զմեղ զայլ կին նոքա ոչ զիտեն. ապա թէ այլ ինչ լսեն վասն մեր, ի նախատանաց իսկ և յամօթսց, թող ի մեղաց և ի զարշութենէ՝ ըստ մերոց օրինացն, առաւելդնեն զանձինս ի մահ, կորնչին: ։ (\*\*)

(\*) Փարպեցի, Պատմ. Հայոց, Գ. Դրուակ, ՀԱ. :

(\*\*) „ „ „ „ „ Զ. :

**Զեմ ուզեր վերջացնել Շիրակայ Տէրերուն այս խիստ համառօտ նկարագրութիւնը առանց հոս դնելու անոնց նուիրական հանգանակը՝ որուն դարերով հաւատարիմ մնացին անոնք՝ և զոր անոնցմէ մին, կոիւներումէջ յառաջացած իր պատկառելի տարիքին մէջ այնքան համեստօրէն հաղորդած է իր որդւոյն՝ ի զիտութիւն ապագայ սերունդներու :**

«Որդեա՛կ, մի՛ վասն զի ի մեծութեան ես՝ պատրիս ի մեղաց. և մի՛ վասն զի մանկիկ ես՝ խարիր ի զեղ կանանց. այլ յիշեա՛ զքո հարսն, որքան սրբութեամբ և անբծութեամբ ծառայեցին Աստուծոյ : Մի՛ մոռանար զծառայութիւն սրբոյ կարապետին, զի ի պատերազմունս նոէր՝ որ օգնէր մեզ. այլ եթէ շատակեաց կամիս լինել, ի պղծութենէ մի պատրիր, որպէս և չես իսկ: Եւ եթէ ես մեռանիմ ի պատերազմին, զիս ի մեր վաճան տուր տանիլ: Եւ դու ծառայեա Աստուծոյ և կրօնաւորաց նորասրբութեամբ, որպէս և ես ծառայեցի, զի ոչ պատրեցայ ի զեղոյ, և ոչ զրկեցի և ոչ նեղեցի զտառապեալս. քանզի զամենեսեան որք ընդ իմով իշխանութեամբ էին, զարս և զկանայս և զմանկտիս, զհաւատացեալս ի Քրիստոս, իբրև զեղբարս և զընտանիս տան իմոյ հոգայի խնամով որպէս հարքն իմ: Որդեա՛կ, զնոյն և դու արասցես, և Տէր զօրացուսցէ զքեզ: Արդ, զնամք ի պատերազմ: » (\*)



(\*) Պատմութիւն Տարօնոյ, Յովհաննու Մամիկոնէի եպիսկոպոսի, պատճեն՝ հինգերորդ:



# ԳԼՈՒԽ Ե.

## ՀԱՅՈՒՏԻՑ ԱԶԱՏՈՐԴԻՆ

Աղանազգի կամսարականաց այնքան չքեղ անցեալի  
կողքին յենած մէկը չէր կրնար չի հետաքրքրուիլ հայ  
այրիի մը դժբախտութեամբ, կամ անտարբեր մնալ ա-  
նոր դէմ զործուած զզուելի անիրաւութեանց հանդէպ :  
Ռւստի, բոլորովին վստահ ըլլալով որ Արմենակ էֆ .  
կամսարականը, իբրև Նախազահ Աղեքսանդրիոյ հայ հա-  
սարակութեան և Եղիպտոսի Հայոց Բարեգործական Ընդհ .  
Միութեան Աղեքսանդրիոյ մասնաճիւղին, հաւատարիմ  
իր նախնեաց հանգանակին՝ իսկոյն պիտի ստիպէր Եղիպ-  
տոսի Հայոց Առաջնորդ Թորգոմ Եղիսկ. Գուշակեանը  
կատարել թուրքերէ պարտադրեալ հայերու պաշտպանի  
իր պարտականութիւնը, և խորհուրդ տալ միեւնոյն ա-  
տեն յիշեալ Բարեգործական Միութեան վարիչ Էֆենտի-  
ներուն դադրեցնել իրենց կողոպուտի գործառնութիւն-  
ները ի վնաս հայ այրիի մը. խորհուրդ կուտայի իսեղձ  
կնկան անոր դիմել իր ցաւը հասկցնելու համար, աւել-  
ցընելով որ՝ ան ազնիւ մարդ էր, երբ խնդիրը հասկնար,  
իսկոյն հարկ եղածը պիտի ընէր օգտակար ըլլալու հա-  
մար իրեն :

Մեծ պատերազմի ելքի մասին խոր մտածումներու  
յանձնած ինքզինքս՝ չէի կրնար զիտնալ թէ որչափ ա-  
տեն անցած էր, երբ կինը շանթի պէս ներս վազելով  
զիս կ'սթափէր երեսիս պոռալով .

— Կ'աղաչեմ, Պարո՞ն, Էլլեմի՞ւ կ'ըլլաք կոր հետո  
— Ինչո՞ւ, Տիկին, ի՞նչ ըսել կ'ուզէք :

— Քանի որ մարդը լաւ չէիք ճանչնար, ինչու զիս  
իրեն զրկեցիք. ձեզի ոլէս փաստաբանի մը ներելի՞ է ան-  
ծանօթ մէկու մը բարի, ազնիւ ածականներ տալ:

— Տիկին, չեմ կարծէր որ սխալած ըլլամ՝ ձեզ Ար-  
մենակ էֆ. Կամսարականին զրկելով որպէս բարի և աղ-  
նիւ հայու մը:

— Պակսին այդպիսի ազնիւ հայեր . . .

— Բայց ինչու, Տիկին:

— Մենք կը կարծէինք թէ մէջերնէն ամէնէն ծակ-  
աչքը Մալէղեանն էր, բայց այս մարդը անկից աւելի  
պէրպատ է եղէր ու գեռ խապար չունինք:

— Ինչու, ի՞նչ ըսաւ ձեզի:

— Հազիւ հասկցած էր այցելութեանս նպատակը՝ երբ  
լոեցուց զիս ըսելով, ոԵթէ կ'ընդունիս որ երկու սիրեկը  
մեզի ըլլայ և երկուքն ալ քեզի՝ լաւ, ասկա թէ ոչ Ազ-  
գային իշխանութիւնները բնաւ չի պիտի օդնեն քեզի, «  
մինչդեռ Մալէղեանը՝ որ խեղճ ու անկար է և այս տաք  
երկրին մէջ միիթարութեան այնքան կարօտ կին ու քոյր  
ունի, երեքէն մէկովը կ'ուզէր գոհանալ զործերնիս կար-  
գադրելու համար»:

— Բայց Տիկին, ներեցէք, եթէ հակառակ փաստա-  
բան ըլլալուս լաւ չեմ հասկնար այդ խօսքը. ի՞նչ  
կը նշանակէ «երկու սիրեկը մեղի՝ երկուքը քեզի»:

— Զարմանալի բան. աս ի՞նչ տեսակ փաստաբան  
էք, եթէ դուք չէք հասկնար, հապա ո՞վ պիտի հասկնայ.  
ատով ըսել ուզեց թէ, պէտք է որ տանը կէսը իրենց  
տամ՝ որպէս զի մնացեալ կէսը մեզի թողուն:

Ինձի հետ ընթերցողն ալ կը տեսնէ յուսախարու-  
թեանս ահազնութիւնը: Միթէ հարկ եղած խնամքով  
խղճմաօրէն չէի՞ ուսումնասիրած կամսարականները: Բայց

ինչպէս ներել ինձի՝ որ իրքի փորձառու փաստաբան կ'անզիտանայի հայ իրաւաբանական լիզուին կարեւոր նրբութիւններէն մին:

Ճիշդ է որ լսուծ էի թէ Ժէնէրալ Կամսարականը հասնողին կ'ըսէ եղէր. «Եղբա՛յր, ես ինքո եմ ամաչում, է՛լի, ես որանց հետ ո՛չ մի ազգականութիւն չունեմ, բայց սրանք զիս իրենց հօրեղբայրն են անուանում, սակայն, վերազրելով Ժեներալին անզիտակցութիւնը զանոնք իրարմէ զատող սոսկալի մըրիկներու, զարձեալ կը յուսայի թէ, չատ չանցած, Զարը ուժազով մը պիտի վաւերացնէր անոնց Կամսարականութիւնը, և չնորհիւ իր հարստութեան, մեր Արմենակ էֆ.ն պիտի տիրանար Շիրակայ և Արշարունեաց երկիրներու զո՞նէ մէկ պատկառելի մասին, վերսկսելու համար իր փառապանծ նախնեաց կեանքը:

Միթէ ինքն ալ չունէ՞ր անոնցմէ մէկուն պէս իր Ղազարը, «որոպէս սննդակից և խաղակից կը ելով ի խաղի զարկանելին իւր զկնի իւր:» (\*) Հասկա որո՞ւ կը պարտէր եղիպտահայ զրականութիւնը հետեւեալ զանձերը. «Քա՛ ոտքդ պազնեմ, առ ի՞նչ ուղուրսուզ մարդ է եղեր. քա աս ո՞վ կըլլայ քի ան էֆէնտիին չի հաւնիր. քա եավրում, դո՞ւն ըսէ, կը վայելէ. քա ան էֆէնտին արշընը օխթը ոսկինոց ֆիստանցու կ'առնէ կնկանը որ ասանկ խօսքե՞ր լսէ. քա հիմա փաթլամիշ պիտի ըլլամ, քա աման, կը ճաթիմ կոր. քա ոտքդ պազնեմ քիչ մը ճուր, հոգիս ելաւ, ամա՞ն, ամա՞ն, ա...մա՞ն...» եթէ ոչ Մօրուք, կամ Միրիւք — ինչպէս կ'ըսեն մեր ազատ եղբայրները — Հանըմի ճժոյն՝ որ լոկ իր մամաին այս

(\*) Փարպեցի, Մեղադրութիւն սախօս Աբեղայից:  
Հայութիններ

կարգի բացազանչութիւնները արձանագրելով ականակուող զրագէտի մը համբաւին տիրացած էր :

Բայց ակամայ կ'ընդունէի թէ հայ կնոջ մը հանդէպ Արմենակ էֆ. կամսարականի ցուցադրած անզզամական և իրաւաղրկական զզացումները շատ կը հեռացնէին զինքը կամսարականներէն, մանաւանդ որ անոնց այնքան մաքուր շնորհքներով լուսաւորուած կը տեսնենք նոյն իսկ իրենց սպասաւորները.

«Եւ տեսեալ Խուրսայ, որ էր ի զաւառէն Արշամունեաց ի զեղջէն Շերմաց, զայեակորդի Տեսոն Շիրակայ կամսարականին, զո՞ն ի Պարսից զօրացն՝ զի կամէր սպանանել զայր մի Կարնացի ի մշակացն, և մշակն շուրջ զալով զբարդիւ միով խուսափէր ի սպանողէն, և տեսեալ զայն Խուրսայ դայեակորդւոյն կամսարականին Ներսենի, զայրացեալ ընդ սեպհին Մամիկոնէից Մուշեղի և ընդ կամսարականին Ներսենի՝ ասէ աներկիւզապէս. Ո՞չ ապաքէն մահ այլ աշխարհաց, թէ մեռանի ի Պարսկէն, ի մէնջ պահանջէ վրէժիսնդիրն Աստուած։ Եւ յարձակեալ նիզակու Խուրսն ի վերայ Պարսկին, անդէն ի տեղւոջն սատակէր. և զերծուցեալ ապրեցուցանէր զկարնացին ի սպանողէն։» (\*)

Եւ եթէ ասոր աւելցնեմ հայ իրաւազիտական լեզուի նրբութեանց հմտութեանս նուազումը թիւթիւննիի մը իրաւազիտական կարողութեան զերազանցութեան քով, պէտք էր ընդունիլ, անտարակոյս, որ ըստ բաւականին օգտուած չէի մեր հին մատենազիրներէն։ Աւստի, ստիպուած էի հանդարտ մտքով և համբերութեամբ վերստին պրակտել մեր հնութիւնները, աւելի որոշ կերպով ստու-

(\*) Փարպեցի, Գ. Դրուակ, ԶԱ.:

զելու համար Արքենակ էֆ . կամսարականին , և եթէ կարելի էր՝ անոր համբաւառը «երկու տիրեկ մեղի , երկու տիրեկ քեղի»ի հնագոյն ծադումը ,

Բարերախտաբար շուտով ձեռքս կ'անցնէր մեր պատմութեան հօր աղբիւրներէն միոյն՝ կյուոնքուտի(\*) մէկ անգիր պատմուածքը՝ զոր Խորենացին չէր ուզած արձանագրել , որպէս զի հայ բանասէրներ զինքը ձանձրալի չի գտնէին , ինչպէս զտած են Բուզանդացին , և որ իսկոյն պիտի լուսաւորէր զիս :

Հատ կյուոնքուտի՝ հայ իշխանները , մանաւանդ Արշակունեաց օրով , մեծ պետութեան մը մէջ փոքրիկ՝ բայց զօրեղ թագաւորներ էին , որոնք ունէին իրենց սեպհական բանակները , պաշտպանելու համար իրենց երկիրները ներքին և արտաքին թշնամիներու դէմ . «Իսկ իրեն առաւօտն ծագեաց , հասանէր վաշտն դնելոյ ի բանակն արքունի ,» (\*\*) կամ , «Ապա ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց ազգաց , տոհմաց տոհմաց . զնդից և դրօշուց Տեարք» (†) և , «Եւ փութով ամենեքեան ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրօք և ամենայն պատրաստութեամբ , նոքա և որ բունքն հաստատուն կացեալ էին ի տեղւոջն ,» (§) անհերքելի վկայութիւններ են՝ որոնք կը հաստատեն կյուոնքուտի խօսքերուն ճշմարտութիւնը : Հայ իշխաններու վաշտերն էին որ կը կազմէին արքայական բանակները՝ բազկացած «նիղակաւորներէ , վալ-

(\*) Խորենացի , Բ. Գիրք , Հ. :

(\*\*) Բուզանդացան Պատմ . , Պ. Կայր . Գլ. ԺԵ. :

(†) „ , „ , „ , „ , „ , Գ. :

(§) Եղիշէ , Պատմ . Վարդանաց , Յեղանակ Ե. :

բաւորներէ, անվրէս կորովի ազեղնաւորներէ, սուսերաւորներէ, սուլըռաւորներէ՝ որք ոչ զիտէին զերկիւդ զանցիտելոյ յարանց յախոյանց, համակ զբանապատ հեծելազօրներէ, ևայլն : » (\*)

Երենց վաշտերը միշտ կազմ ու պատրաստ պահելու համար՝ հայ իշխանները ստիգուած էին ունենալ իրենց երկրագործները, զինազործները, ջուլհակները, զերձակները, խոհարարները, հովիտները . . . և բրուտները :

Աւելորդ կը սեպեմ Խոռոչքուախ հետեւիլ այս անհրաժեշտ արհեստաւորներու մտսին ըրած իր մանրամասն նկարագրութեանց մէջ, Բայց կ'արժէ որ քիչ մը կանգ առնեմ անոր բրուտներու մտսին ըրած խօսքերուն վրայ :

Մանաւանդ Կամսարականաց քով՝ որոնց վաշտերը ամէն փառաւոր յաղթանակի տոթիւ Գոլթանցի խորոտիկ զուսանաց զոլտրիկ երզերու, ինչողէս. «Ճենջայ Սաթենիկ Տիկին աննջանա՝ զարտախուր խաւարտ և զտից խաւարծի ի բարձիցն Արդաւանայ, » (\*\*) և Սալնայ և Մոխրայ (\*\*\*) անմահական զինիներու ոզելից ազդեցութեան տակ ամաններու սարսափելի աւերներ կը գործէին, բրուտները խխտ կարեւոր և յարզի զեր մը կը կատարէին :

Ասոնց զլխաւոր օվնականներն էին Իշայրցի հետեւակ մնարզորդիներ՝ որոնց միակ զբաղումն էր ախոռներէ և ասպաստաններէ հաւաքել ապաւառները, թափել անոնց մով զշկուրներ՝ որոնք անհրաժեշտ էին բրուտներու շինած և այնքան խնամքով ու զուրզուրանքով կոկչած ամաններու թրծումին :

(\*) Բուզանդարան Պատմ. Դ. Դադր. Գլ. Ի. :

(\*\*) Խորենացի, Պատմ. Հայոց, Ա. Գիրք, Լ. :

(\*\*\*) Յովհանն Մամիկոնեան, Պատմ. Տարօնյ, Գլ. Գ. :

Գշկուրներ պատրաստելու համար նախ կը կազմէին թրքակայտեր՝ որոնց կը խառնէին բաւականաշափ չոր խոռ, և չու մը թիջելէն անմիջապէս ետքը՝ երկու իշայրցի անարգներ, մինչև պարակերնին մերկացած՝ կ'սկսէին արորել իւրաքանչիւր թրքակայտ։ Ու յետոյ անոնցմէ մին այդ շաղախէն կը լեցնէր կազմվներ՝ զօրս իր ընկերը կը թափէր քիչ մը հեռան, կազմելով կանգուն մը արամազիծ անեցող երկանաքարածեւ բոլորակներ՝ որոնք արեւին առկ պիտի չորնային։

Իրենց այս առաժանակիր աշխատութեան միջոցին՝ որ բնականաբար ամսառուան խիստ տաքերուն տեղի կ'ունենար, զանէ օրը երկու ժամ արեւին կիղիչ ձառագոյթներէն զերծ խիստ արժանի հանգստութիւն մը վայելելու համար, մեր այս բարեկամները իրարմէ մէկ կանզուն հեռաւորութեամբ չօրս ցիցեր կը զարնէին զետինը, կազմելով քառակուսի մը, և անոնց իւրաքանչիւրին վրայ, ճիշտ մէջտեղէն, կը զնէին մէյ մէկ զշկուրներ, պատրաստելու համար իրենց հանգստութեան անհրաժեշտ ստուերը։

Երբ կ'առարտէին իրենց զործը, ստիպուած էին իրենց մէջ բամնել յիշեալ ծածքը, որպէս զի վաղահաս անձրեւներէն զշկուրները վերստին թրիքի չի վերածուէին։

Ո՞չ թէ իրենց թուաբանական կարողութիւնը չորսէն անդին չէր անցնէր, կամ կոտորակի վրայ զաղափար չունէին, այլ, որովհետեւ իրենց արձակման միջոցին իւրաքանչիւր ափի մէջ վրան զշկուրը մէկ ցից առած՝ աճպարարական շարժումներով և պարերով զէպի խրճիթնին իրենց դարձը պէտք էր տօնէին, ծածքին բաժանումը իրենց մէջ կախում ունէր իրենց աճպարարական կարողութենէն։

Ասոր համար էր որ, ծածքի բաժանման առեն, եթե անոնք աճպարարական կարողութեամբ զիրար չեին զերազանցէր, անոնցմէ մին կ'ըսէր միւսին. «Երկու տիրեկլի ինձի, երկուքը քեզի»:

Կարո՞ղ էր անոնցմէ մին խրաքանչիւր ամիս մէջ վրան զշկուրը ցից մը առնելէն զատ՝ վրան զշկուրը ցից մալ իր զլխուն վրայ առնել, այդ պարագային, «Երեք տիրեկլի ինձի, մէկն ալ քեզի» կ'ըսէր իր ընկերոջ:

Մեր այս հետեւակ անորդ բարեկամները չմկրտուած հայ քրիստոնեաներ էին, հետեւարար՝ անուանազորի, ոս պարզ պատճառով որ հայ քրիստոնէի անուն կը տըրուէր, ու կը տրուի մինչև այսօր, իր մկրտութեան միջոցին: Բայց անոնք զիրար կը ճանչնային աճօ, ոճօ, զկօ, թճօ, ճօճօ, մօճօ, կօկօ և այս կարզի յորջորջումներով: Միայն թէ, Հարկ եղած առենը, մանաւանդ փորձանքի մը պարագային, օրինակի համար՝ երբ կամսարականաց զշկրագործները Արծրունեաց զինագործներուն կը հանդիպէին, անվեաս դուրս զալու համար, ստիպեալ՝ իրենց Տէրերուն անունը կը մումոային ձեռամբարձ:

Ահա՛, այսպէս սովորեցայ կալուածի բաժանման եղանակի մը հին ծագումը, և կրցայ ըմբռնել հետեւեալ անզլիւրէն խօսքին նշանակութիւնը. «The straw is nothing, but it shows the way the wind blows., (\*)

(\*) Յարդը ոչինչ է, բայց ան հովին ուղղութիւնը ցոյց կուտայ:

# ԳԼՈՒԽ Զ.

## ՀԱՅՈՒՏԻՑ ԻՇԽԱՆԸ

Այսպէս, հոկտոնակ կատարեալ համազումիս Բոլոգական դաւանութեան բացարձակ ուղղութեան, որ կը պատուիրէ մեզուորին կամ տառապեալին զիմիլ ուղղակի Աստուծոյ, տոանց մեծ ու փոքր սուրբերու միջամտութեան, կը նշանաւէի որ Լուսուորչականի ողորմելի մտայնութիւնու անգիտակցարար յանձնարարած էր խողճ կինը Հայութիծ տոաջնակարգ և երկրորդական սուրբերու պաշտպանութեան՝ որուն արգիւնքը պատկերացուած է նախորդ զլուխներուն մէջ։

Հաւասարապէս թէ օխալու ուղղելու և թէ անոնց պետին ալ արժէքը ճանչնալու համար, յաճախորդիս անունով ուղղակի անոր կը զիմէի 21 Հոկտեմբեր 1914 թուակիր Փրանսերէն յանձնարարեալ նամակով մը՝ որուն թարգմանութիւնը կը զնիմ հոս։

Ն. Վ. Պողոս Փաշա Նուպար

Նախագահ Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան

ի Գահիրէ

Վանմաշուք,

Պատիւ ունիմ ձեզի ծանուցանելու որ Օր. Թազուհի Յակոբ Ալթունեան ինծի յանձնած է ձեր բարեացակամ ուշադրութեան ներկայացնել թէ՝ յաճախորդիս և թէ Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան համար խիստ կարեւոր խնդիր մը։

Մասաւորակէս երեսուն տարի առաջ յաճախորդու և իր քոյրը Հեղինէ Յակոբ Ալիմունիստ իրենց ծննդավայրը, Պոլիս, կը ձգէին Եզիզաս հաստատուելու համար :

1904ին Հեղինէն կ'ամուսնուար Ազեքասնորիոյ մէջ յունականական թէթրո Շիռլանիստիսի հետ : 1905ին յիշեալ թէթրո Շիռլանիստին կը վախճանէր անպաւակ, և 1911ին կը մեռնէր իր կինը, յաճախորդիս քոյրը :

Որովհետեւ իրեն ամուսնութեամբ Հեղինէն յունականական գարձած էր, Ազեքասնորիոյ յունական հիւզատուարանին է որ անոր ձգած ինչքերուն յուցակը ըրած է և անուանած Մր. S. իրրե ինունակալ անոր ժամանակութեան :

Եր քրոջ մեռած տան, զանուած ըլլուով Գահիրէ իրրե սպասունի Արար տան մը մէջ, յաճախորդո չէր խմացած իր քրոջ մահը, հետեւարար անաւելեակ իրեն ձրգուած ինչքերուն՝ երբ Հայոց Բարեզործական Ընդհ. Միութեան վարչութեան անդամներէն մէկ քանին կը փընտռէին զինքը սպարազրել տալու համար կառակ մը, որով ան, յետ մահու, Հայոց Բարեզործական Ընդհ. Միութեան պիտի թողուր իր ինչքերը :

Կիշէ թազունին, սորսափած և նուաստացած միեւնոյն տան ինքզինքը զանելով այսպէս յանկարծակի Հայոց Բարեզործական Ընդհ. Միութեան այս մեծ ենենիներու ներկայութեան, — որովհետեւ իր կեանքին մէջ երբեք այն ենենիներէն մին չէր այցելած անոր զո՞նէ միիթարական խօսք մը ուզդելու համար —, զուր տեղը կը բարոքէր թէ ինքը բան մը չունէր որ կարենար տալ Միութեան : Եւ որովհետեւ ան ոչ զրել զիտէ և ոչ կարդալ, այս մեծ ենենիներէն մին խաչանիչ մը կը գնէր յիշեալ զրոյն տակ ամբողջացնելու համար յիշեալ ինքնակոչ կտակը :

Իր եռքը իմանալով իր քրոջ մահը, յաճախորդու կը գիտէի յունոց Վրաստանաբանը տիրանություն համար իրեն քրոջ ձգու թոշքերուն։ Եւ որովհետեւ յիշեալ Վրաստանաբանը կը պահանջէիր երմէն վահերազրերով հայուասեալ իր ժառանգութեալուս, զոր տեղը կը պիմէր ան ժանիքնի և Ազգեաբանագրիու Հայոց Առաջնորդարանները առանձնուած համար հարկ եղած վահերազրերը, որովհետեւ, յիշեալ Առաջնորդարաններու անզամաները՝ ըստու մինչեւոյն առանձնուած Հայոց Բարեզործուկուն Ընդ։ Միտթեան վարիչ անզամաներ, անումօթուրուր կը մերժէին անոր տալ պահանջուած վահերազրերը, որպէս զի ան չկարուզտնար տիրանուալ յիշեալ ժառանգութեան և իր ժառանգու պարզապահն՝ յիշեալ ժառանգութեանը երթուր տունցնել Հայոց Բարեզործուկուն Ընդ։ Միտթեան հարատութիւնը, զօրութեանի յիշեալ ինքնաւկոչ կատկին՝ որուն յօրինումը վերելու նկարագրուած եւ։

Եզիպտոսի Հայոց Առաջնորդարաններուն անոր հարկ եղած ժառանգաւկուն վահերազրերը տալու մերժումին վրայ, ինչզ Թագուհին կը մեկնէր Պոլիս, Հայոց Պատրիարքարանէն առանալու համար ինչ որ Եզիպտոսի Հայոց Առաջնորդարանները մերժած էին իրեն։

Հոն, հակառակ Եսայիան և Տաղուարեան էֆէնտիներու (Միտթեան ազգեցինկ անզամաներ) յարուցած ազօրինի և անիրաւ ընդդիմութեանց և զժուարութեանց, Հայոց Զաւէն Պատրիարքը կուտար անոր հարկ եղած վահերազիրը, և յաճախորդու կը վերազառնար Եզիպտոսուրովին վատահ թէ այլեւու զժուարութիւն չի պիտի կրէր տիրանալու համար իր ժառանգութեան։

Բայց յոյն հիւպտատարանը կը մերժէր անոր յանձնել յիշեալ ժառանգութիւնը, պատրուակելով որ յաճա-

խորդու յիշեալ Հեղինէին քոյրը չէր, որովհեաւ, ըստ անոր ամուսնական վկայագրին, Հեղինէն կը կոչուէր Ելենի Արանասի Ֆիլիփու:

Յաճախորդու չի պիտէր թէ ինչու ամուսնակալու պահուն իր քոյրը կեզծ անուն տուած էր, բայց տարակոյս չի կայ թէ հանգուցեալ Ելենի Բէթրօ Ճիօլանիախին Հեղինէ Յակոբ Ալթունեանն է, ինչպէս որ յայտնի է բաղմաթիւ վկայութիւններէ և Հայոց Պատրիարքարանի տուած վկայագրէն:

Վսիմաշուք, ութը ամիսներէ ի վեր գիմումներ կը կատարեմ յոյն հիւպատոսարանը Փրկելու համար խեղճ յաճախորդիս ժառանգութիւնը, և Mr. R.ի հետ խնդիրը յանձնած ենք յոյն հիւպատոսարանական դատարանին: Բայց որովհեաւ յաճախորդու խիստ աղքատ է, և որովհեաւ այսպիսի դատ մը խիստ երկար կը տեւէ և շատ առջի կը նոտի, միշտ նախընտրած եմ, յաճախորդիս օգտին համար, հաշտարարապէս կարգադրել զործը:

Սակայն, հաւատացէք, վսիմաշուք, ինչ որ մեծ ցաւ և զորմանք պատճառած է ինծի այն է թէ՝ յոյն հիւպատոսարանի յարուցած գժուարութեանց օտար չէ եղած Հայոց Բարիզածական Ընդհանուր Միութիւնը, որովհեաւ, ան ն ամսկենով և նեռազրենով գիմած է յիշեալ հիւպատոսարանին ողնդելով որ յիշեալ ժառանգութիւնը միայն իրեն կը պատկանէր և ուրիշ ո՞չ ոք իրաւունք ունէր զայն պահանջելու:

Զարմանքը և ցաւը՝ զոր զգացի հաստատելով Հայոց Բարեզործական Ընդհանուր Միութեան անիրաւ և յիմար միջամտութիւնը այս զործին, աւելի բուռն եղան երբ, երեք շաբաթ առաջ, կը խնդրէի Սր. Գուշակեանի, Առաջնորդ Եղիոլոսուի Հայոց, միջամտել զործին և յաճախորդիս ինպաստ գիմում մը ընել յոյն հիւպատոսի մօտ և

Փոխանակ խնդիրս և Հայոց Պատրիարքի Փոխանորդի իր պարտականութիւնը կատարելու, Մը, Դուշակեանը ինծի կը պատասխանէր թէ՝ նախ և առաջ պէտք էր որ յաճախօրդու համաձայնէր Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան հետ, և այս, վերը յիշուած կտակին համար :

Զուր տեղը անոր կ'ըսէի թէ յաճախօրդու ու է կտակ ըրած չէր, և թէ, եթէ ան կտակ մը ըրած ըլլար, ան բոլորովին աղատ էր զայն պատռել կամ ուրիշներ պատրաստել, ոչ ոք իրաւունք չունէր անոր գործերուն խառնուելու :

Զուր տեղը անոր կը յայտնէի թէ ձեր վսեմութիւնը պիտի ամչնար բանեցնել այդպիսի կտակ մը, որը, եթագրելով որ ձիշդ եղած ըլլար, պիտի նշանակէր անամօթ կողոպտում մը ի վնաս թշուառ անձնրու :

Զուր տեղը անոր կը յայտնէի թէ իրուն հայ եկեղեցական՝ իրաւունք չունէր ստիպել խեղճ կին մը շորթուիլ, ինչպէս կ'ընեն քրդերը Հայաստանի մէջ :

Զուր տեղը անոր կը յայտնէի թէ ան ո՛չ ձեր ծառան էր և ո՛չ ալ Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան ուտճահար գործակատարներէն մին, այս կերպով հարստացնելու համար Միութիւնը ի վնաս խեղճերու :

Զուր տեղը անոր կը յայտնէի թէ որպէս ոչ հարուստ Բարձր Հայքցի մը, ես շատ լաւ զիտէի իմ հայրենակիցներուս թշուասութիւնը, բայց երբեք ո՛չ ոքի թոյլ չի պիտի տայի անոնց բարիք ընել ու զել այսպիսի կողոպուտներով :

Զուր տեղը անոր կը յայտնէի թէ Միութեան ձշմարիտ նպատակն էր աշխատիլ ազնուացնել հայերը, որպէս զի անոնք ինքնարերաբար բարի գործեն, և ոչ թէ աղտոտ միջոցներով զրամ հաւաքել :

**Մէկ խօսքով,** խիստ ջանացի զայն համոզել կատարել իր պարտականութիւնը, սակայն Ար. Գուշտեան չուզեց հասկնալ այս ճշմարտութիւնները, անշուշտ մի միայն ձեղի հաճելի ըլլալու համար, վսեմաշուք...:

**Այժմ,** ութը ամիսներու միջոցին ըրած զանազան դիմումներէս ետքը, կատարելապէս համոզուած եմ թէ՝ յաճախորդիս միակ հակառակորդը Հայոց Բարեգործական Ընդհ. Միութիւնն է, որուն Վարչութեան անդամները՝ ինքզինքնին զօրեղ զզալով ձեր Նախագահութեան տակ, կը յանդգնին զործել այսպիսի ոճիրներ, առանց խորհելու որ այդպիսով անոնք կը զործեն Միութեան շահերուն բոլորովին հակառակ։ Եւ եթէ վստահ չըլլայի թէ ան պիտի կրնայ օգնել խեղճ հայրենակիցներուս, շատոնց հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրած պիտի ըլլայի այս կարգի անորակելի արարքներու վրայ։

**Սակայն,** որովհետեւ ութը ամիսներէ իվեր հանդիսատես եմ խեղճ կնկան չարչարանքներուն, և որովհետեւ չեմ ընդունիր որ Բարեգործական Միութիւն մը այսպիսի ոճիրներ զործէ, եթէ ան յամառի, հակառակ Միութեան մասին ունեցած բարեացակամութեանս, պիտի ստիպուիմ յայտնել հասարակութեան թէ՝ ի՞նչպիսի կեղծուու ձեռքերու մէջ կը զտնուի Հայոց Բարեգործական Ընդհ։ Միութիւնը։

**Վսեմաշուք,** ըսածիս պէս, Հայոց Բարեգործական Ընդհ։ Միութեան Անդրանիկեան ,(\*) Մալէզեան ,(\*\*) Կամ-

(\*) Այս խորամանկ վարպետորդին մտած է Պողոս Փառա Նուպարի ծառայութեան մէջ իբրեւ հսկիչ անոր Ֆարասիուրի ազարակին 60 փարա օրականով աւխատող արաբ գործաւորներուն։ Սակայն տատ չանցած, իր

սարական, Գուշտկեան, Ժամկոչեան և այլն կը տանջեն առանց ձեր զիտոթեան, վատահ եմ, խեղճ կին մը երկու տարիէ ի վեր, և ամէն զնով կ'ուզեն զայն կողոպտել :

Հարկ չիմ տեսներ տւելի պնդել հրաւիրելու համար ձեր բարեացակամ ուշադրութիւնը ոճիրներու ծանրութեան վրայ զոր այս մեծ էֆէնտիները կ'ուզեն զործել ի վես թշուառներու, և մեծ վեսասին վրայ՝ զոր պիտի կրէ, անտարակոյս, մեզի այնքան սիրելի Հայոց Բարեգործական Ընդհ. Միութիւնը :

Եւ որովհետեւ խեղճ կին մը անօրինաբար տանջելու չափը անցուցին, պէտք է որ միջամտէիք և բարեսէր զործով մը սրբէիք մեծ անիրաւութիւնը՝ զոր այս էֆէն-

---

վարպետորդիութեան ընորհիւ ան ի վիճակի եղած է, յանախ, հազարաւոր ոսկիներ փոխ տալ նոյն իսկ նուպար փառային՝ ոք, սարսափած անոր հսկայաբայլ յառաջդիմութենին եւ իր դիրքը անոր յանձնելով անոր դիրքը ստանձնելու անխուսափելի հաւանականութենին, աղաչանելով հեռացուցած է զայն իր ծառայութենին, եւ ի վարձատրութիւն անոր բազմամեալ հաւատարիմ սպասաւորութեան՝ անոր ծանօթ խնամքին յանձնած է Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան Սնտուկը :

(\*\*). Մինչեւ Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան նիմնումը՝ թթերանաւփամբ այս փաստաբանին մինակ գործը եղած է իր եւ իր Virginie քոջ միջեւ “Malezian Sœurs,” անուամբ կարի Ռնկերութեան մը կազմումը՝ որուն գործերու բարգաւանման վրայ գաղափար մը կազմել տալու համար անհրաժեշտ կը սեպեմ ըսել որ յիշեալ Malezian Sœurs կ'ստիպուիին իրենց վաճառականական

տիները զործած են ի վեսս յաճախորդիս, և արատը՝ որով աղտոտած են Հայոց Բարեգործական Ընդհ. Միութիւնը այնքան կոպիտ կերպով :

Ասոր համար է որ, վսեմաշուք, կը խնդրեմ, հաստատելէ յետոյ խօսքերուս ճշմարտութիւնը, բարեհաճէիք դիմել Յունաց դեսպանին՝ որպէս զի յաճախորդիս յանձնէր իրեն ժառանգութիւնը։ Որովհետեւ, ինչպէս որ ըսի, յաճախորդս խիստ աղքատ է և անկարող դիմանալու անվերջանալի և սուղ դատավարութիւններու։

Խիստ երախտապարտ սլիտի մնայի ձեզի, եթէ բարեհաճէիք յիշեցնել Սր. Գուշակեանին թէ ինքը հոս,

Տետրակեները Գահիրէի Խառն Դատարանաց սնանկութեանց գրասենեակը յանձնել 11 Դեկտ. 1907ին, ստանալու համար 40 օ/օ ով concordat մը, որ վաւերացուած է յիշեալ դատարանի վաճառականական ատեանէն և Յունիս 1908 թուսկիր վճռով մը։ Ու այն օրէն, անոր այս նարպիկութեան հանդէպ խիստ հիացած եւ զգածուած, Պողոս փառա Նուպար՝ իր երախտագիտական զգացումները զգալի կերպով արտայայտելու համար, անոր յանձնած է Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան բարտողարի պատօնը, — ինչո՞ւ կարող եւ ազնիւ հայեր Հայ Բարեգործական Միութեան մը բարտողարի պատօնը գուրգուրանեռով եւ ձրի կատարելով ժիշ մը երջանիկ զգալին ինքինին խեղն ազգերնուն հանդէպ այս աննշան պարտականութիւնը կատարելնուն համար — որպէս զի 400 հայեր 10 նական դուրուտ ամսավիճանեռով Malezian Sœurs ու concordatն գործադրէին ազգասիրաբար, եւ այս աննման արարածը տիրանար չինադ ազգասկր դիւնազէսի մը համբաւին։

Եզիսատոսի մէջ, ոչ ձեր ծառան էր և ոչ ալ Հայոց Բարեգործական Ընդհանուր Միութեան մէկ զործակատարը, այլ Փոխանորդը Հայոց Պատրիարքին, այսինքն՝ հայերու, մանաւանդ աղքատ հայերու պաշտպանը :

Առիթէն կ'օգտուիմ յայտնելու ձեզի՝ թէ մէկէ աւելի անդամներ յաճախորդս ըստ է Միութեան այս եֆենտիներուն թէ իբրև հայ՝ ինքը սիրով պիտի նուիրէր Միութեան կարեւոր զումար մը, եթէ Հայոց Առաջնորդը կատարէր իր պարտականութիւնը, հարկ եղած դիմումները ընելով յոյն հիւպատոսի մօտ փութացնելու համար իր գործին կարգադրութիւնը :

Բայց կ'երեւի թէ այս եֆենտիները շատ հեռու են քիչով զոհաննալէ, և ամէն զնով կ'ուզեն կլլեւ խեղճ կնկան ամբողջ ունեցածը :

Կը յուսամ, վսեմաշուք, թէ պիտի բարեհաճիք՝ ըստ ձեր սովորական բարեսիրութեան, յաճախորդիս աղաշնքը չի մերժել, և կը խնդրեմ, ընդունեցէք բարձր մեծարանացս հաւաստիքը :

Աղեքսանդրիա, 24 Հոկտ. 1914

Մ. Թէ՛՛Փիլենէն

\* \* \*

Ո՞չ թէ քուրդ Շէրիֆ փաշայի մը, այլ եթէ անոր ամենայետին հայրենակիցներէն մէկուն զրած ըլլափ այսպիսի նամակ մը, անտարակոյս, զոհացուցիչ կամ յոռի պատասխան մը պիտի ստանայի : Բայց այս անզուգական հայ իշխանը նամակու անպատասխան կը թողուր Միայն թէ, շատ չանցած, անոր Աղեքսանդրիոյ պէս պէս փուշտիպանները կ'սկսէին մոմուալ իրարու .

— Ծօ՛, աս ինչ անվախ մարդ է եղեր, ծօ՛, փաշային ալ ասանկ նամակ կը զրուի՛ եղէր... :

Անոր ստրկասուն անհամար փուշտիպանները իրենց աղատասիրութեան չափը ցուցադրելէ աւելի՝ լոկ անոր հրամանով այսօր ազգային պատուիրակի տիտղոսին արժանացած, անոնց չերազած առաւելութիւններով, իսկ վաղն ալ, հաւանականաբար, բարձր պաշտօններու տիրանալու յոյսերով՝ իրենց անտէր ու անօթի շուներու երախտագիտութիւնը արտայայտելու համար, զարմանալի չէ եթէ դայն իշխանացուցին։ (\*)

Միթէ ան քաջութիւնը շունեցա՞ւ իր հլու քրտիկարները հարկադրել հակառակ իր փափաքին և հակառակ իր կամքին կազմուած Հանրապետութեան, և ես չապշեցա՞յ, այդ առթիւ, հաւասարապէս թէ անոր այդ յանդզնութեան համար և թէ անոնց աններելի զիջողութեան համար, — Անոնք որ Գործին քանի մը Փրանքով չնպաստող՝ և Գործին քանի մը Փրանքի զեղծմամբ վնասող հայեր սպանած էին —, որով կը ընդունէին և անվնաս ետ կը դարձնէին անոր աննման հրեւսակները :

Թէ անոր հայ իշխանի տիտղոսին և համբաւին տիրանալու դիւրութիւնը, որուն իրականացումը զարհուրելի սրբապղծութիւն մը պիտի ըլլար հայ իշխաններու յիշատակին, թէ անկէ հայ իշխանի մը չնորհքներուն ամենադոյզն նշոյվի մը բացարձակ բացակայութիւնը ցոյց տալու համար՝ ընթերցողին ուշադրութեան կեն-

(\*) Պօղոս փառա Նուպարի հայրենասիրութիւնը, պետական մարդու կարողութիւնը եւ հայութեան մատուցած ծառայութեանց արժեքը անաշառութեան պիտի պարզուին ուրիշ երկի մը մեջ՝ որուն հրատարակումը կախում ունի, գոնէ մասամբ, երէ ոչ ամբողջապէս, ներկայ գրեոյկիս գնահատուումէն :

թարկեմ հայ իշխաններու զործերէն մէկ քանի օրինակներ, որոնք այնքան յստակ կերպով կը պատկերացնեն ճշմարիտ և արժանաւոր հայ իշխանը:

Չեմ ուզեր քննաղատել Ներսէս Հայրապետի ի նըպաստ Վաղէս կայսեր միամօր հիւանդ որդւոյն աղօթքի մը յանդուզն՝ բայց անգթօրէն անողոք մերժումը, և ոչ ալ Վաղէս կայսեր, այդ պատճառով, Ներսէս Հայրապետին անմարդաբնակ կղղի մը աքսորումը՝ հակոռակ իր աւագանիներու և միջազգային իրաւանց և սովորութեանց այնքան հմուտ և հնազանդ իր խորհրդականներուն բարի և իմաստուն խրատներուն՝ որոնցմով կը ջանային հանդարտեցնել դառնացած կայսր հայր մը, թէ «յօտար և ի հեռաստան երկրէ վասն որոյ յղեալ զդոսահզօր թազաւորի, և մեծի տեառն հրեշտակք են, մի՛ ինչ լիցի դոցա վնաս ի մէնջ, եթէ ոչ, մեծ պատերազմ յառնելոց է ընդ մեզ և ընդ մեծ թազաւորն հայոց. և մեծ թշնամութիւն ի մէջ անզաննելոց է, զի ոչ եթէ նորա բանիւ մանուկն կեայր կամ մեռանէր . . . . Ոչ երբեք ուրեք եղեալ է, ոչ ի մէջ թշնամեաց ուրեք, և ոչ ի մէջ պատերազմի թարմատար հրեշտակաց ինչ կալ և կապ և ոչ բանք, թող թէ մահ, զի ոչ երբեք ուրեք ի հնոց ժամանակաց հետէ, թող թէ այր մեծ և աւագ և աշխարհի միոյ զլուխ։ Զի թազաւորն դոցա աշխարհին և դա, որպէս ասեն, ընդ մի համար են. և ասեն՝ թէ աշխարհն այն ուստի դոցա եկեալ են, սիրեն զայրդ զայդ և երեւելի է դա անդ : » (\*) Բայց բոլորովին վստահ եմ թէ ընթերցողն ալ կ'ընդունի որ, այդ առթիւ, ի տես «բազում և անհամար զանձերու» զորս Վաղէս զրկած էր

(\*\*) Բուզանդարան Պատմ., Դ. Դադր. Գլ. Ե. :

ավան զժիոս հաճել թագուարին Արշակոյ։ յա՞նց  
կայսեր զեւպահներուն երեսին «Քարինք բազմմք  
ի վերայ կայսերն։ և ձեր ի բերելդ։ քարինք և մեր  
շատ կան ի թափել զատամաւնս նորս ի տալն, և ձեր  
ի բերելդ։ զժեր վատթարութիւնն յու տարացց արդ՝ ոյզմ  
երախտացդ ես զարձուցնեմ» (\*) զառլով՝ Արշակուա-  
նի սոսկալի հեղինակը կ'ուզէր յատակօրէն ցոյց տալ, և  
հանչցնել մի անզամ ընդ միշդ, ճշմարիս հայ իշխանի մը  
կինսական զզացումները

Ի՞նչ, միթէ քրդերու աներեւոկայելի խօշամանգութեա-  
րով յօշոտուած մեր ա՛յնքան սիրելիներուն մէջ կը ոզակ-  
ուէի՞ն Եերսէսներ, կամ թէ քրդերու մեզի հանդէպ զոր-  
ծած ոճիրներն ու նախատինքները տանելի՞ էին նոյն խոկ  
հետեւակ անարդ հայու մը համար՝ որ Պօլսո փաշա  
նուպարը անամօթաբար եղբայրակցեցաւ անոնց ներկա-  
յացուցիչ Շէրիֆ փաշայի հետ, և հայու թիւնը անխալճա-  
բար և բոշայօրէն սոսրնացնող իր այդ անզամութիւնը հանդիսաւորապէս վաւերացուց անոր հետ Հաշ-  
տութեան Վեհաժողովին ներկայացուցած 29 Նոյեմբեր  
1819 թուակիր զնչու զրութեամբ։ «Տիար Նախազան,  
մենի, ներկայ սուրագրեալներ, նոյն եւ քիւր ազգերու  
ներկայացուցիչները պատիւն ունին յայտնելու Հաւսու-  
րեան Վեհաժողովին, որ մեր երկու ժակովուրդները,  
երկուն ալ Արիական ցեղեն, ունին նոյն տաները եւ կը  
նետապնդեն նոյն նպատակը, այսինքն՝ իրենց ազատա-  
գրումը եւ անկախութիւնը։ . . . նետեւաբար մենի բո-  
լորովին համաձայն ենի միասին խնդրելու Հաւսուրեան  
Վեհաժողովին սեղծումը, ազգերու սկզբունին համա-

(\*) Բուզանդարան Պատմ., Գ. Դպր. Գլ. ԺԱ. :

մայն, Միուցեալ Անկուխ Հայուստանի մը և։ Անկուխ Քիւրիւսանի մը . . . ։ Բայց ի այդ մենք կը յայնուենք մեր կուտակեալ համաձայնութիւնը բարգելու համար վուրամանութեանց օրինական իրաւունքները մեր եւկա ովհանութեանց մեջ ։ ։ (\*)

Բոլորութիւն վաստան եմ թէ Բուրժողի մէջ թունուոր եօղուշազու տօրմացի ծաշակեմունք ստուգումի մը երկիրզն է որ անոր այդ անուրդ քայլը տունել տուած է։ Ամէն պար բազացի մէջ, ընթերցութիւն կը մնայ տեսնել և ըմբռնել անոր նոյ իշխանութ արժանուորութիւնն ու արժէքը։

Թող շրաբի թէ ըրած քազառութիւնն համեմատական ըլլուզէ չափազանց հեռու է։

(\*) Նպաստակ ունենալով միայն Պողոս փառա Դուռ պարի հայ իշխանի արժանաւուրեան ապացուցումը, վաստան եմ թէ ընթերցուող զիս լաւ կը հասկենայ։ Բայց ինեղինեն աւելի բասկօրեն հասկցնելու համար պէտք է զգացմ բայցնելու թէ՝ յիշեալ կեպսոս գրուրեան խիս զատապարտելի պատախանատունեն են միայն Հանրապետութեան Հայութիւն Վեհանդադուի մօս Պատուիրակութեան Նախագահ Գր. Ա. Ահարոնեան եւ իր ընկերը Տօֆք. Հ. Օհանջանեան, որոնց՝ որպէս Հայաստանի մեջ ճնած, հոն սնած ու մեծած եւ բառող դառն աւելի հոյ ցաւերով զբաղած հայերու, երբեք ներելի չեր այդ պիսի զնչու գրուրեամբ մրհնել հայութեան պատիւր, եւ ո՞չ թէ Պողոս փառա Դուռպար, ո՞ր որպէս օսաւ հողի վրայ ճնած, տանիկ բարերով եւ կրուրեամբ օսաւ հողի վրայ մեծած մէկը, բնականաբար զաւրկ էր, թէեւ չափազանց վասնզաւոր խրտուիլակ Նախագահ Ազգ. Պատուիրակութեան, իր ընելիքին զիտակցութենէն։

Ահա ուրիշ աւելի փոքր հայ իշխան մը որ իր ամենասովորական զործերով իսկ ցոյց կուտայ հայ մեծ իշխաններու հետ ունեցած իր հարազատ աղջակցութիւնն ու սերտ նմանութիւնը :

Ո՛չ միայն իր ուժերէն անհամեմատ սոսուր պարսիկ բանակներ, որոնք իրարու հան իր երկիրը խռովելու յանդզնութիւնը ունեցած էին վվան ի պարսիկ հաւատ զարձուցանելոյ զերկիրս հայոց», «ներելի խորամանկութեամբ անընդհատ որէ անցուցած էր, այլ նաև, Տարօնոյ իշխան Վահան Մամիկոնեան միշտ վայելու կերպով պատճած էր բոլոր պարսիկ վզուրկները՝ որոնք իր հայրենիքն հանդէս այդպիսի նախատական հրամաններ զործագրելու կոչուած էին» Ո՛չ միայն վզուրկ Միհրանի, ի ահո իր զինուորներուն քիթերով և թլփատներով լիփ լեցուն մախազին, «զի՞նչ է այդ, զրոյց տուր» հարցումին վրայ Վահան կարգաւ և սուզիւ կը պատճէր իր ըրածները, այլ նաև, երբ վզուրկ Միհրան իր ծառային տեղովը կ'ուզէր զարնել զայն, «Վահան ձզեալ զձեռն իւր ի սուրն՝ որ առաջի կայր, կարեաց զթլփատնորս, և եղ ի բերան նորա, և առէ. զու ես, որ թըշնամանէիր զաստած, և զկրօնաւորն իմ զսիւնան աշխարհի սպանանել առայիր» Եւ կարեաց զքիթսն, և ցուցանէր աշացն, և պատառեալ զփորն, ևս ծառային հանել զլեարդն և զնել ի բերանն, և հարեալ զգանակն ի փորն, և ետ թուղու ի ցից : » (\*)

Իսկ երբ զժքախտ վզուրկ Միհրանի յաջորդը, վզուրկ Վախատնզ, բազում պարզեւներով անոր կը զրկէր հետեւհալ թուղթը .

(\*) Պատմ. Տարօնոյ, Յովհ. Մամիկոնենի Եպիսկ. Գլ.Բ.:

այսոց և հզօր բազեինդ Վահանայ սկսայի, զիցն օգնականութեամբ ողջոյն:

Այս թէպէտ և ընդ մահ եղբօրորդոյն մերոյ արտմեցաք, բայց ընդ հզօր քո խնասաւթիւնդ զարմացայ: Այս ես եկեալ եմ վասն սիրոյ և խաղաղութեան, և զուարի եկ առ իս, և երգուիր տալ զնարկ արքունի և կալ հապանոր, և յառաջին պատիւն ձեր մնալ, և այլ ոչ մասանել ի նենգութիւն: Ազ՞ լեր ի զիցն-աջոյ, « ան չէր վարանէր անոր տալ հետեւեալ պատշաճ պատասխանը.

«Վաս և թոյլ անձինդ Վախատանգայ, և խոզ քոյոց դաստց՝ որք զալլրս ճաշակեն, ողջոյն :

«Այլ թէպէտ ընդ մահն Միհրանայ խնդացի, բայց ընդ անմատութիւնդ քո լացի: որ զմանն նորա լսեցեր, և զիմ կորովութիւնս ծանեար՝ զոր ինձ ես աստուած, զիա՞րդ իշխացեր զալ ի վերայ եկեղեցւոյն աստուածոյ: Այլ թէ սէր եկիր առնել, զկինդ ի հետ ընդէ՞ր ածէր. միթէ որդի՞ խնդրես յերանաց մերոց. և եթէ սիրոյ պատճառանօք եկեր, զիմ քաղաքդ է՞ր շինեցեր և ամրոցս: Այլ զիտեմ զի սուտ ես, և իբրեւ զշուն քծնիս: Արդ զկեանս քո առաջի մահու զիր, և յերկրէս արի ել գնա խաղաղութեամբ, ապա թէ ոչ, զմահն՝ որ ընդ քեզ անցանելոց է՝ զայն ամենայն երկիր տեսանէ: » (\*)

Ճիշդ է թէ ան իշխանութեան կոչուած էր ուրիշ հայ իշխանէ մը, որ ըսած էր իրեն. «Որդեակ Վահան, զու զիտես զաւուրս կենաց իմոյ, զի այս հարիւր և քսան ամ է՝ որ ես պատերազմ եմ մղեալ, և սլաքով եմ որբեալ զարիւնն ի ճակատէս փոխանտկ քրտանցն. ութսուն և երեք ռազմ անձամբ իմով եմ կարգեալ և

(\*) Պատմ. Տարօնոյ, Յովին. Մամ. Եպ. Գլ. Գ.:

մղեար Եւ այժմ ծեր իմ և զողղոջոտ, և օդնական իմ աստուած է և զու, և ոչ այլ ոք, զի որդին իմ մեռան երկուտասանամեայ: Եւ արդ, որդեակ, զիր զայս ի մայքում, զի եթէ ի վերայ քրիստոնէից մեռանես և եկեղեցւոյ, մարտիրոս ես, իսկ եթէ ի վերայ մարմնաւոր ընջից իջանես ի մարտ, և այն քաջութեամբ է: զի ես այլ ժառանգ ոչ ունեմ, և երկիրս քեզ եղիցի, և զաւակի քում յետ քո: Արդ, արի և զնոտ, և խմառութեամբ որոս զնա և ուրբ կարապեան եղիցի քեզ օդնական և սպարիսակ, և ազոթք ուրբ կրօնաւորացն յաջմէ և յահեկ: » (\*) Բայց տրուած ըլլալով Պօղոս փաշա Նուպարի Հաշտութեան Վեհաժողովի մօտ իրքեւ Աղդ. Պատուիրակութեան Նախազահի ծանր պատասխանաւութիւնը պատմութեան առջեւ, և անոր զիրքին կատարեալ ապահովութիւնը, իսկ միւս կողմէն տրուած ըլլալով քրդերու զործած ոճիրները և մեր արբոզջ երկրին բոլորովին աւերումը անոնց ձեռքով, վստահ իմ թէ, ընթերցողն ալ կ'ընդունի որ, ոչ միայն հայ իշխան մը, — ի՞նչ սրբապղծութիւն — , այլ նաև հետեւակ անարդ հայ մը իսկ, միեւնոյն պայմաններու մէջ, ոչ մէկ գնով չի պիտի ուզէր իր անմեղ սիրելիներու արիւնով արատաւորուած քուրդ, Շերիֆ փաշայի մը ձեռքը սեղմել, ձեռք՝ զոր ընկեցիկ սորկածիններով փուշտիպանաւորուած շնորհունակ իւստանը հանդիսաւորապէս համբուրեց և ճակախն դրաւ:

Ֆարասքուրի (\*\*) այս անզուզական իշխանին երակներուն մէջ նոյն իսկ հայ արեան ամենափոքր կաթիլի մը բացարձակ չզոյութիւնը մինչեւ բունը — to the

(\*) Պատմ. Տարօնոյ, Յովի. Մամ. Եպ. Գլ. Բ. :

(\*\*) Սուրբն Եղիպտոսի մէջ զիւղ մը: (\*\*\*)

ինք — հաստատելու համար, առելորդ չեմ համարէր հայ ցուցադրել ուրիշ հայ իշխաններ, մանուկ մը և ասրէց մը, հայաստաց? ! հակայ պատմապրին վկայաթեամբ :

Թէ ինքն իսկ չեր հաւատար իր ասպիրատ ձեւնարկներուն յաջազմաթեան, գօանի որ ինքն էր որ ըստէր Աղուանից Ռունայր թազաւորին, Պարսից Շապուհ արքայէն հայ բանակին հետ շափուելու ։ Հնորհը ինդրած և ասացած առեն. Ակատ արկէր զզազիւ զիրկու. բայց թէ ժաղավիլ կարիցեն, մեծ զարմանք իցեն, ։ (\*) սակայն, հակառակ իր թերահաւատութեան՝ և այնքան ստուկալի պարտաթեանց՝ պարսիկ բանակը վերսաին Հայաստանի վրայ կը քալէր անշնո՞րք Մերուժանի առաջնորդութեամբ :

Մանուէլ Մամիկոնեան պատրապեափ ընդհանուր հրամանատարութեամբ հայերը կը պատրաստաւէին անզամ մը եւս վաճնելու իրենց յամաս թշնամին։ Այդ առթիւ «զտիկինն Արշակունի հանզերձ մանկամբքն Արշակաւ և Վաղարշակաւ զնոտա և զիւրեանց կանանին ընդ նոսս արձակեալ. յամուր յուզարկէին ի լիան մեծ՝ որ անուանեալ կոչի Վարազ։ Եւ զմանուկն Արտաւազգ, որդի Վաշէի, ընդ կանանին տայր հրաման երթալ Մանուէլ. իսկ նա ոչ հաւանէր, չառնոյր յանձն։ Եւ էր նա ի տիսց տղայ, և ըստ մանկութեանն օրինի, ըստ կրօնից հայոց՝ որպէս օրէն էր՝ զզլուխ մանկայն սոյնպէս ի ժամանակին զերծեալ էր զզլուխ մանկանն Արտաւազգայ, և ցցունս էր թողեալ և զէս արձակեալ։ Աղա իր ոչ հաւանեցաւ նա ընդ կանանին երթալ, մտրակ ի վեր առեաւ։ Մանուէլի՝ տանջէր զմերկ զլուխ Արտաւազգայ,

(\*) Բուզանդարան Պատմ., Գալր. Ե., Գլ. Դ.:

սաստեր նմա չերթալ ի պատերազմ վասն մանկութեան  
ժամանակին տիոց : » (\*)

Երկու բանակներուն ընդհարման միջոցին միայն  
յայտնի կը լլար որ մանուկն Արտաւազգ՝ հակառակ իր  
վրայ զործաղրուած նախատական խոշտանգումներուն,  
անյօղգող մնացած էր իշխանազնի իր որոշումին մէջ,  
և ահա թէ ինչպէս . «Այլ մանուկն Արտաւազգ ի Մա-  
նուէլէ զալտ եկեալ էր ի ճակատն . սակայն վառեցաւ  
կազմեցաւ և եմուտ, զանխուլ ի Մանուէլեան զնդէն,  
առ ափն Եփրատ զէտովին . եհար սատակեաց ի Մերու-  
ժանեան զնդէ անտի անթիւ բազում սպառազէնս կո-  
տորեաց . Եւ նշանակիր մի ի Մերուժանայ իրքեւ ետես  
զԱրտաւազգն, յընչացք երաց . զի տեսանէր զնա պա-  
տանեակ մի կայտառ անմորուս, երեսօք զեղեցիկ . ապա  
զնշանն զնիզակաւն սպատեալ, յարձակեցաւ ի վերա նո-  
րա . Իսկ նա ընդ գիրկո մտեալ հարկանէր զայրն նե-  
տիւ . և կարանէ ի կարան թափ հանեալ զնետն ցամաք  
ընկենոյր զնա : Եւ առեալ զնիզակն, զհետ մտեալ փա-  
խըստէիցն, ընդ ոուր հանեալ զզօրսն Մերուժանայ, ա-  
ւելի քան զամենեսեան Արտաւազգ որդի Վաչէին մա-  
նուկն կոտորեր, և ինքն մեծաւ անուամբ, և բա-  
զում աւարաւ՝ զոր կապուտն թափէին ի զօրաց թշնամ-  
եացն : » (\*\*)

Գալով Մանուէլի՝ կը բաւականանամ միայն անոր  
կեանքի վերջին վայրկեաններու նկարագրութեան մէկ  
մասը դնել հոս. «Եւ յետ այսորիկ իբրև միահամուռ ժո-  
ղովեալ կային շուրջ զնովաւ, և իբրև կայր հիւանդ ի մա-

(\*) Բուզանդարան, Պատմ., Դպր. Ե., Գլ. ԽՊ.:

(\*\*) , , , , , ,

հիճս իւր, անդ թագաւորն Արշակ և անդ Վարդանդուխտ կին թագաւորին, և անդ ամենայն աւագք և մեծամեծք և նախարարք Հայոց այր և կին առ հասարակ ամենայն երեւելի մարդիկ, ապա երաց Մանուէլ զամենայն զամդամս իւր առ հասարակ առաջի ամենեցուն, մերկացաւ և եցոյց զի քան զդրամ խայծ ոչ զտանէր ողջ ի մարմնի նորա՝ զոր խոցեալ էր ի պատերազմի. զի յառնի յանդամսն աւելի քան զյիսուն սպի կայր ի վերաց, և զայն անգամ բացեալ առաջի ամենեցուն ցուցանէր : Սկսաւ լալ, և ասել՝ թէ ես ի մանկութենէ համակ սնայ ի պատերազմունս, և մեծաւ քաջութեամբ զամենայն վերս յանձն իմ առի. և ընդէ՞ր ոչ եհաս ինձ մեռանել ի պատերազմի, քան զօրէն անասնոյ մեռելոյ եղէ. Զի լաւ էր ինձ եթէ ի պատերազմի մեռեալ էի ի վերայ աշխարհի, զի մի զեկեղեցիս և մի զուխտ Աստուծոյ առ ուն կոխիցեն. Սակայն ի վերայ Արշակունեաց բնիկ տերանց աշխարհիս, և ի վերայ կանանց և ի վերայ որդւոց մերոց, և ի վերայ աստուածապաշտ մարդկանս և ի վերայ եղբայրութեան ընկերութեան (\*) և մտերիմ բարեկամութեան զի էր թէ հասեալ էր ինձ մեռանել, թէպէտ շատ զանձս յանդուգն վարեցի. զվատթար մահս մահճացս եհաս ինձ մեռանել : » (\*\*)

(\*) Դիտմամբ կը տամփրեմ այս բառը՝ որպէս զի ընթերցովը աւելի յստակօրէն տեսնէ անոր գոյութիւնը եւ անոր իմաստին կարեւորութիւնն ու արժեքը իր հարազատ և սխնեաց քով, Ռուսօներէ, Մարաներէ, Գարլ Մաքսերէ եւ անոնց նետեւող արդի իր կարգ մը տաղփաղի հայրենակիցներէն դարեր ու դարեր առաջ :

(\*\*) Բուզանդարան պատմ., Դպր. Ե., Գլ. ԽՌ. :

Իրենց մտայնութիւնն ու նկարագիրը այնքան յատկանշանականօրէն պատկերացնող «ըստ խոզի հարսնացելոյ, կոյաջուր բաղանիք» (\*) հայ հին առակի համեմատ՝ թող անոր խոհերական փուշտիպանները, վարձկան ճաղփակիրներու հոգերով տարուած, իշխանացնեն զայն որչա'փ որ կ'ուզեն, բայց ես, միշտ հաւատարիմ և հնազանդ հայրենի սովորութիւններուս՝ չեմ թոյլատրէր արատաւորել հայ փառքերու շարքը, ու արդարաբար կը պսակեմ զայն հայութնապես :



Ճամփար ուսուց ուս հետզիւս ոյ վայեց? (\*)  
Յ ուսուց ուս ուս հետզիւս ոյ վայեց? Յ  
առաջ ոյ վայեց ուս մետքուումար մետքել ուս  
յա՞ք, առաջանա՞ն, մետքուում, յա՞ն պահմախ մ սոր-  
բա ու բար ոյ վայեց յահան ու առանուն

(\*) Փարպեցի, Թուղր առ Վահան Մամիկոնեան :

# ԳԼՈՒԽ Ե.

## ԵԳԻՊՏԱՀԱՅ ԿԵԱՆՔ

Կը յուսամ թէ մասնաւոր հայ գաղութի մը մասին ըսելիքներս չի պիտի իշխեն տկարացնել դիառլութիւններուս կարեւորութիւնը ընթերցողիս աչքին, արուած ըւլալով որ մօտաւորապէս 15000 հոզինոց այս հսկայ գաղութը՝ կազմուած երկրին ամէն կողմերէն Եգիպտոս ապաստանող հայերէ, կատարեալ կերպով՝ կը ներկայացնէ ամբողջ հայութեան մանրանկարը, անոր չքնաղ յատկութիւններով և յոռեզոյն թերութիւններով։

Շնորհիւ անզլիական գրաւման և միջանգային խել մը առանձնաշնորհումներու — ոսնձզական ընդունուած իրաւունքներ — խաղաղ ու նպաստաւոր երկրի մը այս գաղութին կատարելապէս անկախ հանրային կեանքին հետեւողը, կամ այդ կեանքը ուսսումնասիրողը, իսկոյն և առանց դժուարութեան պիտի տեսնէր անոր կօրովի կենսունակութիւնը, բայց, աւազ, միշտ անվանօրէն կաշկանդուած զէշ ու ալէտալից թերութիւններով՝ որոնց հանդէպ մեր նախանձախոց թշնամինները առանց վարանելու իրաւունք պիտի ունենային հրճուանքով ամրացընելու իրենց վնասակար կարծիքները մեր մասին իսկ եթէ այնքան սռող զնով ազգային ազատութեան ձգտող ժողովուրդի մը այս խոշոր հատուածին քաղաքակրթեալ անկախ ազգերէ անկախագոյն վիճակի և պայմաններու մէջ անցուցած վերջի քառորդ դարու հանրային կեանքէն հետեւցնենք այդ ժողովուրդին անկախ ասլրելու

կարողութիւնն ու ընդունակութիւնը, ցաւով ու զայրոյթով է որ կըսեմ, թէ միայն և միմիայն շնորհիւ հայութիններու՝ որոնք անդադար խափանած են անոր լոյսը, քաղաքացիական գաստիարակութիւնը և ազգային առաքինութեանց զարգացումը, արդիւնքը պիտի ըլլայ բացարձակ յուսախարութիւն :

Մինչև 1895-1896 թւով խիստ ցանցառ այս զաղութը ընդունայն փայլած է կարգ մը հայ փաշաններով՝ որոնք տիրապետած են անոր որպէս ճշմարիտ միապետներ, այսինքն՝ որպէս քուրդ տէրէպէլիներ :

Այդ թուականէն սկսեալ թրքական ջարդերէ ճողովրած հայերու հոծ բազմութիւն մը կուզար ստուարացնել Գահիրէի և Աղեքսանդրիոյ հայ հասարակութիւնները՝ որոնք, չառ չանցած, կուզէին ժողովրդական հոկողութեան ենթարկել, դպրոց, եկեղեցի և ազգային կալուածներ, ըստ Ազգ. սահմանադրութեան օրէնքներուն:

Սահմանէս դուրս է պատմել հոս միշտ եզիպտական ոստիկանութեան միջոցաւ զսպուած անհամար կոիւները որոնք տեղի կ'ունենային այն օրէն սկսեալ ընդմէջ ժողովուրդին և հայութիններու՝ Սահմանադրութեան տարրական սկզբունքներու յարգումի և զործադրութեան շուրջը, և որոնք կ'արդիւնաւորուէին հայ փաշաններու և հայ բոշաներու և հայ զնշուներու (\*) համհարզակցութեամբ միայն :

(\*) Եր «Տեղեկագիր Հայոց Մեծաց»ի մէջ (թիւ 30) գնչուները եւ բուաները իրարմէ զանազանելու համար Ալիւան կ'ըսէ թէ, «յետինիս բիստոննեայք են կրօնիւք, լեզուաւ եւ բարուք հայամերձ : » Բայց ըստ իս, անոնց իրարմէ ունեցած սարբերութիւնը այնքան անզգալի եւ աննօնն է որ չէր արծէր անդրադառնալ այդ մասին :

Բայց որպէս զի ընթերցալը յառակազոյն զազափարը ունենայ հայուախճերու, հայրբաշաներու, հայ-պնդաներու, անոնց խաղցած զերին՝ և անպատճելի զնով ազատութեան ձգուազ ազգի մը բոլորավին անկախ միջավայրի մը մէջ ապրազ կարեւոր մէկ հաստուածի քաղաքակրթական և քաղաքացիական զարգացման աստիճանին վրայ, հու կը զնում Թարգամ Էպիխակ. Գուշակեանի Առաջնորդութեան հաւասարիմ պատկերը՝ որ հայելին է եզիսպատհայ կեանքի էն նախաճածելի շրջանին :

Մանաւանդ Աղեքաանդրիոյ հայ հասարակութիւնը, յոզնած, ձանձրացած և զզուած բոլորովին ի զուր այնքան երկար ատեն բողոքելէ, պայքարելէ և կունելէ Ազգ. Սահմանադրութեան անթերի զործադրումին համար, եզիսպատական սատիկանութեան չնորհիւ անգամ մը եւս տեղի տուած էր հայուախճներուն՝ որոնք իրենց պետին բարձր հովանաւորութեան տակ ուղածնուն պէս կը բանեցնէին դպրոց, եկեղեցի և ազգային կալուածներ՝ երբ, 1913ին այս եպիսկոպոսը Եզիսպատակ կը հասնէր իրբեւ ացելու հայիւ :

Ազգային նիւթական և բարայտական չահերը և հարըստութիւնները փարատոզ այս բորենիները երբ կ'ապահովուէին թէ այս եպիսկոպոսը իրենց ուզած մտրուկն էր, Առաջնորդ կը կարգէին զայն Եզիսպատահայոց :

Իրերու այս անցուդարձին բոլորովին անտարբեր — Եզիսպատական սատիկանութեան չնորհիւ — հանգիսատես ժողովուրդը պահ մը կ'ուրախանար՝ յուսալով որ ի վերուստ իրեն պարզեւեալ նորընծայ Առաջնորդը իսկոյն թեմական Ժողովոյ օրինաւոր ընտրութեան պիտի ձեռնարկէր իր հակողութեան ենթարկելու համար դպրոց, եկեղեցի և ազգային կալուածներ, մաքրելու համար Ասգատի ախոռներէն շատ աւելի ալտու կաղալը:

Բայց որչա՞փ սխալած էր ան... :

Շաբաթներ, ամիսներ և տարիներ իրարու կը յաջորդէին ինչպէս անցեալին մէջ, և մեր Առաջնորդը՝ բոլորվին մոռցած իր երբեք չի սորված պարտականութիւնները, յարած էր հայուտիճներուն, կ'անտեսէր ժողովրդին ազգօղուտ դիմումները և կ'արհամարէր անոր արդար պահանջքները, որովհետեւ փառան այնպէս կ'ուզէր :

Երեքշաբթի, 17/4 Հոկտ. 1916 ին Թորգոմ եպիսկոպոսը արտադրող վերջին օխտը անծանօթ պորտերուցիրուցան աճիւնները ո՛րչափ պիտի հրճուէին արդեօք, անոր պէս պայազատ մը պարզեւած ըլլալնուն համար ազգին... :

Որովհետեւ, Թեմական Ժողովոյ ընտրութեանց ձեռանարկելու համար խնդրելէ և աղերսելէ յոզնած, զզուած և զայրացած Աղեքսանդրիոյ հայ հասարակութիւնը Առաջնորդարան կը դիմէր նոյն օրը, բացատրութիւն պահանջելու համար իր Առաջնորդէն, և այդ առթիւ անհատ մը՝ կարչնեղ ձեռքովը անոր կոկորդէն բռնած, երեսին թքնելով կ'ըսէր անոր. «Ծօ՛ Տիւրզի, ծօ՛ Հինկենէի ձագ, ծօ՛ ...զի զաւակ, ծօ՛ ...շտ, ծօ՛ կարզիդ մէջը ...քածս, ինչո՞ւ ընտրութիւններու չես ձեռնարկէր : » Բայց այս չնաշխարհիկ Առաջնորդը, աւելի փառային իր հաւատարմութեան չափը ցոյց տալու՝ քան թէ օձիքը ազտելու համար, կը նախընտրէր ընտրութիւններու չձեռնարկել և «յանուն Ս. Երրորդութեան» կը հրաժարէր իր պաշտօնէն :

Իրեն մեծ բարեբախտութեան համար, Ամենայն չայոց Վեհափառ Հայրապետը, որ ի հարկէ բնաւ տեղեկութիւն չունէր այս դէպքերէն, կոնդակով մը կը պատուիրէր անոր դիմել Հնդկաստանի և Ճավայի մեր նժղեհազոյն հայրենակիցներուն՝ հաւաքելու համար անոնց

լումաները՝ ի նպաստ կովկաս ապաստանող մեր թշուառներուն, և իրեն ի նպաստ եղիսկոպոսական մատնիներ՝ որոնց էն վարնոցը պիտի դառնար քար զայթակղութեան եղիպտահայոց զլիսին :

Եղիպտոս վերագարձին՝ որպէս թէ ի՞նքը եղած չըլլար հրապարակաւ և հանգիսաւորապէս «յանուն Ա. Երրորդութեան պաշտօնէս հրաժարեալ եմ» յայտարարողը, փաշային և իր փուշտիպաններուն հրամանով վերստին կը փոխուէր Առաջնորդի, աւելի լաւ կերպով շահագործելու համար, անոնց հետ, հայութեան դժրախտութիւններն ու ցաւերը՝ Այս նպատակով էր որ ան կը հովանաւորէր և կ'օրհնէր հայուտիմներէ կազմուած «Ազգային Միութիւն» մը՝ որ կ'սկսէր շահագործել կօկօներու անմտութիւնը, կը բանար խումարիսանա մը հասոյթին 100ին 20ը Առաջնորդին յատկացնելով, և որ պիտի ցկնէր հայրենասերներ, քաղաքագէտներ և դիւնագէտներ հայութեան գլխին միայն հաւատեները հիացնելու համար :

Հանգէպ այսպէս կազմակերպուած մարմնի մը, և երկրին մէջ տիրող պատերազմական վիճակին պատճառով, ստիպեալ՝ ժողովուրդը կը մնար բոլորովին զգուած և անտարբեր :

Եւ երբ ան, խարդախ և խարերայ չարօնելներու պատերազմի միջոցին վաստկած ուկիներու չնորհիւ, (\*)

(\*) Խիս ցաւալի էր ընտրութեանց առիւ Աղեքսանդրիոյ Եկեղեցիին բակին մէջ պարզուած տեսարանը՝ ուր Երեկուան խարդախ սնանկները, «որոց կարի յոյժ համարեմ աղտեղի նօանակել գրով զանուանս, » դրամով լեցուն տոպրակները օդին մէջ շարժելով կը զռային. «Ո՞վ քու տալ կ'ուզէ . . . : »

կ'ապահովէր Թեմական Ժողովոյ աթոռները՝ հազատարութեանը յանձնուած քենիին Սիսի-Կապըրի ճեպնթացին տակ ուուած պորտին պայթուցովը արդէն այնքան կել-

Եւ այսպէս արտադրուած Թեմական Ժողովոյ մը օրով երբեք զարմանալի չէր որ Մուսեղ Եպ. Սերոբեանը, որ իր շլիսի զկվզեկի պոռտախօսութիւններով, «քէ ինքը Կիլիկեան զօրացուցած էր լաւ զինուած որորդական խմբերով՝ որոնք փաշային մէկ հրամանին կ'սպասէին ապստամբութեան դրու պարզելու եւ անկախութիւն հռչակելու համար,» մեծապէս պատճառ եղած էր 1909ի Կիլիկիոյ ջարդերուն՝ որոնց միջոցին կը յայտնուէր, որպէս ժագ հովիր իր փախուստին հետ, քէ չախմախլը հրացան մը իսկ դրած չէր իսեղն ժողովրդին ձեռքը. որ 1909ին մինչեւ 1916 տրջած էր Եգիպտոս, Եւրոպա եւ Ամերիկա որպէս գնչու խաչագող բախտախնդիր եւ տիրացած «Վեղարաւոր Սրիկայ» տիտղոսին. որ 1916ին բարձրագոչ յայտարարած էր քէ կ'ուզէր կամաւոր ըլլալ Légion Arménienneի, բայց որպէս հոգեւոր հովիր գացած էր տահագործել Միջազետք տարագրուած մեր սիրելիներու թուառութիւնը՝ տիրանալու համար 15,000 ոսկիի գար հաստատուէր ազատ համարձակ եւ հրեւանքով Աղեքսանդրիոյ Savoy Palace Hotelը եւ պօրսամիութիւններ. եւ երբ անկէ պահանջուէր թուառներու ի նըպաս սացած դրամներուն հաշիւը, պատասխանէր. «Թող Ահարոննեանը իր ունեցած դրամներուն հաշիւը Տայ՝ որ ես ալ իմ սացած դրամներուս հաշիւը Տամ,» նիւդ այն գնչու զինուորին պէս որ՝ տողանցքի մը միջոցին, երբ ընկերը կ'ըսէր իրեն տիտակ դնել ոսքը, սպանցոյց տալով կը պատասխանէր. «Ճասան խօյսուն, պէն Տէ խօյալըմ...»

տոտ դէմքը աղտոտած զեղծասուն և տամկասուն թափչորդիի մը. սիրողին աջակցութեամբ մեռած ամուսնոյն դիակը ջրհորին մէջ պահող և անոր անկողնոյն մէջ պառկեցուցած կօկօյի մը խոսքով, հօնայէ մը վաւերացուած, զայն կողոպտող խալդախի մը բին ին՝ որուն, կոյր կեսարացի մը շորթած ըլլալուն համար, առանց ազդու միջամտութեանս, մայրը շատոնց լացած պիտի ըլլար. ուսուցչուհին վարձքը սեղանին ետև բռնած ձախ ձեռքին մէջ՝ աջ ձեռքին ցուցամատը պորտին ուղղած անոր «կ'ուզե՞ս» աղաղակելուն համար խայտառակուած քերգիի մը. ամենուն սիրայօժար իզացող, բայց ձեռքէն ազատելու համար հապարայով փախչող կնկան մը տազը հրեշտակագործ Խայսերցիի մը. քանիցս խարդախ սնանկութեամբ չհարստացող՝ բայց մեր որբերուն յատկացուած դրամին շնորհիւ ամենուն «ութ հազար ոսկինոց» թղթապանակը ցոյց տուող սահարնիի մը. ազգային Սահմանադրութեան յարգումը պահանջող ժողովուրդը արապ, յոյն և թուրք բրանվայնիներու ջովրով զսպող և այդ պատճառով սատակը ազգային յուղարկաւորութեան արժանացածի մը վարչութեան տակ զտնուող հաստատութենէ մը իբր զող վոնտուող բօղայր եղբօրը. բին օղլու բինի մը մեղսակցութեամբ 88 տարեկան հիւանդ և զառամած հայ պառաւ մը շորթող կոյադէմ և ճռպոտ աչքերով Խըյարի կտորի մը (ծաւի խօսնակ փուշտիպան) որ կարենար հանգուցեալներու «ստորագրութիւնները կրող գրերու շնորհիւ» անոնց ողորմելի ժառանգորդներէն այետ մահու նուէր»ներ ժողվել. — կը բաւէ, նողկանքը կ'արգիլէ զիս յառաջանալ —, 7 Սեպտեմբեր 1918 թուակիր «պաշտօնական յայտարարութեամբ» կը բարեհաճէր իմացընել հասարակութեան թէ, «տեղական ազգային գորգոց ներդաշնակ և արդիւնաւոր ընթացքին համար որոշայուտիններ

շած էր, » վերջապէս, «Աղեքսանդրիոյ Խեմական Ժողովոյ տասնինց աշխարհական անգամներու ամբողջական ընտրութիւնը կատարել : » Այդ առթիւ կը յայտնէր թէ ընտրող են, ի միջի այլոց . «Բ. այն ազգայինները որոնք բնիկ են, կամ ընտանեօք երեք և առանց ընտանիքի հինգ տարիներէ ի վեր Եզիպտոս հաստատուած : » (\*)

«Դ. Ազգային տուրքի նուազազոյն բաժինը եղաղ 40 դահ.ի վերջին հինգ տարիները և կամ «Հայրենիքի Տուրք»ին տարեկան նուազազոյն (60 դահ.ի) մասնակցութեամբ 50 դահ ը վճարած են արդէն : »

Տրուած ըլլալով որ վերոյիշեալ «պաշտօնական յայտարարութիւն»ը լրբօրէն Առաջնորդին բազմամեայ լլըրձուկ Տէրէպէլի սկաչտօնավարութիւնը արդարացնող կամ մեղմացնող բառ մը իսկ չէր պարունակէր :

Տրուած ըլլալով որ, «չ միայն հինգ, այլ քանի մը անգամ հինգ տարիներ ազգային տուրքերու ոչ-հատուցման պատասխանատուն ինքը, Առաջնորդն էր, հետեւ

(\*) Ինչպէս, բնբերցող, երբ մեր հայրենակիցներմ մեկ երկու տարի ո եւ է քաղաքակիրք երկրի մը մեջ բնակելով կրնան, առանց դժուարութեան, նոյն երկրացի դառնալ եւ վայելել ազատ քաղաքացիներու բոլոր իրաւունքները, որոնք այլապէս յարգի են՝ քան սրուկ հայու մը իրաւունքները, միքէ բացարձակապէս տրիզէ չէ հայուտնութեան գոյութիւնը պահօնապէս խոստվանող այս օրէնքը, որ իր մեջ կը իսսցնէ մեզի ուղղուած բոլոր զբարտութեանց արդարացումը : Միքէ բոլորովին իմար եւ մեզի հանդեպ բարեգուք չե՞ն կօրիներ՝ որոնք անտեսած են մեզի ուղղած իրենց ամբասանութիւնները բացարձակ կերպով հաստառղ այսպիսի սուր զենքեր :

ւարար, ներելի չեր հինգ տարիներու տուրքերու միանուազ վճարումին պահանջումով ստիպել ժողովուրդը վիժուկ թեմական ժողով մը արտադրել.

Տրուած ըլլալով որ Ազգ. Միուրիւն կոչուած Մարմինը կազմուած էր առանց ժողովրդին հաւանութեան պղտոր ջուրի մէջ ձուկ որսացող անխիղճ բախտախընդիրներէ, և այդպիսի Մարմնի մը որոշումին յարգումը և զործադրութիւնը, բոլորովին հակասահմանադրական, կը զօրէր ամրացնել կուրութիւնը և տղիտութիւնը ժողովրդի մը՝ որ այնքան կը տառապի միայն և միայն իր քաղաքացիական իրաւունքներուն և պարտականութեանց բոլորովին անգիտակ ըլլալուն համար, հակառակ հայրենակիցներուս օգտակար ըլլալու անկարողութեանս՝ Ընտրական ժողովոյ Նախագահին կ'ուղղէի հետեւեալ գրութիւնը.

**Արժանապատիւ Տ. Ռուբէն Քհյ. Գաբիկեան**

**Նախագահ Ընտրողական ժողովոյ**

**Աստ**

**Արժանապատիւ Քահանայ,**

Շաբաթներ առաջ երբ իմացայ որ մեր Ս. Առաջնորդը որոշած էր վերջապէս Աղեքսանդրիոյ թեմական ժողովոյ ընտրութիւնը կատարել, անպատճառ սուրբ հոգիէն դրդուած, փառք տուի Աստուծոյ որ բարեհաճած էր տարիներ առաջ ժողովրդէն ոքանչելապէս փառատրուած մեր Ս. Առաջնորդին խելքը տուն կանչել, թէե քիչ մը չափազանց ուշ, բայց երբ Ընտրողական ժողովոյ պաշտօնական յայտարարութիւնը ստացայ, նշմարեցի որ չարաչար խաբուած էի, որովհետեւ, անոր պարունակութիւնը՝ ուր կը տեսնուին ժողովրդին իրաւունքներուն

բոնարարումը և կապտումը այնքան հաստ պարաններով, ցոյց տուաւ ինծի թէ մեր Ս. Առաջնորդը այնքան ալ սթափած չէր տակաւին :

Արդարեւ, ինչպէ՞ս, որո՞ւ հրամանաւ յանդզնած էք փաստաբաններու ընտրողի և ընտրելիութեան անպայման իրաւունքները որբել Ազգ. Սահմանադրութենէն :

Ինչո՞ւ, որո՞ւ հրամանաւ յանդզնած էք ստորագասել անհամար հայերու ընտրողի և ընտրելիութեան իրաւունքները Ազգային և «Հայրենիք» տուրքերու կանխապէս վճարման :

Գոնէ մեր Ս. Առաջնորդին տարիներ առաջ իր աներասան ընթացքին համար ժողովրդէն հանդիսաւորապէս խայտառակուելէն ետքը՝ դարձեալ ժողովուրդն է յանցաւորը եթէ ան մերժած է ազգային տուրքի հատուցումը ապօրինի և անիրաւ վարչութեան մը :

Եթէ իրօք Ազգին նիւթական շահերը կը պաշտպանէք, միթէ պատասխանատուները մեր Ս. Առաջնորդը և իր փուշտիպանները չե՞ն. ի՞նչ մտայնութեամբ չարազորչները ձգած՝ ընտիր հայերու իրաւունքները կը կապտէք :

Գալով «Հայրենիքի տուրք» ըստածին, եթէ ան ելած է մեր Ս. Առաջնորդին և իր փուշտիպաններուն խելապատակէն, ինչպէս քիչ մը վերը ըստած է, զոնէ տարիներ առաջ մեր Ս. Առաջնորդին ապօրինի և անիրաւ ընթացքին պատճառաւ ժողովրդէն այնքան վայելուչ կերպով նախատուելէն ետքը անոնք երբեք իրաւունք չեն ունեցած այդպիսի տուրք մը հաստատելու: Իսկ եթէ այդ տուրքը ելած է «Եզիպտոսի Ազգ. Միութիւն» կոչուած էլիւ ին խելապատակէն՝ դարձեալ անիրաւ էք ձեր պահանջքին մէջ, որովհետեւ, նախ դուք շատ լաւ զիտէք որ

«Եղիպտոսի Ազգային Միութիւն» ըստածը, հակառակ իր տիտղոսին, կազմուած չէ համայն եղիպտահայ հասարակութեան հաւանութեամբ և կամքով, այլ նա կազմուած է մէկուկէս կուսակցականներէ և իրենց ամենատարրական իրաւունքներու և պարտականութեանց զիտակցութենքն բոլորովին զուրկ միամիտներէ, անմիտներէ և պղտոր ջուրի մէջ ձուկ որսացողներէ։ Ու յետոյ, տարիներէ ի վեր ժողովուրդը անիրաւաբար զրկուած ըլլալով իր օրինաւոր ներկայացուցիչներէն, մեր Ս. Առաջնորդը և իր փուշտիպանները երբեք իրաւունք չեն ունեցած վաւերացնելու կամ ազգայնացնելու այդպիսի տեղապեյական տուրք մը։

Հսէ՞ք։ Կը խնդրեմ, զործելակիրպնիդ քուրդ պէտքութեածէն տարբերութիւն ոը ունի՞ արդեօք։

Եթէ մեր Ս. Առաջնորդը անկեղծօրէն կը փափաքի «տեղական ազգային զործոց ներդաշնակ և արդիւնաւոր ընթացքին, » պէտք է մէկդի դնէ Փաւստոս Բուզանդացիի յիշատակած համբաւաւոր Յովան Եպիսկոպոսի սկըզբունքները և հրաւիրէ բոլոր ազգայինները իրենց ազատքուէարկութեամբ ընտրել իրենց վստահութեան արժանի ներկայացուցիչները՝ որոնք միայն իրաւունք պիտի ունենան տուրքեր դնելու և զանձելու։

Մեր Ս. Առաջնորդը և իր փուշտիպանները անշուշտայն համոզումը ունին՝ թէ իրենց ապօրինի և անիրաւ հրահանգները յարգողները ընտիր, իսկ անոնց դէմքոստացողները յոռի հայեր են։

Որպէս զի, պարզ օրինակ մը, ձեր աշքերով տեսնէք թէ որչափ կը սխալին մեր տեղապեյիները, բացէ՞ք ձեր տոմարները և տեսնէք թէ արդեօք ձեր ուզած կերպով ընտրողի և ընտրելիութեան իրաւունքներ ունէի՞ն այն հարիւրաւոր կամաւորները՝ որոնք իրենց կեանքի գնով

ցոյց տուին թէ ձեր ուզած կերպով ընտրողի և ընտրելիութեան իրաւունքներ վայելողներէն աւելի ընտիր հայեր էին և որոնցմով այնքան կը հպարտանաք դուք :

Գիտե՞մ, այս յստակ խօսքերը չի պիտի հասկնաք, բայց վստահ եղէք — ներեցէք համարձակութեանս — որ ձեր օգտին համար միայն յանձն առի այս թուղթը մրոտելու յոգնութիւնը, որովհետև, ես շատո՞նց հարկ եղածը ըրած եմ տաճիկներու ինծի շնորհած՝ բայց հորթմիտ հայերու ձեռքով կրճատուած իրաւունքներուս վրայ:

Աղեքս. 14 Հոկտ. 1918

Մ. Թէ՛՛ՈՓԻԼԵԱՆ

Ահա վերոզրեալ զրոյս պատասխանը.

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Աղեքս., 25 Հոկտ. 1918-

ԴԻՒԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Թիւ 376

Մեծապատիւ Տիար Մ. Թէ՛՛ՈՓԻԼԵԱՆ

Աստ

Ընտրական ժողովոյ ուղղած ձեր 14 Հոկտեմբեր ամսաթիւ նամակը յանձնուած ըլլալով Քաղաքական ժողովոյ, ներկայիւս կուղանք, որոշմամբ նոյն ժողովոյ, նախ գիտել տալ ձեզի թէ՝ ըստ Սահմանադրական 65րդ յօդուածի տրամադրութեան, անձնական արժանիք ընտրողութեան իրաւունք ունեցողներն են՝ «Արքունի Դիւաններուն և Տէրութեան ուրիշ պաշտօններուն մէջ զտնուողները, վկայեալ բժիշկները, օգտակար գրքերու»

հեղինակները, (\*) դպրատանց ուսուցիչները և ազգին օգտակար ծառայութիւններ մատուցած անձինք : »

Արդ, դուք որ, ազգային ոչ մէկ տուրքի մասնակցած էք և ոչ ալ ազգին ո և է օգտակար ծառայութիւն մատուցած՝ իրաւունք չունիք և չէք կարող ունենալ ընտրող և ընտրելի ըլլալու :

Գալով ձեր վերոյիշեալ նամակին պարունակած նախատինքներուն, Քաղաքական Ժողովը այսու կը պահանջէ որպէս զի, թուականէս մինչեւ ութն օր, յետս կոչումով մը զղջում յայտնէք ձեր այդ զրութեան համար, առանց որոյ ձեր այդ նամակին Գրանսերէն թարգմանութիւնը պիտի յանձնուի տեղւոյս Խառն Դատարանց փաստաբանական կաճառին նկատառման ու յետոյ պիտի տնօրինուի պարտ ու պատշաճը :

### Մնամք աղօթաբար

Առաջն. Փոխանորդ Աղեքսանդրիոյ  
(Սուրագր.) ՌՈՒԲԵՆ ՔՀՅ. ԳԱԲԻԿԵԱՆ

Ի հարկէ, չէի կրնար առանց պատասխանի թողուլայս նամակը, հետեւաբար կ'ստիպուէի հետեւեալ լուսաբանութիւնը տալ Ա. Առաջնորդին.

(\*) Անտե՛ւը, ընթերցողը չի պիտի կարծէ թէ Աղեքսանդրիոյ մէջ, իբր նեղինակ՝ ընտրողի եւ ընտելիի իրաւունքը վայելելու համար ուզած եմ այս տողերը գրել, որովհետեւ, ինքն ալ զիտէ որ միայն «լէ լէ, լէլէ խրպանէ», Խասըմ փառա մեյտանէ,» կամ «աղջիկ մ 'ելլէր փեններէն, մէտէս կ'ուզէ իննիրէն» ական գրականութեամբ պարապողներուն յատկացուած է սոյն պատիւը եզիպտահայ Առաջնորդարաններու բով :

**Շնորհազարդ թորգոմ Եպիսկոպոս Գուշակեան**

**Առաջնորդ Եպիսկոպոսահայոց**

**Աստ**

**Շնորհազարդ Ռախունակ ,**

Ներկայիւս կը պատասխանեմ 25 Հոկտ . 1918 թւակիր ձեր 376 թիւ խաժաբանութեան :

Ալթունեանի ժառանգական խնդրոյ առթիւ, (\*) ժոտաւորապէս չորս տարի առաջ, ձեր արձակած ձայնարկութիւնները — «Այդ ժառանգութիւնը Բարեգործականին կը պատկանի, » մինչդեռ Բարեգործականական սուս վզրկիկ մը երկու սիրեկ միայն կը պահանջէր, «Երկու

(\*) Որովհետեւ վերջին անգամն է որ կը յիշուի Ալբունեան ժառանգական խնդիրը, ընթեցողին հետաքրութեան գոհացում սալու համար՝ հոս կը դնեմ անոր վերջին փուլը :

Երբ, իբրեւ արտակարգ լիազօր պատուիրակ Հայ Հանրապետութեան՝ Պ. Ա. Խատիսեան Եպիսկոպոս կ'այցելէր, 17 Օգոստ . 1920, պատմելու համար Եպիսկոպոսահայոց բոլոր այն անվերջանալի տանջանքները, զոհողութիւնները, չարչարանքները, մարտիրոսութիւնն ու հերոսութիւնը որոնց շնորհիւ Անոնք կրցած էին հիմնել Հանրապետութիւնը, Այրի Տիկին Ա. Աղլաղանեան, ծնեալ Ալբունեան, անոր կը ներկայանար իսկոյն՝ պատմելու համար իրեն դեմ գործադրուած հայ փառաներու, Եպիսկոպոսներու եւ էֆենտիներու ընթեցողին արդէն ծանօթ բոլոր հերոսութիւնները, զրկանքներն ու անիրաւութիւնները՝ որոնց Ենթարկուած եղած էր ամբողջ պատերազմի միջոցին, եւ կը խնդրէր որ իր լիազօր պատուիրակի

հազար ոռկին քիչ փարոս է, տիտան՝ » «Աղքատ կինը  
անանկ զլխութե կը գնէ» — զիս քաջապէս վոտտհացու-  
ցած էին թէ զուք հոյ նովպետի մը պարտառութիւն-

հանգամանգով միջամտէր իր գործին՝ փուրացնելու հա-  
մար անոր կարգադրութիւնը, խոստանալով անոր տա-  
մադրութեան տակ դնել կարեւոր գումար մը :

Պ. Խատիսեան կը նետարբերուէր այս խնդրով եւ կը  
խնդրէր որ գրաւոր ներկայացուէր խնդիրը իւեն : Իր  
ցաւերուն մօսալուս վախճանը տեսնողի մը յորսերով՝  
կինը խսկոյն գրաւոր ալ կը կրկնէր իր խօսքերը : Բայց  
կ'երեւի թէ սատկած հաշիշմի ներու հոգեհանգստներու  
պատրաստութեանց ու արարողութեանց հոգերը — ուռիս  
թէ հաշիշմի մը հոգին հանգսի պէտք ունեցած ըլլար,  
այն ալ Գուշակեանի մը ըրած, թէեւ Պ. Խատիսեանի  
ներկայութեան, յանձնարարութեամբ — բանի մը վայր-  
կեան խսկ պարապ չի ձգեցին Պ. Խատիսեան՝ որ գոնք  
պատասխան մը տար այս հայ կնկան : Եւ երբ, անոր  
Եզիպտոսէն մեկնումին օրը, կինը մեծ դժուարութեամբ  
անոր կը ներկայանար պատասխան մը տոնելու համար,  
Պ. Խատիսեան կը յայտարարէր թէ ինքը գործը մի կարող  
դիւանագետի — Պ. Պունուկեանի թէ ձունուկեանի, լաւ  
շեմ յիշէր — խնամքին յանձնած էր : Հետարբերուելով  
այս ականաւոր — ապա թէ ոչ ինչպէս անոր համբաւը  
մինչեւ Պ. Խատիսեանին հասած պիտի կրնար ըլլալ —  
դիւանագետի մասին՝ զոր աններելի անհոգութեանս պատ-  
ճառով չէի ճանչցած, հակառակ երկարամեայ Եզիպտա-  
նայ փատաքան մը ըլլալուս, կ'իմանայի թէ յիշեալ  
«կարող դիւանագետը» հասարակ գլանիկ գլուրող ընկեր  
մ'էր :

տոս Բուզանդացիի յիշատակած Յոհան եպիսկոպոսի սկզբունքներու փոխան՝ Սահմանադրութեան էական սկզբունքները կ'աւանդուին :

Թէև նախորդ զրութեամբս մտքէս անգամ չէր անցած բողոքել ընտրողի և ընտրելիութեան իրաւունքներէն զրկուած ըլլալուս համար, իրողութիւններ զորս բոլորովին կ'անզիտանայի, բայց որովհետև վերը յիշուած ձեր շամբշաբանութեամբ կ'ըսէք թէ ազգային ո՛չ մէկ տուրքի մասնակցած ըլլալուս համար զրկած էք զիս ընտրողի և ընտրելիութեան իրաւունքներէս, ազնուութիւնը պիտի ունենաք ըսելու թէ ե՞րբ պահանջեցիք ինձմէ ազգային տուրքը և ե՞րբ մերժեցի զայն։ Կամ թէ, լաւզիտնալով որ ըստ Սահմանադրութեան ազգային տուրքը տարեկան է, վեց երկար տարիներու միջոցին արդեօք խղճմտութիւնը ունեցա՞ք, զոնէ մի անգամ, խորհելու անոր կանոնաւոր բաշխման և հաւաքման մասին։

Այսպէս, երբ մարդ կը տեսնէ թէ առանց ընտրութեան պատրուակին երբեք չի պիտի խորհէիք, այն ալ քրդօրէն, ազգային տուրքի մասին, կրնա՞յ երեւակայել ժմերտագոյն և անվկանդ պարէտ մը որ ձեզմէ աւելի յոռի կերպով կատարէր իր պարտականութիւնները։

Չեմ ուզէր կրկնել ինչ որ ըսած եմ նախորդ զրութեամբս «Հայրենիքի տուրք» ըսուածի մասին, և վերստին ձեզի խորհուրդ կուտամ մարսել յիշեալ զրութիւնս։

Չեր յիշեալ զրութեամբ կը յայտնէք թէ «Քաղաքական ժողով» նախատալից զտած է նախորդ դրութիւնս։ Խա՛չ որ կ'անզիտանայի «Քաղաքական ժողով» մը զոյութիւնը։

Երբուշնէ՞ ի վեր արդեօք ան զոյութիւն ունիւ

Տարիներ առաջ ձեր ապօրինի և աներասան ընթաց-

տոս Բուզանդացիի յիշատակած Յոհան եպիսկոպոսի սկզբունքներու փոխան՝ Սահմանադրութեան էական սկզբունքները կ'աւանդուին :

Թէև նախորդ զրութեամբս մտքէս անգամ չէր անցած բողոքել ընտրողի և ընտրելիութեան իրաւունքներէն զրկուած ըլլալուս համար, իրողութիւններ զորս բոլորովին կ'անզիտանայի, բայց որովհետև վերը յիշուած ձեր շամբշաբանութեամբ կ'ըսէք թէ ազգային ո՛չ մէկ տուրքի մասնակցած ըլլալուս համար զրկած էք զիս ընտրողի և ընտրելիութեան իրաւունքներէս, ազնուութիւնը պիտի ունենաք ըսելու թէ ե՞րբ պահանջեցիք ինձմէ ազգային տուրքը և ե՞րբ մերժեցի զայն։ Կամ թէ, լաւզիտնալով որ ըստ Սահմանադրութեան ազգային տուրքը տարեկան է, վեց երկար տարիներու միջոցին արդեօք խղճմտութիւնը ունեցա՞ք, զոնէ մի անգամ, խորհելու անոր կանոնաւոր բաշխման և հաւաքման մասին։

Այսպէս, երբ մարդ կը տեսնէ թէ առանց ընտրութեան պատրուակին երբեք չի պիտի խորհէիք, այն ալ քրդօրէն, ազգային տուրքի մասին, կրնա՞յ երեւակայել ժմերտագոյն և անվկանդ պարէտ մը որ ձեզմէ աւելի յոռի կերպով կատարէր իր պարտականութիւնները։

Չեմ ուզէր կրկնել ինչ որ ըսած եմ նախորդ զրութեամբս «Հայրենիքի տուրք» ըսուածի մասին, և վերստին ձեզի խորհուրդ կուտամ մարսել յիշեալ զրութիւնս։

Չեր յիշեալ զրութեամբ կը յայտնէք թէ «Քաղաքական ժողով» նախատալից զտած է նախորդ դրութիւնս։ Խա՛չ որ կ'անզիտանայի «Քաղաքական ժողով» մը զոյութիւնը։

Երբուշնէ՞ ի վեր արդեօք ան զոյութիւն ունիւ

Տարիներ առաջ ձեր ապօրինի և աներասան ընթաց-

քին միջոցին ծնառ ան, թէ տարիներ առաջ ձեր աներասան յանդզնութեան պատճառով ժողովրդէն այնքան ըմբռն դաս մը առնելէն և այանուն Սուրբ Երրորդութեանց ձեր պաշտօնավարութենէն հրաժարելէն ետքը:

Կը յուսամ թէ ձեզի ուղղուած ժողովրդային զովացուցիչ նուազալի «ալէլուեաները յիշելով պիտի կրնաքայս հարցումներուս պատասխանել:



(Եր գտած սիզերէն նմոյց մը եւ ինքը)

Բայց մինչ այն, և յարգելով հանդէս ձեր փշտիպանաց ունեցած ձեր գովելի գթացկութիւնը, թոյլ տուէք, կը խնդրեմ, յիշեցնել ձեզի թէ Սահմանադրական ժողովրդի մը համար մեծ նախատինք է ձեզի պէս Առաջնորդի մը փուշտիպանակոյտին «Քաղաքական ժողով» անուն տալը:

Այսպէս, և եթէ լաւ կարդաք նախորդ զրութիւնս, պիտի տեսնէք որ ձեր զրպարտութիւնը ձեր «Քաղաքական ժողով»ի նման բոլորովին անգոյ, երեւակայական է:

Գալով ձեր սպառնալիքին, որովհետեւ երբեք տեսնուած չէ որ անկտուց ոռեկաններ ազատադէմ կանդի մը սպառնան, հաւատացէք որ տամկասուն և զեղծասուն քենեկասկ թափչորդի մը և ծաւի խօսնակ փուշտիպան մը

աւելի վարպետորդի հնարք մը չի պիտի կրնային ցոյց տալ ձեզի :

Տի՛ օ՞ն, անկտուց ուսեկան, առանց երկարօրէն անդամելու զգեստաւորուեցէք ձեր վակասով և շամքրակով, տուէ՛ք ձեր ճոկանը ձեր փուշտիպաններէն մէկուն ձեռքը, և ձետ ընդ ձետ դիմեցէք իյառն Դատարանաց Փաստաբանական կաճառին, կամ ուր որ կ'ուզէք։ Tableau! Բայց ո՞չ, ներողութիւն, քանի որ յանձն առի կաթողի դաստիարակի մը դերը, չեմ ուզեր ձեզ այդ ծուռ շաւղին մէջ թողուլ։

Գիտե՛մ, սպառնալիք մը ընելէ աւելի ուզած էք ցոյց տալ Փաստաբանական կանոնազրութեան մասին ունեցած ձեր հմտութիւնը։ Որովհետեւ, եթէ իրօք հայ փաստաբաններու վարք ու բարքին նախանձախնդիր եղած ըլլայիք, քաջ դիտեմ որ շատոնց դիմած պիտի ըլլայիք իյառն Դատարանաց Փաստաբանական կաճառին՝ անոր ուշադրութիւնը հրաւիրելու համար ձեր փշտիպան մէթը թելլիի — մէթը տ'օթէլ — անկարգ ընթացքին վրայ, որը, հակառակ պաշտօնական այնքան աղդաբարութիւններու, թէ փաստաբանի մը երբեք ներելի չէ իր արհետէն զատ ուրիշ զործերով զբաղիլ, ձեր բարձր հովանաւորութեան չնորհիւ նոյն իսկ տրոտ կը շահագործէ։

Շիտակն ըսէք, «Հայ Միութեան» շահագործած տրոտին հասոյթէն քանի՞ն ձեզ կը տրուի։ Հասկնալի է. այդպիսով անոնք ազգին օգտակար ծառայութիւններ կը մատուցանեն՝ չէ՞, ապա թէ ոչ ինչպէ՞ս իրբեւ «ազգ» ընտրելիներ» պիտի ներկայացնէիք վիրենք հասարակութեան։

Շատ տարիներ առաջ ձեզմէ աւելի հղօր վզրուկ մը ըսած է թէ «զրամը հոտ չունի»։ բայց ես կ'զզուշացնեմ զձեզ այդ սխալ վարդապետութենէն, ընդհակառակը՝ հարցուկի մը դրամով սնածը՝ հարցուկ, թափիչի մը դրա-

մով սնածը՝ թափիչ և կապէնքներով սնածը տամկութիւն կը հռտին :

Ասկէց մեկնելով, ձեզ տեսնեմ, ձեր փշտիպաններուն հռտերէն զուշաեկցէք անոնց ծագումն ու որպիսութիւնը, և ձեռք առէք պէտք եղած միջոցները դտելու համար ազգային բարոյականը՝ որուն պարտաւորեալ պահպանն էք դուք։ Ah ! le beau gardien !

Վերջացնելէ առաջ կ'ուզեմ փոքրիկ դիսոլութիւն մը ընել :

Քանի որ ես դեռ նոր փալանաղերծ մէկը «Արժանապատիւ Քահանայ» կը կոչեմ, և զձեզ «Շնորհազարդ Եպիսկոպոս», որու խորհրդով և ի՞նչպէս յանդգնեցաք սրբել իմ տիտղոսը. ձերինին պէս այնքան դիւրութեամբ ձեռք անցուած կարծեցիք զայն :

Ի տեսութիւն պարտ ու պատշաճ տեղը :

Զեր աղօթից բնաւ պէտք չունեցող

Աղեքս. 1 Նոյեմ. 1918

Մ. Թէ՛ՌԻԿԵԱՆ

## ԳԼՈՒԽ Ը.

### ՀԱՅՈՒՏԻՃ ՄՏԱՒՈՐԱԿԱՆԸ

Տարակոյս չունէի թէ նամակս ստանալուն պէս՝ եզիպտոսի Հայոց չնաշխարհիկ Առաջնորդը իր փուշտիպաններուն խիստ ազգեցիկ աջակցութեամբ իսկոյն հարկեղած պատրաստութիւնները պիտի տեսնէր և պարտ ու պատշաճը տնօրինելուն համար դէմս՝ քանի որ, ինչպէս ընթերցողն ալ կը անսէ, ո՞չ միայն «յետս կոչումով մը զղջում» յայտնելէ շատ հեռու էի, այլ նաև, աւելի հասկնալի և պատկերավից կերպով բացատրած էի իրեն նախորդ նամակիս պարունակութիւնը՝ զոր «նախատական» գտած էր :

Քանի մը օր ետքը զրասենեակս կ'այցելէր խիստ հազուագիւտ բարեկամներէս մին, Տիար Գեորգ Թոփ ծախեան:

\* \* \*

Այս աննման բարեկամիս այցելութեան նկարագրութիւնը ընելէ առաջ, կ'արժէ որ քանի մը խօսքով զինքը ներկայացնեմ ընթերցողիս՝ որպէս զի ան ի վիճակի ըլլայ գնահատելու մեր խօսակցութիւնը ինչպէս որ պէտք է:

1897ի վերջերը ճանչցած էի զինքը Ցիւրիս՝ ուր, Գերմանիոյ և Աւստրիոյ կարգ մը համալսարաններ յաճախելէ յետոյ, կատարելագործելու վրայ էր բնական զիտութեանց մասին ստացած իր հմառութիւնը՝ որու չնոր-

հիւ, շատ չանցած, պիտի կրնային շահազործուիլ Հայուստանի այնքան կոյս ու հարուստ հանքերը :

Անդադար շարժման մէջ վայրկեան մը խոկ չէր ուղեր կորսնցնել իր սիրած ու պաշտած մասնազիտութեան պարապումէն դուրս. խոկ կիրակի օրերը, հացով, պանիրով և զանազան տակեղէններով լեցուն տուգրակը շալակը առած՝ ինքզինքը կը նետէր լեռները, ձորերն ու անտառները, զործնական կերպով ուսումնասիրելու համար հող, քար, ջուր, փայտ, բոյս, սոլուն, միջատ, մէկ խօսքով ամէն ինչ՝ որոնցմով կազմուած է տիեզերքը իր բնակչութեամբ և զարդերով:

Շատ շուտով բաժնուած էի անկէ, և ընդ միշտ չկարենալ զայն տեսնելու հաւանականութիւնը մեծ յուզում պատճառած էր ինձ :

Երբ 1904ի աշնան ինծի բոլորովին անծանօթ Աղեքսանդրիա կը հասնէի, չքնաղ բարեկամիս ներկայութիւնը խիստ կ'ուրախացնէր զիս։ Բարեբախտաբար, շնորհիւ անոր գործնականութեան և հաղորդականութեան՝ իր առողջութեան մասին յլացած կասկածներս շուտով կը փարատէին :

Անոր արագաշարժութեան հսկայօրէն սաստկութիւնը, հակառակ ետեւը անցած տարիներու շարքին, խիստ կը զարմացնէր զիս։ Բարեբախտաբար, շնորհիւ անոր գործնականութեան և հաղորդականութեան՝ իր առողջութեան մասին յլացած կասկածներս շուտով կը փարատէին :

Փոխանակ Զուիցերիոյ կամ մեր իրարու անծանօթ այնքան երկար տարիներու կեանքի մասին խօսելու, յանկարծ naturforscher բարեկամս կը հարցնէր ինծի.

— Շատ գրամ ունի՞ս :

— Ի հարկէ ոչ, ապա թէ ոչ հոս ինչ բան ունէի :

— Ափսո՞ս, կը հառաչէր բարեկամս, եթէ շատ գրամ ունենայիր՝ խելոյն պիտի հարստացնէի քեզ :

— Բայց բարեկամ, եթէ շատ զրամ ունեցած ըլլայի,  
ի՞նչ պէտք պիտի ունենայի հարստանալու :

— Զա՞ս զիտէր, ընելիք անանկ զործեր կան որ . . .

— Ի՞նչ զործ :

— Ի՞նչ ըսեմ, շատ զրամ չանիս որ . . .

— Բայց բարեկամ, զիտես որ հոս եկած եմ զործ մը  
ճարելու համար, ինչո՞ւ կը յամափիս յարմար զործ մը  
ցոյց տալ ինձի:

— Քեզի յարմար զործեր շատ, միայն թէ շատ  
զրամ պէտք է :

— Օրինակի համա՞ր :

— Քեզի կըսեմ միայն այն պայմանով որ ո՞չ ոքի  
բան մը չըսես :

— Այդ մասին ունեցած կասկածդ բոլորովին ան-  
տեղի է, քանի որ զիտես թէ նոր եկած եմ հոս և ոչ ոք  
չեմ ճանչնար :

— Լա՛ւ, անանկ է նէ մտիկ ըրէ : Այսօր Spining ի,  
Buildings Lands ի, Western Egypt ի, Menzaleh ի, Ritz  
Hotels ի և Nile Colde Storage ի արժեթղթերը, ինչպէս  
նաև Ashmouni, Afifi, Nubari, Fair և Fulli good fair և  
Sakallarides բամպակները և անոնց կուտերը խիստ պիտի  
բարձրանան : Առանց ժամանակ կորսնցնելու՝ յիշեալ ար-  
ժեթղթերու իւրաքանչիւրէն հազարական, յիշեալ բամ-  
պակներու իւրաքանչիւրէն հազարական խանթար, և ա-  
նոնց կուտերէն մէկ քանի հազարական արտեպ զնէ՝ որ  
վալը արդիւնքը տեսնես :

Բարեկամիս մէկ շունչով արտայայտած այս թան-  
կազին խորհրդի տպաւորութեան տակ ապշած կը մնայի՝  
ո՞չ միայն յիշեալ արժեթղթերուն, բամպակներուն և ա-  
նոնց կուտին բոլորովին անտեղեակ ըլլալուս համար,

այլ նաև, որովհետեւ կ'զգայի թէ այնքան խնամքով և յոզնութեամբ ձեռք անցուցած քաղաքական տնտեսուզիտութեան քիչ թէ շատ հմտութիւնս naturalisteի մը լոյսերուն կը կարօսէր կատարելազործուելու համար :

Սոսկ վրաս ունեցած իր այդ զերալանցութեան յափշտակումը խանգարելու համար էր որ կը հարցնէի իրեն՝ թէ ի՞նչպէս կրնար գիտնալ որ յիշեալ արժեթղթերը, բամպակները և անոնց կուտերը պիտի բարձրանային :

-- Ամէն բան հասկնալու հետաքրքրութիւնդ աններելի կը զտնեմ, կը պատասխանէր ան բարկութեամբ :

— Ի՞նչո՞ւ, սիրելիս, չի՞ պիտի ուզէիր որ համոզումով զործ տեսնէի :

— Այո՛, բայց քիչ մ'ալ վստահութիւն ունենալու հա վրաս :

— Քու շնո՞իւ համոզումով զործի ձեռնարկելու աւելի պիտի զօրացնէ վրադ ունեցած վստահութիւնս :

— Անանկ է նէ մտիկ ըրէ որ լսեմ. նրէկ իրկուն կլոր սեղանս այդ պատզամը յայտնեց, թէ այսօր յիշեալ արժեթղթերը, բամպակներն ու անոնց կուտերը անպատճառ պիտի բարձրանան :

— Բայց բարեկամ, կլոր կամ քառակուսի սեղան մը ի՞նչպէս կրնայ այլպիսի մարզարեռութիւններ ընել :

— Քեզմէ բան մի՛ աւելցնէր ըսածներուս վրայ, ես «կլոր» ըսի միայն :

— Շա՛տ լաւ, կլո՛ր. բայց եթէ կլոր սեղանդ այդպիսի աստուածային խօսքեր ընէր, ուրիշներ ու իմացած չի՞ պիտի ըլլային :

— Հարկաւ իմացած պիտի ըլլային, բայց ո՛չ հասկըցած, կ'ըսէր բարեկամս, յայտնի զմայլումով մը :

— Բայց ի՞նչպէս կը լլայ որ կլոր սեղանիդ լեզուէն միայն դուն կը հասկնաս , և ոչ ուրիշներ :

— Այդ խիստ պարզ է, մտիկ ըրէ որ հասկնաս , միամիտ քեզի : Քանի մը մարդոց հետ բաց ձեռքերնիս կլոր սեղանիս վրայ կը դնենք , և քիչ մը սպասելէ ետքը , մտքէս կը հարցնեմ սեղանիս . «Սեղա՞ն , վաղը այս ու այն արժեթղթերը , բամպակներն ու անոնց կուտերը պիտի բարձրանա՞ն թէ ոչ ,» ու կ'աւելցնեմ բարձրածայն , եթէ այո՛ , ոտքովդ երեք անգամ զա՛րկ տախտակամածին .» այս պարագային եթէ սեղանը խօսի , ինձմէ զատ ո՞վ ի՞նչ կրնայ հասկնալ :

— Ինչպէ՞ս , կլոր սեղանիդ պատզամները երբեք իրականացա՞ծ են , կը հարցնէի իրեն :

— Միշտ իրականալի , պայմանաւ որ համբերելու կարողութիւնը ունենաս . օրինակի համար , եթէ երէկ հինգ վայրկեան եւս դիմացած ըլլայի գնած արժեթղթերուս անկումին , կորուստս այնքան մեծ չի պիտի ըլլար :

— Բայց բարեկամ , եթէ կլոր սեղանիդ յարզի պատզամները նոյն խել քեզի օգտակար չեն կրնար ըլլալ , ի՞նչպէս պիտի փափագէիր որ ես ալ փորձուէի անոնց հետեւիլ :

— Ճի՛շտ այդ բանին համար էր որ նախապէս ուզեցի զիտնալ թէ շատ դրամ ունէի՞ր թէ ոչ :

Եւ շատ չանցած , օր մ'ալ կ'իմանայի որ մեր սքանչելի naturforscherը «Ա՛խ , ի՞նչ ըսեմ ան Օհանեանին՝ որուն գծախէ՛» ըսի , ծախեց , «գնէ՛» ըսի՝ գնեց , փոխանակ պատուէրներուս բոլորովին հակառակը գործադրելու , աւանակը» կաղկանձելով ձգած էր կլոր սեղան , արժեթուղթ , բամպակ , կուտ և սակարան , և իր արտակարգ արագաշարժութեան շնորհիւ միայն յաջողած էր

հեռանալ Աղեքսանդրիային անմերկ ու անիշտաս, թոքցընելու համար իր ողորմելի ցոռկը Ափրիլիան հաստրակածային թաւ ու խիտ անտառներու մէջ։

Մեծ պատերազմի սկիզբները Աղեքսանդրիա վերադած էր ան՝ Նիամ-Նիամներէն ուսած սա զոնագործական խիստ յարգի հնարք մը շահողործելու համար։

Հակառակ իր թախանձանքին և իր հանգէստ ունեցած բարեացակամութեանս թէեւ չէի կրցած իրեն այնպիսի միջոց մը ցոյց տալ որով կարենար պատուական արտադրութենէն մեծ մեծ սպառումներ ընել՝ առանց յայտնելու թէ ինքն էր այդ աննման սապօնին սանդծողը Աղեքսանդրիոյ մէջ, դարձեալ՝ ինծի հանգէստ իր բարեկամական սէրն ու վատահութիւնը զզալի կերպով արտայայտելու համար, կ'ուզէր շարունակ ինծի յանձնել իր վաճառականական խիստ կարեւոր դատերը։

Այս ազնիւ զզացումներէն մլուած՝ օր մ'ալ քունէս արթնցուցած էր զիս կարծիքս առնելու համար իր հետեւեալ խիստ կարեւոր դատական խնդրի մասին։ Արագ վաճառականէ մը իւրաքանչիւրը 110 օխա 3 տակառ բամպակի ձէթ զնած էր սապօնին պատրաստութեանը համար, օխան 7 դահեկանէն։ Տակառներուն ապրան, իւրաքանչիւրը 7 նական օխայի հաշւով, զեղչած և ձէթին փոխարժէքը վճարած էր։ Միայն թէ, ձէթը պարպելէն ետքը, հաստատած էր որ տակառներուն ապրան 22½ օխա էր, փոխանակ 21 օխա ըլլալու։

Դատավարութեան սկսելէ առաջ կ'ուզէր որ զործին յաջողութեան ալ երաշխաւորէի։

Օձիքս աղատելու յոյսով զուր տեղը առարկած էի վաւերաթղթերուն պակասութիւնը, որովհետեւ, շատ չանցած վերստին կը ներկայանար բոլոր վաւերազրերով և

Կ'ստիալէր զիս խոստովանիլ իր զործը յաջող կերպով  
գլուխ հանելու բացարձակ անկարողութիւնս:

\* \* \*

Իր այցելութեան նպատակը ինծի ծանուցանելու  
համար յանկարծ կը զոչէր Թոքծախեան, քրքջալից.

— Գիտե՞ս, ես ալ փուշտիպան եմ:

Ընթերցողը դիւրութեամբ կ'զգայ տպաւորութիւնը  
զոր կ'ընէր վրաս աննման բարեկամիս այս անհասկնալի  
բացազանչութիւնը, մանաւանդ որ, նոյն միջոցին խիստ  
կարեւոր դատի մը conclusionներու պատրաստութեամբ  
զբաղած էի:

Խորհուրդ մը տալէ, կամ զինքը շնորհաւորելէ ա-  
ւելի՝ զարմանքս ցրուելու համար էր որ կը հարկադրուէի  
հարցնել իրեն.

— Ո՞րպիսի փուշտիպան :

— Զե՞ս զիտէր, մեր Առաջնորդին փուշտիպաննե-  
րէն, որովհետեւ ես ալ Քաղաքականի անդամ եմ:

— Բայց ի՞նչպէս, միթէ ընտրութիւնները տեղի ու-  
նեցա՞ն:

— Դեռ ոչ, բայց ես շատոնց Առաջնորդէն ընտ-  
րուած եմ, և քանի մը օրէն կատարուելիք ընտրու-  
թիւնները քեզիպէսներուն ցոյց պիտի տան թէ ժողո-  
վուրդը Առաջնորդին պէս լաւ ընտրութիւն չի կրնար  
ընել:

Թարեկամիս այցելութեան նպատակը հասկցած ըլ-  
լալով՝ դիտմամբ կը լոէի, անոր հեռացումը դիւրացնելու  
համար, երբ ան վերստին կը բացագանչէր.

— Ախպար, ատ ինտո՞ր ալ կրցար շինել ու յար-  
մարցնել.

— Ի՞նչ լինած եմ որ... :

— Զե՞ս զիտէր, իշտէ սա «փուշտիպան» բառը :

— Կը սխալիս, բարեկամ, այդ բառին անծանօթ հեղինակներն են մեր անծանօթ նախնիքը, և ոչ թէ ես :

— Ի՞նչ, կ'ուզես ինծի հայերէ՞ն սովորեցնել . չե՞ս զիտէր որ Հիւնկէրպէյէնտեանի բոլոր զործերը զոց ընելու աստիճան կարդացած եմ առանց այդ բառին հանդիպած ըլլալու :

— Հակառակ Հիւնկէր կամ իմամպայընտըեաններու անծանօթութեանս՝ քեզ կը վստահացնեմ որ այդ սքանչելի բառին անծանօթ հեղինակները մեր նախնիքը եղած են :

Ու զի՞նքը համոզելու համար՝ կ'սկսէի կարդալ .

«Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ, և հրովարտակ՝ արքունի մատանեաւն, զի զնացեալ երթիցէ նա ի բերդն յԱնդմըշ, և զիարդ և կամք իցէ նորա, զորօրինակ և խնդրեացն՝ արասցէ կազելոյն Արշակայ, որ յառաջ թագաւորեալն էր ի Հայու. Եւ չոզաւ Դրաստամատն հանդերձ փշտիպանաւն և հրովարտակաւն արքունի յԱնուշ բերդն, և ետես զտէրն բնակ, և արձակեաց զԱրշակ ի կապանացն երկաթեաց ի ձեռակապացն և յոտիցն երկաթոց և յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն, և լուաց զզլուխ նորա, և լոզացոյց զանձն նորա : Եւ ազոյց նմա պատմուճան ազնիւ. և էարկ նմա բազմականս, և բազմեցոյց զնա . և եղ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց խագաւորաց, և եղ առաջի նորա զի՞նի որպէս օրէն էր թագաւորացն, սթափեաց զնա և մխիթարեաց, և ուրախ առնէր զնա զուսանօք : » (\*) Կամ թէ «իբրև սկսաւ բազմանալ ընդ ամենայն աշխարհն այնպիսի պղծազործ

(\*) Բուզանդարան Պատմ., Դպր. Ե., Գլ. Է. :

խառնակութիւն, յանդզնեցան և եւս կանայք փշտիպանացն յաւուր կիրակէի անցուցանել զճրագունս եկեղեցւոյն և պատառել զհանդերձս հաւատաւոր կանանց : » (\*)  
Եւ կամ թէ «Եւ Տէր Ստհակ Ասպետ յարձակեալ նիղակաւ ի վերայ փուշտիպանաց սաղարի, վրիպեցին ի միմիանց զնիղակսն երկոքեան. և մօտեալ առ մի միանս երիշարացն՝ բուռն հարեալ զմիմիանց հերաց և կըուէին : » (\*\*)

**Փոխանակ** չնորհակաւ ըլլալու ինծի՝ որ հակառակ խիստ զբաղած ըլլալու՝ մեր ընտիր մատենազրութեան այս պատուական դասը կուտայի իրեն, բարեկամս, զինաթափ ըլլալէ շատ հեռու, արգահատալից շեշտով մը կը գոչէր .

— Օ՛հ, օ՛հ, սըվոր նայէ, ելէր ինծի մեռած բաներու մասին կը խօսի :

— Լոէ՛, սզորմելի, մեռած բանը դուն ես, ըսելով կուզէի սաստել զինքը բայց ան անպատում զոհունակութեամբ կը հարցնէր ինծի .

— Ախպա՛ր, ի՞նչ է «պան» մասնիկին դերը մեր լեզուին մէջ, և կամ թէ, զործդ դիւրացնելու համար, ինչե՞ր կը նշանակեն ջորեպան, դռնապան, բաղնեպան, ջալարցպան. իւսպան և պարտիզպան բառերը :

— Այդ բառերը այնքան հասկնալի և անոնց նշանակութիւնները այնքան պարզ են որ բացատրելը աւելորդ պիտի ըլլար :

— Ի՛շտէ, անանկ ալ սա քու զործածած «փուշտիպան» բառդ այնքան հասկնալի է և անոր նշանակութիւնը այնքան պարզ հասկցա՞ր հիմայ :

(\*\*) Եղիշէ, Պատմ. Վարդ. Ցեղանակ Երրորդ :

(†) Փարպեցի, Պատմ. Հայոց, Գ. Դրուակ, ՀԱ. :

Ըստիք չկար, ովետք էր խոնարհիլ թռքծախեանի հայկաբանական հմտութեան առջև :

Յաղթողի, գոհունակութեամբ և վեհանձնութեամբ պարագուածի ախոռը վիճակու սփոփելու ազնիւ դիտումով ան կ'ընդունիլ լոին ու անասելի խորհրդածութիւններու որոնց անզթօրէն ենթարկած էր զիս իր տարածամ այցելութիւնը, և կը յայտնէր .

— Դիտե՞ս, ինձէ զատ ժողովականներէն ո՛չ ոք չի հասկցաւ «ուշա վզրկիկ»ին նշանակութիւնը, և ոչ ալ ճանչցաւ անոր ենթական միայն թէ, նամակիդ ընթերցման առնեն Արմենակ էֆ. սկսաւ նատած տեղը երերալ և ասոր անոր երեսը նայիլ բան մը հասկնալու դիտումով :

— Յարակոյս չունիմ որ իբրև հնամեայ zöging, «վզրկիկ»ին նշանակութիւնը հասկցած կրնաս ըլլալ. բայց անոր ենթական ճանչցած ըլլալդ շատ կը զարմացնէ զիս :

— Ինչո՞ւ, միթէ կը կարծես որ զո՞ւն միայն Մելքոնեանի և կամսարականի կոխներուն հանդիսատես եղած ըլլալու առանձնաշնորհը ունեցած ես :

— 'Օ՞՛, ինչե՞ր կը բաջալէ այս արմուղ արարածը, կըսմ ինքնիրենս :

— Յարեկամ, զուր տեղը այդպիսի խորհրդաւոր հովեր առնելդ բոլորովին անօգուտ է, որովհետեւ, այս անգամ, գժբախտաբար, - չի սկսուի կրնաս զրաբար օրինակներով համոզումներս խախտելու փորձեր ընել.

— Պիտի հաճէի՞ր քիչ մը աւելի հասկնալի կերպով խօսիլ :

— Ասկէ աւելի հասկնալի ի՞նչ կայ. քեզի կ'ըսեմ թէ վզրկիկ բառը կամսարականին համար գործածած ես, և ես այդ բառը սորված էի եղբօրդէս՝ որ իր կարգին լսած էր Մելքոնեանքն :

— Բայց բարեկամ, Մելզոնեանը մեր արզի լեզուն  
տեղեկութիւն չունի, ի՞նչպէս կրծայ այս ռակեղարեան  
բառին հմտւա ըլլալ :

— Չեմ զիտէր, միայն թէ, կամսարականին քով  
աշխատազ եղբայրս ինձի պատմած է թէ՝ ամէն անգամ  
որ, ծխախոտի առուծախի ատեն, Մելզոնեանը կամսա-  
րականին մէկ խօնճազուրիւնը կը բռնէ, կ'ըսէ եղէր.  
«Մօ՛, սա վզրկիկիննայէ, Խայսէրցի մը խարելու ելէր է» :

— Բայց բարեկամ, ի՞նչ կը հասկնաս գուն այդ  
բառով :

— Ի՞նչ կը հասկնամ... Ահա քեզի Լայրցիկի համա-  
լսարանի կենդանական բարուց der berühmter professor  
Herr Löbelի մեզի աւանդած սահմանը այդ բառի մա-  
սին՝ զոր նոյնութեամբ կը յիշեմ տակաւին .

«Վառած սիկարէթիդ ջուրի մէջ մարած ատեն ար-  
ձակած փափսուքին պէս փափսուքը՝ որ, այցելութեան մը  
միջոցին, շատ տհալ լուղիկ կերած ըլլալուդ՝ կամ սաս-  
տիկ խթի մը պատճառաւ չի պիտի փափազէիր որ ազդ-  
բերուդ իրարու միացման կէտին անմիջապէս յաջորդող  
ծերպէդ դուրս սուրալով ներքնապէս քեզ զովացնէր : »

— Լոէ՛, ծօ զռեհիկ յիմար, այդ բառը «վզուրկ»  
բառին նուազականն է, և կը նշանակէ իշխանիկ կամ  
սիրելի իշխան :

Եւ զի՞նքը համոզելու համար կ'ստիպուէի զարձեալ  
Եղիշէն ձեռքս առնել ու կարդալ. «Եւ ամենայն վզուրկըն  
և պատուական նախարարք, որ նստէին յատենին և ունկն  
դնէին յեղյեղուկ լեզուի նորա, ամաչեցեալ կորանային  
և ընդ երկիր պշնուին, և զզլուխ ի վեր ոչ կարէին համ-  
բառնալ : » (\*)

(\*) Եղիշէ, Երրորդ Ցեղանակ :

Բայց Գուշակեանին ամիսը կէս նուկի նիամ-նիամ սապոն հայթայթող այս ռատագոյն փուշտիպանը, փոխանակ համոզուելու, սպառնալից թափով մը (geste) կ'ըսէր ինծի .

— Կեցի՛ր, կեցի՛ր, թող նամակներուդ թարգմանու-  
թիւնը ամբողջանայ որ տեսնես, և կ'անհետանար առանց  
«մնաս բարով»ի :

իսկ ես, ձեռքիրս վեր առած, կը բացազա՞նէի յոդ-նած.

— Իյեղճ Սանասարեան, տարիներով ոգեկան և  
մարմնական հացովդ սնած այս արարածը ի՞նչ կերպա-  
րանք ունէր արդեօք, երբ առաջին անգամ զինքը սեմէդ  
ներս կընդունէիր... :

# ԳԼՈՒԽ թ.

## ՀԱՅՈՒՏԻՃ ԱԶԳԱՍԵՐԸ

Այս գէպքերէն քանի մը ամիս ետքը, օր մը Աթինէոսի Աղեքսանդրիոյ համբաւաւոր սրճարանին մէկ անկիւնը քաշուած խիստ երկարատև պատերազմին ահռելի ծանրութեան տակ կը տղայի, երբ Գիզլ աղա Մոզպետեան քիչ մը հեռուն նստած իր հայ-հոռոմ թիւթիւննի ընկերներէն զատուելով ինծի կը մօտենար :

Թէև հայերէն լեզուին բոլորովին անծանօթ, սակայն իր հայրենասիրական հետաքրքրութեան շնորհիւ անտեղեակ էր բոլոր ներքին և արտաքին աղղային կարեւոր գէպքերուն՝ զորս իր բանգէտ փուշտիպանները չէին զլանար իրեն պատմել կարգաւ, գաւաթ մը whiskyի սիրոյն :

Խիստ համակրալից շեշտով մը որպիսութիւնո հարցընելէ յետոյ, Գիզլ աղան կ'աւելցնէր .

— Կը յուսամ թէ տրուելիք վճիռը չափաղանց սոսկալի չի պիտի ըլլայ ձեզի համար :

— Ի՞նչ վճիռ, Գիզլ աղա :

— Ի՞նչպէս ի՞նչ վճիռ, միթէ Աղեքսանդրիոյ Առաջնորդարանը ձինայեթ Մահիմէի առջև քաշած չէ<sup>®</sup> ձեզ. ինծի հաղորդուած լուրերուն նայելով՝ դատավարութիւնը տեղի ունեցած է և վճոին կը սպասուի :

— Չարաչար կը սխալիք, Գիզլ աղա. որովհետեւ, ո՞չ միայն ո և է դատավարութիւն տեղի ունեցած չէ

դէմս, այլ նաև, այդ մասին նոյն խոկ հրատիրազիր անգամ զեռ չեմ ստացած :

— Զարժանալի՛ բան... բայց Խառն Դատարանաց փաստաբանական կաճառը ի՞նչ որոշում տուաւ :

— Ո՞չ մի . առ պարզ պատճառով որ տակաւին ո և է զիմում չէ եղած յիշեալ կաճառին :

— Բայց ենենիմ, միթէ Քաղաքական Ժողովը ձեզմէ, չէր պահանջած ամիսչւ ութն օր, յետո կոչումով մը զղջում յայտնել ձեր նախատալից գրութեան համար, առանց որոյ ձեր նամակին ֆրանսերէն թարգմանութիւնը պիտի յանձնուէր տեղւոյս Խառն Դատարանաց փաստաբանական կաճառին նկատառման ու յետոյ պիտի տնօրինուէր պարտ ու պատշաճը :

— Խիստ ճշմարիտ, Գիզէ աղա :

— Հապա ի՞նչպէս կ'ըլլայ որ ութն ամիսներէ ի վեր Ազգ. Խեխանութիւնները ո և է քայլ առած չեն տակաւին ձեզի դէմ :

— Ձեր այդ հարցումին միայն Գուշակեանը կրնայ պատասխանել :

— Կը հասկնամ, կը հասկնամ. անպատճառ պահանջուած զղջումը յայտնած ըլլալու էք և խնդրած որ խընդիրը զաղտնի մնայ :

— Զղջում... ո՞չ թէ ո և է զղջում չեմ յայտնած, այլ նաև անոնց նախատալից երեւցած նամակիս պարունակութիւնը աւելի երկարօրէն, աւելի հասկնալի լեզով և աւելի պատկերալից ոճով կրնած եմ իրենց . և եթէ ինձի չէք հաւատար, Գուշակեանին հարցուցէք :

— Կը հաւատամ, Էֆէնտիմ, կը հաւատամ, և առանց ձեր երկրորդ նամակէն տեղեկութիւն ունենալու՝ վստահ էի որ դուք անանկ դիւրին դիւրին զղջում յայտնող —

և այն ալ անոնց պէս ներիմնեռու — մարդոցքէն չէք, կը պատասխանէք ԱՌԱՊԵԿԱՆԻՆ, խօսակցի մը հաճելի երեւալէ աւելի՝ յանկարծօքէն ինքզինքը ժխիթարելու կոչուած յուստիսարի մը առնցուած է կ'աւելցնէք.

— Բայց պիտի ներէի՞ք որ ձեզին ոչ թէ իրր ամբատանեալի, այլ իրրեւ հայու հարցում մը ուղղէի:

— Հրամմեցէ՞ք, Գիզլ ալու, եթէ կը փափազիք կարու էք մէկէ աւելի հարցումներ ուղղել, որոնց խոնարհարար պիտի պատասխանաւի:

— Շնորհակալ եմ, էֆէնազմ. ի՞նչպէս կը ժեկնէք սա մեր Ազգ. Եշխանութեանց այդ ընթացքը, միթէ Ազգ. Եշխանութեանց արժանազատութեան կը վայելէ՞ իրենց ուղղուած նախատալից գրութեան մը մասին զզջում պահանջել անոր հեղինակէն, իրր միակ պատասխան ստանալ առաջինէն աւելի նախատալից գրութիւն մը, և լուի՝ փոխանակ իրենց ըրած սպառաւովիքներուն օրինաւոր զործագրութեան ձեռնարկելու:

— Ո՞վ զիտէ, Գիզլ ալու. թերեւս սթափուեցան կա՞թերեւս վրաւ զթացին. և կամ թէ, վերջի պահուն ետկեցան իրենց հալածումներով բնաւ չունեցած ժողովրդականութեանս աճեցման նպաստելէ:

— Բայց ամէն պարազայի մէջ՝ ինծի հետ գուք ալ կ'ընդունիք անշուշտ որ ըրածնին չին' ինի մը իսկ վայել չէ:

— Կը սխալիք, Գիզլ ալու. այսպիսի բաներ յաձախ պատահած են ու շարունակ պիտի պատահին:

Եւ, թէզինքը համոզելու և թէ Գուշակեանին և իր փուշտիպաններու ջոլիրին չունեցած արժանազատութիւնը պ աշտպանելու համար, խիստ յոռի տաճկերէնովս անոր կը պատմէի հետեւեալ օրինակը մեր պատմութենէն.

Վարդանանց պատերազմէն հոգը, թէ պարտուած հայերը գարձեալ կատաղի յամառութեամբ կը շարունակէին պաշտպանել իրենց ազգային իրաւունքները։ Այսպէս որ, Տիզրոնի արքունիքը կ'ստիպուէր փոխել իր քաղաքականութիւնը հայոց հանդէոլ, մեղմութեամբ ձեռք անցնելու համար ինչ որ չէր յաջողած ընել բոնութեամբ, առանց օակայն կարդացած ըլլալու La Fontaineի առակը որ կ'ըսէ։ \*Plus fait douceur que violence.,

Եթէ դժբախտաբար զանուեցան ապիրատ հայեր որոնք հրապութուեցան այդ քաղաքականութենէն, և զորսիր մեծ պատմաբաններէն մին կը ներկայացնէ հետեւեալ կերպով։ «Որք ի ժամանակին իւրաքանչիւր ի տունս որպէս գաղտաղողի հարանօք իրրե զանպիտանս զտանէին, ի պարսկաց զտանուտիրութիւն գնեալ ուրացութեամբ ըստ անարդանութեանն, և ոչ տիրացեալք աստուածականութեամբ իրրե զարժանաւորս, արք անմիտք և վնասակարք, անպիտանք և ոչ պիտանիք, վատք և ոչ քաջք, որոց ոմանք ի լեռնախոյդ աւաղակաց ի մէջ անցեալ ուրացութեամբ վերտէին, և ոմանք կատակութեամբ աստուածս գնէին, և զաստուածս և զանմիտ վաճառականսն ի միասին թշնամանէին, անմարդք ի ստոյգ մարդկանէ և անարժանք և անծանօթք յազգէ տոհմըկաց » օակայն, զանուեցան նաև անհամար ճշմարիտ հայեր՝ որոնք «ի հոգեսպանութենէ մոլեկան թագաւորին և ի կատաղութենէ ամպարշտեալ ժամանակի իշխանացն, որպէս նապաստակք ի ոլացմանէ զիշակեր արծուեց ի ծերպս վիմաց և կամ ի մացառուտ տեղիս մայրեաց դօղեալք թաքչէին. կարեւոր համարէին համբերութեամբ ի քրիստոնէական կարգի վախճանել՝ քան թէ փառախնդիր յաժմամբ պատահել ուրացութեան և կորնչիլ։ Լաւ համարէին

բայ բանի զրոցն զնախատինս վասն թրիտոսի, քանի առ  
ժամանակ մի իւաթաւել ընդ սնոտի փառս աշխարհիս, և  
յա իտենից տանջանացն լինել արժանաւոր, որք իրքէ  
զԲարելոնի հնոցին բոց տեսանէին բարձրացեալ զամ-  
բարչտութեանն կիզումն, և ոչ ոք էր որ շիջուցաներ։ Ժո-  
ղովեալք նստէին առ սուրբ Քահանայազետին հայոց Դիւ-  
տայ, որ ոչ երբեք լոեր յարտասուելոյ զմօխրասիրացն  
զմոլորութիւնս, որ խնդրէր լոելեայն պահարանս հայ-  
թայթանաց հանգերձ նոքօք, երբեմն փախչել յօտարու-  
թիւն, և երբեմն ի խնդիր լինել օղնականութեան և ա-  
պըստամբել ։ »

Տայոց զաւառի Արահեղայ զիւղացի հայոց այս Գիւտ  
կաթողիկոսը, «առ ի չժուժալ սրտին՝ սկսանէր յայսնա-  
պէս ոխութեամբ զրգուել ընդ անօրէն ուրացելոցն, և սի-  
րել և պատուել զկողմն տառապեալ հաւատացելոցն։ Եւ  
մահաւանդ առ վատթարս աւնէր և արհամարհէր զիւ-  
խաղն Գաղիչոյ, որ զօրագլուխն և քաջալերիչն էր ա-  
մենայն ամբարչտելոցն դասու ։ »

Խորիսուունեաց այս Գատիշոյ իշխանը, աւելի՝ չհան-  
դուրժելով Գիւտ կաթողիկոսի արհամարհանքներուն,  
քան թէ մոխրազաշտական հաւատքի տարածումը զիւ-  
րութեամբ կարենալ ընդհանրացնելու համար, կամբաս-  
տանէր զայն Պարսից թագաւորին ըսելով թէ զմարդիկ  
որ զկամաց քոց զհրաման կամին կատարել և զքո օրէնս  
խորհել յանձն առնուլ և սիրել, կոչէ առ ինքն, և է՝ որ  
ինչ տալով, և է զորս քաղցր բանիւք պատրէ, և յիրացն  
ի բաց դարձուցանէ։ Վասն զի բազումք եկեալ են առ իս  
և յանձն առեալ ունել զօրէնս քո, և նորա կոչեալ առ  
ինքն պատրանօք՝ ի բաց տուեալ է թողուլ զիրսն և ար-  
համարհել. այլ և զմեղ՝ որ զքեզ սիրեմք և արեզական և

կրակի երկիր պազանեմք և կամաց քոց ծառայեմք, տա-  
եայ և թշնամանէ . . . »

Այս ծանր ամբաստանութեանց վրայ դայրացած  
սրտմտութեամբ՝ Պերոզ կը հրամանէր հայոց կաթողիկոսին  
դուռը երթալ պատասխանելու համար իրեն դէմ եղած  
զանգատներուն : Հոն, զինքը հարցաքննող Մախաղ Յը-  
ղատ Վշնասպին Գիւտ կը խոստովանէր, մասամբ, իրեն  
դէմ եղած ամբաստանութեանց ճշմարտութիւնը : Բայց  
կ'երեւի թէ, որովհետև ռաւազաց առաջի չքեղացուցեալ  
զսուրբ այրն զօրութեան հոգւոյն որբոյ, տեսանէր ամե-  
նայն մարդ զերեսս նորա իրրե զերեսս հրեշտակի, յորմէ  
և հեթանոսք մեծաւ զզուշութեամբ խորշեալ պատկա-  
սէին, » Յըղատ Վշնասպ մեղմացուցած էր անոր խոս-  
տովանութեան ծանրութիւնը որ Պերոզ կ'ընդունէր անոր  
անմեղութիւնը : Սակայն, սոսկ իր օրէնքներուն խըս-  
տութիւնը զզացնելու համար, Պերոզ կը յայտնէր Գիւտին  
«թէ մինչե ցայժմ քո իշխանութիւնդ առանց իմ հրա-  
մանի կալեալ է, և ծառայ մարդիկ են՝ որոց քեզ զայդ-  
պիսի մեծ զործ տուեալ է, և ոչ ինչ յինէն ունիս վստա-  
հութիւն : Բայց այժմ եթէ զիմ կամս առնես, և զիմ  
օրէնս ունես, և արեզական երկիր պազանես, զզործդ  
զայդ քեզ և քում ազգի և որում դու կամիս, պատըշ-  
րաւ տամ մինչե յաւիտեանս, և զքեզ պատւով և այն-  
պէս արձակեմ ի Հայս, զի Հայոյ ուրուք ի մեր դրացա  
պատիւ և չքեղութիւն այնպիսի չիցէ զտեալ, որպէս դու  
զտանիս : Ապա թէ յամառեալ չհաւանիս կատարել զկամս  
իմ, զեպիսկոպոսութիւնդ ի բաց առնեմ ի քէն, և ի գոր-  
ծոցդ ի բաց հանեմ, և դու անարզանօք և թեթեւամտու-  
թեամբ երթաս ի տուն քո և յաշխարհն : »

Վահան Մամիկոնեանի ուսուցին անցեալը լիովին  
կ'երաշխաւորէր այդպիսի հրամանի մը անոր տալիք պա-

տասխանին վայելչութիւնը : Միայն թէ, ան կը փափազէր անձամբ տալ իր պատասխանը Պերողին, որովհետեւ, վստահ էր որ, անոր վզուրկ չըրեշտակը չի պիտի իշխէր հաղորդել զայն թագաւորին առանց մեղմացումի : Իր կոսկածներուն հիմնաւորութիւնը ցոյց տալու համար կը զոհանամ ըսել ո՞ր, արդարեւ, երբ պարսիկ դեսպանը կը լսէր անոր պատասխանը, հակառակ իր խօսքին՝ թէ «համարձակութիւն» տուեալ է թագաւորաց՝ ասել զարդար լուրն ի մէջ երկուց կողմանց, և լսեն պատզամաւորք, և չիշխեն եթէ չասեն, » կը խոստովանէր իր բացարձակ անկարողութիւնը՝ այդպիսի պատասխան մը թագաւորին հաղորդելու համար, և կը ջանար ինքովինքը արդարացնել ըսելով թէ «զի ոչ ուրուք երբեք այդպիսի բանս ստամբակութեան յղեալ է առ այր թագաւոր» » Շնորհիւ միայն Գիւտի սաստումներուն, թէ «զու ասացեր՝ թէ թագաւորաց օրէնք են չիշխել պատզամաւորի նուազեցուցանել բան մի ի բանից առաքողին և կամ առաւելուլ : Արդ, երթ և ասա զոր լուար յինէն, քանզի ինձ ոչ է հնար խորհել այլ ինչ և կամ անել, » Պերողին պատզամաւորը կը ստիպուէր իր պարտականութիւնը կատարել :

Ահա Գիւտ կաթողիկոսի այդ հիանալի պատասխանին վերջին մասը . «Խոկ յալազո Եպիսկոպոսական ձեռնադրութեանս՝ որ ասես թէ ի բաց առնում ի քէն, զայս երկնաւոր ձեռնադրութեան պատիւ՝ առնուլ յինէն ոչ թագաւորք և ոչ յիշխանաց ոք — այլ մահ, — ոչ իշխէ, քանզի և կարէ իսկ ոչ . և ոչ բնաւ երկնչիմ ի մահկանացու մարդոյ՝ տալ զպատիւս զայս ինձ և կամ առնուլ յինէն : Բայց վասն օրինացդ քոց որ ինձ ունել հրամացես, յալազո որոյ և պատիւս և պարզեւս խոստանատալ ինձ, ոչ ուրուք է յերկրաւորացս պատիւ մեծ և իշխայութիններ

խանաթիւն հզօր քան գլուխ զոր տնիս . բայց Ձեմն անպիտամն և պարշևի օրինացդ քայ զոր տնիսդ . զուրքնիւ պահանջին ոք թագաւորդ են , և աժենակեան ոք պարդ օրէնս տնիք , Ժեռեալ համարեալ էք բայս իմ , և ոչ կընկանիք և զպատիւս քո և զփառմ սնարդան համարիտ և մանկաւոյ ծաղք և կասանկան : »

Երբ Անքող Դիւ ամ այս աներինդ խօսքերը կը լուր , « Փ զայրացումն սրամառ-թեան գրգռեալ , կամեցաւ առ հրաման խստութեամք . յանկարծավի գաղաքեցուցեալ զինքն առ վայր մի լուսաց , և ապա սկսու խօսել ետակ . Զէ հնար եթէ ոչ կատարին կամք խնդրոյ նորա , զոր նայն կամք , և ոչ առմ համբաւ-րել քրիստոնէից զկապանս նորա , և ոչ երկիք պազմնու սովերաց նորա , որպէս սովորութիւնն : Եռ-եալ է իմ զպաշտամանց նոցա , թէ զաւուն զայն պատիւ կմնագանեաց , զոր արդպիսի մեռելոյ առնեն : Բայց ասոց նա՞ թէ այդմ պատոյ չտան քեզ պատահել , զոր զու ցատցանելով զիս՝ զամնել կամին յինէն , կաց ուր և կամիս . . . . . » (\*)

Աւ-արտելով մեկնութիւնս , խիստ կարեւոր բան մը պատմովի հպարտութեամբ , և որովէս թէ աղնատարանութիւնէս չի թմրող մեծանուն բարեկամս սթափելու համար , կը գոչեի խկոյն :

— Կը տեսնէ՞ք , Գիզէ ալս , Պարսից հզօր թագաւոր-ներն իսկ , զարեր առաջ , վարակուած էին Գուշակեանի և իր ամենման փուշտիպաններուն ակարութիւններով :

— Եթէնոր՞մ , մեղքս ի՞նչ պահեմ , կը պատասխանէր Դիզէ ազան , ես ո՞չ կը սիրեմ , ես ո՞չ ալ կը հասկնամ այդպիսի երկարապատմ մեկնութիւններ : Բայց որովհետեւ զուք ձեր ուզած կերպով մեկնեցիք ձեր զվառն

(\*) Փարավեցի , Գ. Դեռևակ , ԿԲ. , ԿԳ. , Եւ ԿՊ. :

եկածը, ձեր արածնութեամբ պիտի ուզէի ես առ իմ գիտցած մեկնութիւնը տալ, նախապէս խնդրելով ձեզէ որ, զայն լսելէ ետքը, շղանայիք ձեր անկեզծ կարծիքը յայտնել այդ մասին:

Եւ սկսու պատմել.

«Երիտասարդութեանս միջոցին՝ ընդհան այցելութիւններով էօթիի գժրախտ քոյրերէն մին պատուափրելու վարժուած էի, չեմ յիշեր թէ ինչպէ՞ս:

«Օր մը, երբ ձանձրութենէս տարուած Ազեքսանդրիոյ փալոցները ժառ կռւզայի բոլորովին աննպատակ, պատահամար անոր կը հանգպէի:

«Առվորական կարճ տեսակցութեամբ միսիթարումէ ետքը՝ երբ կ'ուզէի հրաժեշտ առնել իրմէ, ան կ'ընդզիմանար նախատուածի մը սպառնալից կեցուածքով:

«Ի տեսլահրաչ այս տեսլի, անկետ ի ծուխու խորհղոց յաղազս թափանցելոյ զանհասութիւն զիւաց զյեղյեղկաց, ոչ զիտեմ եթէ զիա՞րդ, կամ է՞ր աղազաւ տինչք իմ պսակէին զստամբակին զվերսփոփումն զվեհազոյն:

«Ճաւը հասկցուած էր. որովհետեւ, զիւթական փոփոխումով ան սկսած էր շոյել ու փայփայել զիս, և իր որտազին օրհնութիւնները կ'ընկերանային ինձ իրու վարձատրութիւն:»

Աւարտելուն պէս, Գիզլ աղան կը հարցնէր ինձի բոլորովին այլայլած:

— Բան մը հասկցա՞ք, էֆէնտըմ:

— Այո՛, Գիզլ աղա, բայց խիստ աղօտ կերպով, կը պատասխանէի իրեն:

— Չեր իմացականութենէն զմէզ տզիտութեանն խաւարային սեւութեամբն հալածելու համար, թոյլ կուտամ ինքզինիս աւելցնելու թէ, ըստ իս, եզիալտոսի Հայոն Առաջնորդ Գուշակեանն ու իր փուշտիպանները, իշտե,

ճիշտ այրացաւեր Լօթիի այն դժբախտ քրոջ նինսէն են.  
անոր պէս կը պաղշտկին՝ երբ վայելու կերպով դասերնին  
կ'առնեն :

— Պիտի ուզէի՞ք ձեր արժէքաւոր կարծիքը յայտնել առւած մեկնութեանս մասին, կը հարցնէր Գիզլ աղան:

— Ի՞նչ ըսեմ, ո և է դէպքի մասին մարդոց մեկնութիւնները կրնան իրարմէ տարբերիլ :

Ու երբ կ'ըսեմ թէ այս այն Գիզլ աղա Մոզպետեաննէ, որ իր ութսուն և վեցամեայ զառամած հասակին մէջ, մեռնելէն տասը ամիս առաջ սկսած իր հոգեվարքի օրերուն իսկ կրցաւ ձրիաբար արար աշխարհքի հոչակել թէ ինքը Հայոց ազգին երկու միլիոն ոսկի նուիրած էր, և այդ պատճառով, իբրև աննման բարերար, ազգային թաղումով երթալ յաւիտենապէս հանգչիլ Աղեքսանդրիոյ Հայոց եկեղեցիի կողքին, ընթերցողին կը մնայ ըմբռնել և գնահատել անոր տուած իմաստալից մեկնութեան բացարձակ ճշմարտութիւնը :



## ԳԼՈՒԽ Ժ.

### ՀԱՅՈՒՏԻՃՆԵՐՈՒ ՀՆՈՒԹԻՒՆԸ

Ստոյգ է թէ միջավայրը մեծ ազդեցութիւն ունի մարդու նկարագրին, յատկութեանց և բարօրութեան վրայ, սակայն ճշմարտագոյն է որ մարդն է իր միջավայրը ստեղծողն ու պատրաստողը :

Մասնաւոր անհատի մը ցաւալի վիճակին կամ ապականացումին պատճառներու խուզարկման, անոնց արդարացումին կամ դատապարտութեան առթիւ արդար, վիճելի, անդեպ կամ հերքելի՝ այս օրէնքին բացարձակ ճշմարտութիւնը իսկոյն աչքի կը զարնէ՝ երբ հարցը ամբողջ ժողովրդի մը ցաւալի վիճակին կամ ապականացումի պատճառներուն խուզարկումին շուրջը կը դառնայ :

Միջավայրին յեղաշրջմամբ ժողովրդին փրկութեան և երջանկութեան աշխատող մեր բանասէրները, ազգասէրներն ու զործիչները տարտամօրէն նշմարած են անոր ցաւալի վիճակն ու ապականացումը. իսկ անոնց պատճառներուն զալով, առանց որոնց լուրջ և ճշգրիտ պրալտումին բոլորովին ապարդիւն մնալու դատապարտուած էին իրենց ճիզերն ու զոհողութիւնները, բաւականացած են միայն, յաղագս մոլեռանդութեան և տղիտութեան, կրկնել օտար իմաստասէրներու և ընկերաբաններու՝ աւելի մասնաւոր անհատներու ցաւալի վիճակին կամ ապականութեան պատճառներու խուզարկումին առթիւ կրկնուած կիրարկելի սկզբունքներ :

Այսպէս է որ, միայն արտաքուստ կամ առարօտի, զլիստորաբար թուրք — որպէս թէ աշխարհակալութեանց նպատակներն ու անոնց գործադրութեանց եղանակները շափականց զգալիօրէն իրարժի տարրերէին — բերմանքներու վերազրելով հայ ժողովութղին ցաւալի վիճակին ու ապականացումը՝ անոր գժբախտութեան և զգուելի թերութեանց պատճառ և պատախանառու համարած են անոնք օտարներ, զլիստորաբար թուրքները :

Գտնէ Լո՛ներու հետեւեալ խօսքը. «Բնուդիակառակը, եթէ խնարհ ձայնո լուսելու բախտին արժանանար, շափականց խուլ նւրուզէն պիտի ազերուի միջամտել, պաշտպանել և մեկուսացնել զանոնք. որովհետեւ զարդիք ի վեր փոխադարձ բացարձակութեան անընկճելի ատելութիւն մը զոյութիւն ունի ի մէջ անոնց և թուրքերու, թող Ասիոյ մէջ անդ մը հայ հող մը որոշուի անոնց ուր պիտի ըլլան աղաս և ուր պիտի կարենան մաքրել առրկութեան — ի հարկէ, թուրքերու — մէջ ստացած արամեները, ո (\*) պէտք էր սթափած ըլլար մեզ և մաքրած մեր աչքերը :

Տրուած ըլլալով Loti ներու և անոնց կարծիքներուն արժէքին որակը, անշոշա չի պիտի ներուեր ինծի աւելի կանգ առնել այդ ժամին :

Հայութեան արամեները կամ զզուելի ապականութիւնը, այսինքն՝ հայութիւնները, օտար, աւելի՝ թուրք ազգեցութեանց վերազրելով, կոսկիտ սխալ մը, անիրաւ նախատինք մը և աններելի անիրաւութիւն մը գործած պիտի ըլլայի անոր հանդես, քանի որ հայութիւններու

(\*) Loti, Les Alliés qu'il nous faudrait, p. 49. Les Massacres d'Arménie, p. 30.

հումկու ներկայութիւնը մեր նախնաց կողքին ցոյց  
կռւաց ինձի անոր հոկայ վեհութեան հետ՝ անոր բաց-  
արձակ ըմբռաստիւնը, (sa qualité réfractaire) և ա-  
նելծութիւնը :

Ան ոպատկերներ մեր հին կհանքէն երբ կատարե-  
լաղէս ազատ էինք, և երբ թուրքերու խօսքն անգամ  
չէր բւլար մեր երկրին մէջ :

ՕԵւ յիս այսր անցեալ ժամանակաց, զեկնի թագա-  
մանն լինելոյ երանելոյն Յուսուկան, անառաջնորդք եղեալ՝  
իրեւ զկոյրու մոլորեցան երկիրն լիզուին թորգոմական  
աշխարհին : Քանզի տուաւ նոցա ոզի մոլորւթեան,  
աչս՝ զի մի՛ տեսցեն, և ականջո՝ զի մի՛ լուիցեն, և  
սիրո՛ զի մի՛ իմասցին զառնալ յապաշխարութիւն : Եւ  
զիսաւարային խորխորատ կօրսանեան զահալ, հարեալ  
իւրեանց անձանց ճանապարհ . կործանեցան անկեալք .  
զի ոչ այն ոք զոյր՝ որ նոցա մոլիզնութեանն պատկա-  
ռուկու արկանէր ըստ մեզու զործելոյ, այլ անհովիւք էին :  
Զկորսանեան ճանապարհն՝ համարձակէին ի չարիս՝ կամօք  
զնացեալք, և կամօք լեալք որդիք սարկութեան . և ա-  
ռանց Աստուծոյ շրջէին յաշխարհի կամակոր ազգ տանն  
Հայոց երկրին : Նմանեալք լինէին այնմ հօտի խաշանց,  
որ զպահպանութիւն շանցն պահողաց պահպանացն  
ի բաց մերժեցին, և կամօք իւրեանց կերակուր զէշ թըշ-  
նամութեան զայլոցն մատնեցան, ըստ նմանութեան մե-  
ծին աթենացւոց քաղաքին :

Յայնմ ժամանակի զթագաւորն իւրեանց օրինակ չարի  
առնէին, և նովին օրինակաւ ձեւել սկսան, և նոյնպէս  
զործել : Զի ի վալնջուց, յորմէ հետէ առին նոքա զա-  
նուն քրիստոնէութեանն, լոկ միայն իրեւ զկրօնս իմն  
մարդկութեան յանձինս իւրեանց՝ և ոչ ջերմեռանդն ինչ

հաւատովք ընկալան, այլ իբրև զմոլորութիւնն իմն մարդկութեան ի հարկէ։ Ոչ եթէ որպէս պարան էր՝ զիտութեամբ յուսով կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ որք զհանգամանս զիտէին հելլէն կամ ասորի գորութեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ։ Իսկ որք արաւաքոյ քան զզիտութիւն արաւեստին էին այլ խառնաշանձ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարացն և կամ շինականութեանն, եթէ զցայզ և զցերեկ նոտեալ վարդապետացն և ըստ նմանութեան ամպոցն իբրև զյորդահեղեղ ինչ անձրեւաց սասակութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, ոչ ոք ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ դոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ զոր լսէինն, և ոչ կարէին ինչ ունել ի մտի։ Վասն զի միտք իւրեանց ընդ անպիտանս ընդ անօգուտոս ևեթ զբօսեալ էին։ զոր օրինակ մանկունք տղայք ընդ մանկութեանն և ընդ տղայութեանն խաղալիկ խանկարեալք, և զպիտոյիցն և զկարեւորացն ոչ ինչ փոյթ արարեալ, սոյնպէս և զեգերեալ մաշէին յանուղղայ կրթութիւն ընդ չքնոտի մտացն ի հնութիւն հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս խուժագուժ միտս ունելով։ Եւ զիւրեանց երգս առասպելաց զլիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կըրթութեանցն, և նմին հաւատացեալք, և ի նոյն հանապաղորդեալք։ Ի հեռ և ի նախանձ ընդ միմեանս շարակնութեամբ, թշնամութիւն ոխութեանց, զմիմեանս խածանել, և նենզել այր զընկեր և զեղբայր։ Սիրելիք սիրելեաց, և մերձաւորք մերձաւորաց, և ընտանիք ընտանեաց, ազգականք ազգականաց, խնամիք խնամեաց դնէին զայթակղութիւն։

Անդ էր տեսանել այր ընկերի արեամբք ծարաւեալք

ըմպելով, ոգովք չափ զային վնասուցն՝ անխրատ վարս  
և անհանձար միտոս ունելով» (\*)

Բուզանդացիի հետեւողութեամբ զրած ըլլայ թէ  
տարբեր աղբիւրներէ ուսած՝ իյորենացիին հետեւեալ վկա-  
յաբանութիւնը նուազ զօրաւոր և անկեղծ ապացոյց մը  
չէ հայուտիմներու գոյութեան մեր նախնեաց քով.

«Այլ զիսստասրտութիւն կամիմ ասել, թէ և զամ-  
քարհաւաճութիւն ազգիս մերոյ յիսկզբանցն և այսր. որ-  
պէս անհամբոյր բարւոյ և ճշմարտութեան անհարազատ,  
կամ թէ բնութիւն ունելով զբարձրայօնութիւն և զկա-  
մակորութիւն, ընդդիմանան կամաց թագաւորին յաղազս  
կրօնիցն քրիստոսականաց, զհետ երթալով կամաց կա-  
նանց և հարճից...։ Աստանօր ամաչեմ ասել զՃշմարտու-  
թիւնն, մանաւանդ թէ զանօրէնութիւն և զամբարշ-  
տութիւն ազգիս մերոյ, և զմեծի ողբոց և արտասուաց  
արժանի սոց « գործո» (\*\*)

Անոնց որակին վրայ որոշագոյն զաղափար մը կազ-  
մելու համար կը բաւէ կարդալ հետեւեալը.

«Զայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն դաստա-  
կերտ մի ի հովիտն անուանեալ ի կոգ զաւառի։ Եւ ետ  
հրաման ընդ ամենայն զաւառս իշխանութեան իւրոյ, և  
հրամայեաց կարգել քարոզ ընդ ամենայն տեղիս աշխար-  
հացն հրապարակին իւրոյ. և ամենայն կողմանս զաւա-  
ռաց իւրոց լի առնէր հրամանաւն արքունի, զի եթէ ոք  
ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ուրուք ուստեք ինչ վնաս-

(\*) Բուզանդարան Պատմ., Դպր. Գ., Գլ. ԺԳ.։

(\*\*) Խորենացի, Պատմ. Հայոց, Գիրք Բ., ՂԲ.։

ևալ իցէ, կամ ոք ումեք ինչ դատ պարափցի, ամենեւքիան եկեսցեն ի դաստակերտն շինեսցին։ Եթէ արիւնահան ոք իցէ, կամ վեաս ուրուք արարեալ իցէ, կամ զկին ուրուք արեալ իցէ, կամ պարտապահ իցէ, կամ ոք զուրուք կարասի ունիցի, կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ, և եկեսցէ յայն տեղի, դատ և իրաւունք մի՛ լիցին։ Իսկ եթէ ոք ումեք ինչ պարափցի, և որում պարափցին՝ եկեալ յայն տեղին, առանց դատի և իրաւանց կալցին և ի գուրս տարցեն։

Երբեւ ել հրաժան յարքայէն, ժողովեցան այնուհետեւ յայն տեղի ամենատար զողք և աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտք և մարդելոյզք վեասակարք, զանձահատք, զրկողք, սատդատք, զրախօսք, զերփողք, յափշտալողք, ժլատք, Բազում վեասս վեասս առնէին, և անդր անկանէին։ բազում կանայք զարս թողուին, և անդր անկանէին։ բազում արք զիւրեանց կանայս թողուին, և զայլոց կանայս առեալ՝ անդր անկանէին։ բազում ծառայք զիւրեանց անրանց զզանձս ըմբռնեալ, փախուցեալք անդր անկանէին։ բազում աւանդառուք զաւանդս լի զպահեստս բարձեալ, անդ անկանէին։ զերփէին աւերէին զերկիրն ամենայն։ Զի թէպէտ և կարի յոյժ բազմացաւ աղաղակն, դատ չկայր, և իրաւունք ումեք յարքունուս ոչ ելանէին։ Վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէին, և ասէին ի հաւանել բանիցն իւրեանց։ այս բանք ըստ այսմ օրինակի պաշտէին, առհասարակ ամեննեցուն ասելով՝ թէ իրաւունք մեռան, և վասն այսորիկ ոչ զտանէին։ այլ թէ էր, և կորուսեալ էին, ուր և էր ջանայաք խնդրէաք զտանէաք։

Իսկ տեղին աւանանայր, քաղաքանայր, մեծացաւքազմացաւ և ելից զհովիտն ամենայն։ Ապա տայր հրաժան արքոյն Արշակ դնել անուն դաստակերտին։ յիւրա-

կից անունն Արշակուան. և շինեցին եւս անդ ապարանս արքունի : » (\*)

Ահա անոնց ծառալին ահազնութիւնը. «Եւ յետ երից աւուրց անցանելոյ բանիցն ասացելոց ի վերայ, որ խօսոցեալ ելեն ի բերանոյն երանելոյն Ներսէսի, մատնեաց տէր զզիւղաքաղաքն զերշակուանն ի ձեռս հարուածոցն : Եւ սկսաւ հատանել զոր չարտկեղն իմն կոչեն, իսկ կէսքն ժանդ անուաննն . ելանէր ի վերայ մարդկանն և անասնոցն : Ոչ աւելի եղեւ հարուածոցն ի վերայ նոցա քան զերիս աւուրս յերկարեցաւ, զի անմարդացաւ . քան զքսան հաղարք սատակեցան երդք մարդկան, ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի. զի առ հասարակ սատակեցան կոտորեցան յանկարծօրէն քանդեցան . զի միահալոյն եկն սատակումն ի վերոյ նոցա : » (\*\*)

Արշակուանի քանդումի մասին Խորենացիին տուած բոլորովին հակառակ վլայութիւնը, թէ «Եւ նախարարացն Հայոց ժողովեալ՝ գիւեցին ի վերայ արքունական ձեռակերտին Արշակուանայ, և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչեւ ցկին, բայց ի տղայոյ ստնդիացաց . քանզի դառնացեալք էին իւրաքանչիւր ի վերայ ծառայից իւրոց և յանցաւորաց : Զոր թէպէտեւ վաղ զիտացեալ մեծին Ներսիսի, ոչ յառաջ քան զկոտորելն ժամանեաց հասանել . այլ ի կատար գործոյն եզիտ բաժանեալ զտղայս կոտորելոցն, զի վարեսցեն ի շերութիւն որպէս զհեռաւոր թշնամեաց : Զոր թափեալ մեծին Ներսիսի, հրամայեաց կրել որմովք ի զոմ մի, և դարմանս և սնուցօղս նոցին

(\*) Բուզանդարան Պատմ., Դպր. Դ., Գլ. ԺԲ. :

(\*\*) ազագու, „ քու, „ շաբաթ, „ զբան, „ ԺԳ. :

կարգեալ . «ոք յետոյ առանցքեալ՝ անուանեցան Արթք այնորիկ աղազու» , (\*) երբեք չի զօրէր անթեղելու Բուզանդացիի վկայութեան զեղեցկութիւնը , կարծուորութիւնն ու օգտակարութիւնը :

Հանգեալ այս անհերքելի վկայաբանութեանց՝ կը տեսնեմ վրգովումն ու օրոմութիւնը անխոր ու անխոհ բանասէրներու որո՞ք մալեաանցարար թութակօրէն կը ըկնելով Փարագեցիի ենթագրութիւնը Բուզանդացիի մասին՝ «Արդ յայնպիսումն քաղաքի և ի մէջ այնչափ բազմութեանն ունելոյ վարժեալ այրն Փաւառոս , այնպիսի ինչ արդեօք անհաճոյս լուզաց բանս կարգէ՞ր ի պատմութեան իւրում . քա՛ւ և մի՛ լիցի Ռւսոփ և անհաւատալի իմում ակարութեանս կարծեցեալ զործն , ասեմ , թէ զուցէ այլ ոք յայնպուզն և անհրահանգ բանիւ լրբարար ձեռն արկեալ յիւրն՝ զրեաց զինչ պէտո ըստ կամի . և կամ զի ուրո՞ք անկարացեալ զիսոզո՞ այլարանեալ վեսսեաց , և անուամբ Փաւառոսին զիւրոյ յանզգութեանն սխալանս համարեցաւ ծածկել , և այն յայտնի ցուցանի ամենայն հայեցազաց . քանզի են ոմանք ի Յոյնս , այլ մանուանդ առաւել յԱսորիս . » (\*\*) յաջողած են աւելի՝ նպաստել հայութիճներու մշտնչենապէս տեւականութեան , քան մրճուտել անմահ վարպետին անմատոյց փառքն ու սրբութիւնը :

Արդարե , ինչո՞վ կը տարբերի Փարագեցին Բուզանդացիէն , կամ ինչո՞վ կ'արդարանայ ան երբ կը զրէ . «Եւարդ ցո՞յց ինձ այր մի յայսպիսի աշխարհի՝ որ թէ առաւելու թակաւորութեամբ արժանաւորապէս հասեալ ի տա-

(\*) Խորենացի , Պատմ . Հայոց , Գ. Գիրք , Էջ. :

(\*\*) Փարագեցի , Պատմ . Հայոց , Յառաջաբան Գ. :

նուակաթիւն։ այլ որեար աւազակ և անսպասան։ հացկատակք և վատառնմիւլ, որ զան զայտագիտի մեծ թագաւորութիւն խարեն, և ընդ կրակի վառո զենքն և աէրութիւն։ և ի ձեւնջ բառ կողմէն ելեալ սակաւ մի՛ միզենե ի կրակն, և յանթեղ զաղը խրեաց արկանեն, և զվաճականն և զվաճանն ի միասնիւ թշնամանեն։ Եւ այլ լաւութիւն և քաջութիւն և միտք և զիտութիւն՝ որով աշխարհ շինի և միջի լինի, այն չխնզրի և արհամարհեալ է. այլ անսպիտան և վատառնմակ մարդկան պատրոզութիւնն ի մէջ անցեալ յարզի, և զուք առ նանաչող ունիք զձեզ : Լուեալ է քո, որ Միհրանդ ես, և ամենայն Պարսից՝ զրանս զայս յԱրեաց տեսոնենի ի Պերոզէ՝ առաջի ամենեցունց յատենի. թէ՝ Այր վատ և զունդ անպիտան Ասորի է, բայց քան զասորի այր՝ Հայ մարդ շատ վատթար է և անսպիտան : » (\*)

Կամ թէ, «Եւ այլք (արեղեան հայոց) ադահութեան ախտիւ վարակեալք՝ արկանեն ընդ պարտեօք զարդարս և զոչ արդարս, և կարացեալ ևեթ ըմբոնել զմամոնայն յաղազս որոյ խուենն, այնուհեան զամենեսեան արդարս անուանեն և անմեղս, և զմարզարէին Ամրակումայ ստունկանեն զաղաղակ, մանաւանդ թէ նովաւ զԱռուրբ Հոգւոյն, թէ «Վայ» որ պահէ զազահութիւն չար ի տան իւրում» : (\*\*)

Եւ կամ թէ, «Նայեցարուք ընդ ժողովուրդն Յունաց յորժամ քարոզն լուեալ աղաղակէ, և որ կամին ասել՝ ի կարզեալ տեղիսն մատչի, ամենեցուն զարթուցեալ զսիրտս Առ Աստուած վերացուցանեն. տարածեալ ձեռօք

(\*) Փարպեցի, Պատմ. Հայոց, Գ. Դրուակ, ՀԵ. :

(\*\*) Փարպեցի, Մեղադրութիւն Սախոս Աբեղայից :

խաշանմանք լինին. միաձայն խնդրուածովք և արտառայից գոչմամբ զՓրկիչն թախանձեցուցանեն. «Տուր, ասեն, բան. առաքեա շնորհ. դու իսկ ինքն գովաւ՝ որպէս Սրբավի Պողոսիւ խօսեա ընդ մեղ. նմա ծանո զհաշաւթիւն քո ընդ ծառայո քո. Մի՛ նմանեցէ դա յաղագս մեղաց մերոց՝ ստերջ ամբոց. այլ անձրեւահոս բղխմամբ յորդեսցէ յանդաստանս հոգւոց մերոց, որովք ծաղկեալք՝ պառզք արժանիս հաճութեան կամաց քոց բերեալ մատուցու քո»: . . . «Իսկ Հայոց արեղէնքս առ զամաշունչ նախանձու, որ միացիալ է ի սիրտս նոցա՝ զնոցունց հակառակսն երկնեն. և արդարեւ ըստ ասացածի մարդարէին՝ յղանան զցաւս և ծնանին զանօրէնութիւն. ազօթս իսկ չառննն ի վերայ ասովին. այլ և եթէ յանկարծ շնորհի բան ի մարդասիրէն՝ հեղձնուն ի նախանձու: Եթէ զոք տեսանեն ի ժողովրդինէն՝ եթէ զովէ, ծաղր առնելով ամաչեցուցանեն. «Արդ լոել ինչ, ասեն, չզիտէ, և ընդ վայր աղաղակէ և քրքուի»: Իսկ Յունաց ժողովուրդսն՝ և աղայքն անզամ ի վերայ ուսոց ծնողացն՝ շարժեալ զնեռներն ի զովութիւն այլոցն, ձայնս անյօդակապէս արձուկեալ յայթուն: Եւ զոքա նստին զիսարկեալք, պատառեալք երեսօք, որպէս առ հոտեալ գիտկան, պապանձեալք որպէս համբ զեւ: Եւ եթէ զթացեալ Մարդասիրին՝ կամիցի տալ բան խրատու ի ժողովրդոցն փրկութիւն, հայեցեալ ի զառն խորհրդոցն նոցա որոնմունս՝ յինքն ամփոփեալ արդելու զշնորհն: » . . . «Յոլովք ի լիրը մախողաց՝ և զանուանս անզամ և կամ զքանահնութիւնս կանոնեալ եկեղեցական զրենոյ հաղիւ կարին զիտել, և զրզութեամբ նախանձարկու գիւին նըստեալք առ միամեանս՝ լու ի շու այլոցն զինչ պէտս խօսին» (\*)

(\*) Փարպեցի, Մեղադրուրիւն Սախոս Աբեղայից:

Իսկ Խորենացիին յուստառոքէն աղաղակումը . «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ. ողբամ զքեզ, հանուրց հիւսիսկանաց վեհազոյն. զի բարձու թագաւոր և քահանաց, խորհրդական և ուսուցող. վրդովեցաւ խալալութիւն, արմատացաւ անկորզութիւն. զրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տղիսութեամբ չարախոռութիւն.» միթէ միայն պատճառ չունի<sup>\*</sup> «Վարդապետք տխմարք և ընդինքնահաճք, անձամբ առեալ պասիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ. արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով ոսկեսէրք, նախանձոտք, թողեալ զհեզութիւն, յորում Աստուած ընակէ, և զայլք եղեալ՝ զիւրեանց հօտո զիշատելով:

«Կրօնաւորք կելծաւորք, անձնացոյցք, մնախար, պատասէրք քան թէ աստուածասէրք :

«Վիճակաւորք հողարտք, դատասացք, զրաբանք, ծոյլք, ասեցովք արուեստից և վարդապետական բանից, սիրողք վաճառոյ և կատակերգութեանց :

«Աշակերտք հեղզ առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն՝ աստուածաբանք:(\*)

«Ժողովականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, այրեցովք, վնասակարք, փախչովք ի ժառանգութենէ :

«Զօրականք անիրաւք, ստապարծք, զինատեազք, պղերզք, հեշտասէրք, անժուժկալք, կողոպտիչք, համբարոյք աւաղակաց :

«Իշխանք ապստամք, զոլակիցք զոլոց, կծլիք,

(\*) Մեր արդի Երիտասարդութեան սոււար մեկ մասին նշագրիս պատկերը չէ:

կծծիք, ժլատք, աղահք, յափշտակողք, աշխարհաւէրք,  
աղտեղասէրք, ծառայիցն համամիտք :

«Դատաւորք տմարդիք, սուտք, խարողք, կաշտ-  
ուառուք, անընտրողք իրաւանց, անհաստատք, հակա-  
ռակողք :

«Եւ բարձումն առ հասարակ յամենեցունց սիրոյ և  
ամօթոյ : » (\*)

Նպատակս չէ ճշգել Խորենացիի զրութեան թուա-  
կանը, բայց անոր Ողբին ցնցիչ անկեղծութեան և ճը-  
մարտութեան հանդէպ մարդ խիստ կը զարմանայ երբ  
կը կարդայ հայ հմուտներու հետեւեալ միակ և եղկելի  
գնահատումը, հայուտիճներէ շինուած հայութեան ամե-  
նէն թխպահոծ երկնակամարին տակ. «Եթէ Ողբն ունի  
այն պատմական յարմարութիւն՝ է. կամ լ. դարուն  
առաջին կիսուն միայն կը յարմարի, և է զործ դժգոհ  
լալականի, որ ընդդէմ կրեալ անարզանաց ինչ զչար-  
եալ՝ այնպէս վատթարացեալ կը տեսնէ եկեղեցին և  
ազգը : » (\*\*)

Հեղ մ'ալ մրմնանք Ահարոնեանի Մեծ Վարպետին  
հետ. «Ոչ զոյր նոցա համեմ խահամոքք անուշարար ա-  
ռանձինն, և ոչ հացարարք որոշեալ ի պէտս սպասու-  
լստ աղատաց կարգի, այլ հասարակաց էր.... Ոչ ոք ու-  
միք չուր ի ձեռս արկանէր, և ոչ կրտսերք աւազաց  
դաստառակո մատուցանէին. չանկաւ օշնան ի ձեռս փափ-  
կտսուն կանանց, և ոչ մատուցաւ իւղ ի զուարթութիւն  
խրախութեան.... Փոշտեցան և ծխոտեցան սրահակք

(\*) Խորենացի . Պատմ. Հայոց , Գ. Գիրք , ԿԸ. :


(\*\*) Ա. Մ. Գարագառեան , Քննական Պատմ. Հայոց ,  
Մասն Դ., Գլուխ Ա. , թիւ 23 :

և սրսկասլանք նոռեկ հարսանց , և սարզի ոստայնք ձգեցան ի ունեակո առադաստաց նոցա . կործանեցան բարձրագաճք տաճարաց նոցա , և խանգարեցան սպասք երախանաց նոցա . անկան կործանեցան ապարանք նոցա , և տապալեալ աւերեցան ամուրք ապաստանի նոցա : Չորսցան աղաղեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա , և տաշտախիլ եղեն որթք զինէրեր այզեաց նոցա : Աչօք իւրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իւրեանց , և ականջօք իւրեանց լուան զվիշտո չարչարանաց սիրելեաց իւրեանց . . . : Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին , որ զրդեալք և զգուեալք էին յիւրաքանչիւր պաստեռունս և ի զահաւորակո , հանապաղ բոկ և հետի երթային ի տունս աղօթից , անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն : Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճովք էրէոց , խոտաբուտ կենօք իրրե զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդրութեամբ , և ոչ յիշէին ամենեւին զսովորական փափկութիւնն : Սեւացեալ ներկան մորթք մարմնոց նոցա , վասն զի ցերեկ արեւակէղք էին և զամենայն զիշերսն զետնաբեկք . . . : Մատամբք իւրեանց վաստակեցին և կերակրեցան . . . : Անարիւն ճիպուանց նմանեցին , որ երգոյն քաղցրութեամբ առանց կիրակրանաց կեան , և կենդանի են միայն զօդն ծծելով , զանմարմնոցն բերեն զնմանութիւն : Բազում ձմերաց հալեցան սառնամանիք , եհաս զարուն և եկին նորեկ ծիծեռունք , տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ . եւ նոքա ոչ երբեք կարացին տեսանել զանձկալիս իւրեանց : Ծաղիկք զարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա , եւ աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի զեղ երեսաց նոցա . . . : (\*)

(\*) Սղիւէ , Պատմ . Վարդանանց , Յեղանակ Բ. :

Բայց միեւնոյն առեն չի մռանանք խոկալ անոր հետեւեալ խօսքնը . «Յետս ընդգէմ ընթիրցաք զգեղեցիկ զրեալսն . . . Ազատացաք ի հարկաց արքունի՝ զորս առանց հեղաց էր հարկին , և մռաք ընդ հարկաւ ստացուածոց , որ լի են անառակ ազահութեամբ . . . Կօչիկք ոտից մերոց յանդիմանեն զմեղ , եթէ ոչ են սուրբ ճանապարհք մեր : Հանդերձք մեր ալալակեն զգործոց մերոց , եթէ մերկ եմք յերկնաւոր զգեստուցն : Երիշարք մեր ցուցանեն զմեղ , եթէ ոչ եմք յափշտակելոց ընդ առաջ Տեառն ի վերայ օդոց . . . Կալուածք անդաստանաց մերոց կշտամբեն զմեղ , եթէ չիք մեր բաժին ի վիճակն երկնաւորս . . . Կափուցեալք են աչք մտաց մերոց ի տեսական խորհրդոց , և անյալ պակշուաեալ հոյել ի կեանա աշխարհիո : Արգելեալք զլուլիս ի սուրբ ընթիրցուածոց , և ունկնդիր եմք բաւաշման խաշանց մօրոց . . . Վասն այսորիկ և ամենայն չարիք եկին հասին յաւուրս մեր . կենդանեաւ մերով տեսանք զդիակունս անձանց մերոց : Քաջ նահատակք մեր անկան ի պատերազմի , և սուրբ քահանայք մեր խոլխողեցան ի ծեռաց անօրինաց . զելեցիկ երիտասարդքն զենան ի սպանումն , և բազում կուսանք վարեցան ի գերութիւն . զիրգ կանայք անկան ի տառապանս այրութեան , և բազում որբք կտկանին դառնապէս : Ազատ եկեղեցի անկաւ ի ծառայութիւն հեթանոսաց , և սուրբ քահանայք նորա կռփին չարչարին յանօրէն հարկահանոց : Բարձիալ է ողորմութիւն յաշխարհէ , և հեռացեալ է զութ յիւրաքանչիւր մտաց . . . Շինուածք մեր ելեն զերեղմանք դիականց մերոց , և վաստակք ձեռաց մերոց տապալեցան ի վերայ մեր : Պայթեաց և սկատառեցաւ թանձրութիւն երկրիս , և բազում մարդիկ ի վայր հոսեցին : Ոչ սպասեաց որդի հօր , և ոչ քոյր զաչս եղբօր կալաւ , և ոչ ել ձայն լալոյ կանանց ի վերայ ծնըն-

դոց իւրեանց, վասն զի լքոյց սովորանս նոցաւ Հզօրք  
խորտակեցան յանկարծակի իրրեւ զմայրիս բարձունս կի-  
րանանու . հնծանք եղեն բարկութեան, և ճմլեցան ամե-  
նեքեան իրրեւ զողկոյզս ընդ ռոտամբ . փոխանակ դինւոյ՝  
արիւն անմեղաց ցայտեցաւ ի հանգերձս մեր : Դառնացաւ  
քան զլեղի կերակուր ի քիմս մեր, և ի քացախ դարձաւ  
սուրբ ըմպելիք մեր : Ընդ հարեալսն հարաք ամենեքեան  
յոզի և ի մարմինս մեր, և ընդ մեռեալսն զմահ ճաշա-  
կեցաք : ԱՐԴ Ո՞Չ ԱՊԱՔԵՆ ՎԱՍՆ ՄԵՐՈՅ ՀԵՂԳՈՒԹԵԱՆ  
ԱՆՑԻՆ ԱՅՍ ԱՆՑՔ ԶԱՐԶԱՐԱՆԱՑ ԸՆԴ ԱՇԽԱՐՀ :



(\*) Եղիշէ , բան իւրատու Յաղագս Միանձանց :



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Որպէս թէ պատն ըլլար յանցաւորը՝ երբ զինովը իր երերուն զնացքի միջոցին զլուխը անոր կը բռիլէ, կամ ցեցն ըլլար յանցաւորը՝ երբ տանտիկինը բրդելէնները ամիսներով դարանին մէջ փակուած կը սլահէ առանց հակուտճի, եւ կամ թէ զայլն ըլլար յանցաւորը՝ երբ հովիւը իր հօտը մորին կը զարնէ առանց շուներու, միեւնոյն բիրտ յիմարութեան շնորհիւ տառապած ենք շարունակ, կամ՝ միեւնոյն իմաստութեամբ խարխափած մեր անպատմելի դժբախտութեանց իսկական պատճառներն ու պատասխանատունները :

Ի՞նչ, արդեօք հաւատալ թէ մեր նախնիքներէն ժառանգած յատկութիւններնէս կամ ուժերնէս կործանիչները աւելի զօրաւոր եղած ըլլան քան կենսականները :

Առանց կանգ առնելու մեր նախնեաց չքնաղ բարեմասնութեանց վրայ, ըստ մեր նուիրական պատմագիրներու համաձայն վկայութեանց, որչափ ալ խոշոր եւ աղետտից եղած ըլլան մեզի ժառանգ ձգուած յոռեգոյն թերութիւնները, սակայն, անոնց փորձառական ցաւալի դասերուն աննման աւանդութիւնները խիստ կը մեղմացընեն անոնց մեղսակցութիւնը կամ պատասխանատուութիւնը մեր անվերջանալի դժբախտութեանց մէջ, սապարզ պատճառով որ ամենեւին յանցաւոր չեն անոնք եթէ տգիտօրէն կամ կուրարար չենք ուզած կամ չենք կրցած օգտուիլ անցեալի դասերէն և անոնց դժբախտութիւններէն :

Արդարեւ, — ահա՛ պարզ օրինակ մը, ուր դարձեալ խիստ վեր կը ցցուի հոկտյն Բուզանդացին մեր բոլոր նախնիքներէն — ո՞ր ժալովուրդը կրնայ յաւակնիլ ու նեցած ըլլու պապեր՝ որոնք աւանդած ըլլոն իրեն հետեւեալ կիլիչ ազգարարութեան նման աստուածային պատգամներ, որոնց հանդէպ, աւա՛զ, անզգայ մնացած ենք միշտ անբանօրէն.

Առդ վասն այստի սուրբեանց ձեռոց եւ պղծուրեանց, բարձէ՛ սէր զբազաւուրիւնդ ձեր ի ձենչ բարձէ՛ եւ զբազաւուրիւնդ ի ձենչ։ Յռւեսչիք եւ բաժանեսչիք, եւ ցրւեսչիք սահմանն ձեր որպէս եւ խայէլ, եւ անտեռունչք եւ անխնայ եւ անխնամք լիջիք. եւ լիջիք զում իրեւ զխաչինք, զի ոչ զուցէ նոցահովիւք։ Մատնեսչիք իրեւ զհօս ի ձեռս զազանաց, եւ անկջիք ի փառաց ձեռոց. եւ ի ձեռս օսուր թեմամեաց մատնեսչիք զում ի զերուրիւն եւ ի լուծ ծառայուրեան, եւ ոչ բարձի երբէք կամ պակասեսցէ լուծ ծառայուրեան ի ձենչ. եւ ոչ երբէք պակասեսցէ լուծ չար սարկուրեան ծառայուրեանն ի պարանոցաց ձեռոց. հասեսչիք եւ մատնեսչիք ի ցանկուրիւնս ձեր։ Օրպէս պատառեցաւ խայէլ եւ ոչ կարկատեցաւ, սոյնովէս եւ զում ցրւեսչիք եւ կործանեսչիք. եւ այլք վայելեսցեն զվաստակս ձեր, եւ այլք կերիցեն զօրուրիւնս ձեր. եւ ոչ ո՛մ զտանիցի, որ փրկեսցէ զձեզ. եւ ոչ հանեսցի ընդ ձեզ սէր, եւ ոչ նայեսցի եւ ոչ փրկեսցէ այլ զձեզ։» (\*)

Եւ երբ կ'աւելցնամ թէ այս խօսքերը կ'ուղղուէին անոնց, ո՛չ միայն, որովհետեւ՝ ռնոցա ի ներքս քարշեալ յեկեղեցւոջն ըրածեծ եղեալ ջախջախեալ քահանայապետն

(\*) Բուզանդացան Պատմ., Դպր. Գ., Գլ. ԺԴ.

Աստուծայ սուրբ . Երանելին մանուկն Յօւսիկ կիսամահ  
կոչկոճեալ ընկեցեալ էր, »(\*) այլ նաև և աւելի՝ որով-  
հետեւ «Նոքա մուացան զԱստուած զարարիչն իւրեանց և  
զզութ նշանացն և խրատուց, և զաքանչեւեաց՝ դոր ա-  
րարեալ էր առ հորան իւրեանց և առ նոցա . և նոքա  
դարձան ի մոլորութիւն կոտալաշտութիւնն նախնեացն  
իւրեանց, և յատելութիւնս և յազահութիւնս ե ի զրկու-  
թիւնս և յաղքատակեցութիւնս, ի պոռնկութիւնս,  
ի նենգութիւնս ե ի միմիանազրկութիւնս և ի սպանու-  
թիւնս կործաննեցան, լքան, կուսեցան, կազացան յար-  
դարութիւնն ճանապարհաց, և թողին նոքա զբարերարն  
իւրեանց զԱստուած որ զնոսա յոչնչէ արար և հաստա-  
տատեաց, և ի մոլորութիւնս իւրեանց անծանօթք եղեն  
նոքա ի նմանէ ,»(\*\*) և որոնցմով, շատ չանցած, պիտի  
չէննար Արշակաւանը, ընթերցողին կը մնայ զնահատել  
իր սքանչելազոյն հարազատ պապերուն այս անմահ խոս-  
քերը և օգտուիլ անոնցմէ անվարան՝ հակառակ զանոնք  
արտառանողին և զանոնք այնքան սիրով և հաւատար-  
մօրէն արձանազրողին օտարութեան :

\* \* \*

Խերը կ'անիծէի անոր որ կը յանդզնէր իմ սիրունիկ  
և չարաճճի ուլերուս և զառնուկներուս քար նետել,  
երբ նոյն իսկ անոնք անոր ածուքը կամ արտը կը կո-  
խէին . այնքան որ կը սիրէի զանոնք և կը զուրգուրայի  
անոնց վրայ :

Բայց կիրակի կամ տօն օրերը, երբ անոնց կը խառ-  
նէի նաև մեր եղները՝ որոնք անպայման հանգստի կը

(\*) Բուզանդարան Պատմ., Դպր. Գ., Գլ. ԺԲ. :

(\*\*) „ „ „ „ „ ԺԲ. :

կոչուէին յիշեալ օրերը, կը պատահէր որ, ամառուան արեւին կիզիչ ճառագայթներուն տակ հանդարտ արածումի միջոցին՝ երբ անոնք պոչերնին մէկ կուշտէն միւսը կը բաղխէին, — չեմ զիտեր թէ գոհունակութիւննին յայտնելու՝ թէ մժեղներէն զերծ մնալու համար — առիթէն օգտուելով մօզաները<sup>(\*)</sup> անոնց ոռերուն կը փակէին :

Ցաւին սաստկութենէն ազաձիզ և վզարձակ մեր խեղճ եզները կ'սկսէին սուրալ ամէն կողմ իրենց բոլոր թափովը, ոտնակոխ ընելով ուլերս ու զառնուկներս, և յաճախ կը գահավիժէին դէպի անդունդը՝ անզօր հանդիսատեսի իմ անօգուտ ներկայութեանս :

Ահա՝ այսպէս կը ներկայանայ անաշառ ուսումնասիրովի մը աչքին հայութեան դարաւոր պատկերը, սազզալի տարբերութեամբ սակայն որ իրենց ցաւալի և ողբալի խորտակումին մէջ բոլորովին անմեղ էին զառնուկներս, ուլերս ու եզներս, մինչդեռ մենք եղած ենք անդադար մօզաները մեր ոռերուն փակցնողները :

Այսպէս, հակառակ և յանուն հետեւեալ զրոյն՝ զոր կը պահեմ որպէս նուիրական մասունք մը, և որ այնքան արցունքներ խլած է աչքերէս.

Գահիրէ, 1 օունիս 1918

Մեծապատիւ Թէոփիլեան Էֆէնտի,

Ազնիւ Պարոն,

Ստացոյ Զեր Մայիս 31 թուակիր պատուականը։ Աշխարհի վրայ ու է Հայուն փոքր ծառայութիւն մը ընել, իմ սրտիս մեծ հաճոյք է. մանաւանդ Զեղի պէս

(\*) Պիծակէն աւելի խոռոր նանն մը :

աղնիւ Պարոն մը զոհացնելը, որ ինծի գիմելու ձանձրոյթն առած է, կը համարիմ նուիրական պարտականութիւն մը Ռւստի կը փութամ նոյն ընդ նոյն պատասխանել Զեզի, որովհետեւ կ'երեւակայեմ Զեր մտքին արդարացի խռովքը այս մասին :

Գաղթականութեան կեանքով ամենամասնաւոր հետաքրքրութեամբ զբաղած եմ, մանաւանդ նոյն կեանքին ամենագժիսիմ նոսկաները կրած եմ իմ անձիս վրայ, հետեւաբար զրեթէ Հայաստանի ամեն քաղաքներէն քիչ շատ որոշ, և վաւերական տեղեկութիւններ ունիմ: Ք. լեցիներու մասին կը հարցնէք, սիրելի Պարոն, սրտի բուռն ցաւով կ'ըսեմ որ, բուն հարազատ Հայաստանին ու է քաղաքէն, ևթէ զտնուին մի քանի խիստ հաղուազիւտ անհատներ որ ազատած ըլլան, ատիկա պէտք է համարել ոչ հասարակ, այլ բնութեան ամենացնցիչ հրաշքներէն մին . . . Ռւստի անզլ. տիրապետութենէն ազատած հայեր Հախջախիչ մեծամասնութեամբ կիլիկեցի, կամ Մըշակայ տեղերէն են, ուստի անոնց մէջ և ոչ մէկ Քղեցի չկայ: Սակայն Քղիէն բաւական ընդարձակ տեղեկութիւններ ունիմ, զոր Զեզ կը հաղորդեմ անլիրապահօրէն: Նախ բնական է որ Զեր ազգականները անձնապէս ճանչնալու չքնար պատիւին արժանացած չեմ: Ինչպէս Հայաստանի ուրիշ քաղաքներուն պառահած է՝ անխտրօրէն Քղին ալ տեղահանուած է ամբողջովին: Բնակչաց իսլամանալու աղերսը անտեսուած է կառավարութեան կողմէ:

Քղեցի ամբողջ Հայերը երեք կամ հինգ կարաւանով ճամբուած են. անոնց կատարած ուղին՝ ահա կը գծեմ Զեր առջեւ. Քլի—Քալու—Մալաթիա—Խարբերդ—Տիգրանակերտ—Մարտին—Ռասիւլ-Այն . . . Մինչև այս վերջին տեղ ողջ հասնողներէն խիստ քիչ ոմանք եթէ ազատած են, և կը գտնուին աստանդական ամեսամեծ բաղդ

է։ Նախ Զեր քով եղած աշխարհաքարտին վրայ ակնարկ մը նետեցէք։ և պիտի ապշիք Զեր հայրենակիցներուն կատարած ճանապարհի օձապտոյտ զալարումներուն վրայ, այդ բանը Օսմ. ճիւաղ կառավարութեան ընդգրկած՝ բնաջնջումի սատանայական, վանտալական ծրագիրներուն իրագործումի մասը կը կազմէ . . . ինչպէս ուրիշներուն համար, նոյնպէս Քղիին ալ բոլոր այր մարդիկը քաղաքէն ելլելէն վերջ մաս առ մաս ջարդուած են։ սակայն մեծ ջարդը այրերուն, կատարուած է Բալուի մէջ, շըրջականներէն հաւաքուած թուրք ու քուրդ խուժանը կը խոնուի Բալուի կամուրջին վրայ, և հետզհետէ երբ կարաւանները կը հասնէին, խեղճհայ մարդիկը թուրք վոհմակի կացիններու հարուածին տակ, անլուր վայրագութեամբ ջարդափշուր կը ջախջախուէին և զետը կը նետուէին։ Իսկ անոնցմէ ազատած վերջին այր մարդիկը սպանուած են Տիգրանակերու չհասած . . . Իսկ խեղճ կանանց համար կողոպուտ, խմբովին առեւանգութիւններ, հրապարակական բռնաբարութիւններ ևն. ևն. ամենահասարակ և օրըստօրէական արարքներ եղած էին։ Վերջապէս կը հասնին Ռաս-իւ-Այն, սակայն հոն ջարդուած 100,000 հայ թշուառներու մէջ զոհ կ'երթան զրեթէ ամբողջութեամբ։ Հոս ներեցէք որ Զեզ հաղորդեմ մի փոքր պարագայ մը . Ռաս-էլ-Այն չհասած պէտք է անցնիլ մի մեծ դաշտ, երկու օրուան միջոց մը, ամբողջ զաշտը սփռուած է տեսակ մը երկար սրածայր կարծր փուշատունկեր. կարաւանին առաջնորդող ոստիկաններ արդէն կշտացած, յափրացած ամեն տեսակ տանջանքներ տալէ, և վայրենութեան ամբողջ պաշարը սպառած ըլլալով, հոս միջավայրը իրենց կը ներշնչէ նոր և քսամնելի մի արարք. կ'ստիպեն հէք կիսերը որ մերկացնեն ոտքերն և բոպիկ ստքով կտրեն անցնին այս փուշ ցցուած մեծ դաշտը։

Հարիւրաւոր թշուառ կիներ կը մեռնին հոն փեռեկուած  
ոտքերով արեան կորուստէն նուազած . . . :


Մնամ ամ ենայն յարզանօք

Աղօթարար


(Սուր.) Վարդան Վարդ. Խաչերեան

Պէտք է ամէն գնով չեղոքացնել հայութիձները,  
ապա թէ ոչ, շուտով, Դանիէլ Եպիսկոպոսի վերոյիշեալ  
մարգարէութիւնը պիտի դադրի զործադրուելէ, առ  
ի չզոյէ ենթակայի:


ՎԵՐՁ




















[ 704.]

A i  
57208

❖ ԳԻՆ 25 ԵԳԻՊՏ. ԴԱՀ. ❖

Դիմել Հեղինակին՝  
**Մ<sup>բ</sup> Մ. ՏԵՕՐԻ**  
Avocat à la C.  
3, Rue Bolanachi, AL

ԳԱՍ ԴԻՄԵՐԱՐ ԳԻՆ. ԳՐԱԴ.



220057208